








ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ  
Ս. ԷՋՄԻԱՆՑԻ

VII-VIII





# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                                                                                           |    |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Բաղադրական Ոսկրափառ Եկեղեցու Եւրքնաժիւր Պատրիարք և Սեփիայի Միտրոպոլիտ Նարէն Ս. Օծուքյուն Կիրիլի գրութիւնը Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսին իւր ընտրութեան և զահակալութեան առթիւ և Վեհափառի պատասխանը | 3  |
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— «Աւթաթագին ստրուկներ»                                                                                                                                                                        | 6  |
| ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ.— Ս. Էջմիածնի խորհուրդը                                                                                                                                                       | 11 |
| ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ                                                                                                                                                                                             | 14 |
| ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Մի օր Մայր Աթոռում                                                                                                                                                               | 15 |
| ՊՐՈՖ. Լ ՍԵՄՅՈՆՈՎ.— Անանիա Շիրազացիին որպէս աստղաբաշխ                                                                                                                                                      | 22 |
| Ա. ԵՐԵՄՅԱՆ.— Ստեփանոս Երեցի մեծարժեք ձեռագիր մատյանը                                                                                                                                                      | 26 |
| ԻԿՆԱՏԻՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՅԱՆ.— Ջերբիլ-Մուսայի բարբառը                                                                                                                                                      | 33 |
| ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ.— Ս. Էջմիածնի ստեղծ                                                                                                                                                                      | 36 |
| ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ                                                                                                                                                         | 39 |
| Ս. ՄԵԼԻՔ-ԽԱԳԱՏՐՅԱՆ.— Աշխարհի հնագոյն ռուսացը                                                                                                                                                              | 48 |
| ԱՐԱՔՍՅԱ ԴԱՐՔԱՍՅԱՆ.— Հիշողութեան մասին Արուսյակիս մասին                                                                                                                                                    | 51 |
| Յ. ՐՈՒԶԱՆՅԱՆ.— Արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Դա-<br>նիել Ղազարյանը                                                                                                                                 | 55 |
| ՇԵՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ.— Ուղերձ Գալիֆորնիոյ քեմի երես-<br>փոխանական ժողովոյ                                                                                                                          | 56 |
| Մ. ԷՍԿԻՋՅԱՆ.— Կարոտ հայրենի (Բանաստեղծութեան)                                                                                                                                                             | 61 |
| Ո.— «Հայ գրականութեան բիրտգրափիա», կազմեց՝ Հովն. Պետրոսյան                                                                                                                                                | 62 |

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՆ՝

ՀՅ.ՅԿԵԿԱՆ ՍՍՈՒ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ՍՍՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР. Издательство, Редакция журнала «Егхмшадзин»

Redaction of the magazine „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1953 թ.



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Զ.

ՎԵՀԱՓԱԹ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԿՈՅՆ


ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ԶԲՈՄՆԵԼԻՍ





## Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք

ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏԻՄԱՐԻ ԵՎ ՍՈՍԻԱԼԻ ՄԻՏՐՈՎՈՒՄԻՑ  
ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻՂԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՄՐԱՋՆԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՂԻԿՈՍԻՆ  
ԻՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԹԻՎ  
ԵՎ ՎԵՀԱՓԱՌԻ ՊԱՏՄՍԽԱՆԸ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏԻՄԱՐԻ  
ԵՎ ՍՐԲՍՋՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ ԶԻՆ

ԷԶՄԱՇԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ԶԵՐԳ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ.

Առ Տերն տաճած եղբայրական սիրով հաղորդում ենք Ձերդ Վեհափառությանը, որ Աստուծո ռդորմությամբ փրկված մայրաքաղաք Սոֆիայում, համաձայն Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու կանոնադրության, Եկեղեցական-ժողովրդական ժողովի կողմից մեր հեղափոխությունը 1953 թվականի մայիսի 10-ին ընտրվեց Բուլղարիայի Պատրիարք և Սոֆիայի Միաբնակցություն, ու նույն օրն էլ կատարվեց մեր զանապաղության ձեռք՝ ամբողջ բուլղարական եղիսկոպոսության, Ռուսական, Վրացական, Անտիոքյան, Ռումիլեական, Լեհական և Ձեխասլովակյան թանկագին ու գերազանցիկ բույր եկեղեցիների սիրելի երեցիությունների, Բրիտանոսասեր կղերի և բաժնեկալի հավատացյալ ժողովրդի աղոթական մասնակցությամբ:

Տոնական այդ հանդեսին ու մեր ժողովրդի արտահայտած սրտանույզ և ազդու բերկրանքին իրենց համակրությունները միացրին նույնպես մյուս սիրառատ բույր եկեղեցիները:



Բուլղարական Ուղղափառ եկեղեցին գոյություն ունի արդեն 11 հարյուրամյակ (865 թվականից) և իր բարեխից կյանքի այդ երկարատև ժամանակաշրջանում նա մեծացել, հոգևոր հասունություն է առել՝ իր սուրբ ընդերքից երևան հանելով աստվածահամ սրբերի և արյարների բազմաթիվ դաս: Դեռևս 927 թվականին, սահմանված կարգով, Նրան շնորհվեց պատրարակալան արժանիք, որը հաստատվեց 1235 թվականին եկեղեցական մեծ ժողովի կողմից Լամպսակ ֆաղափում (Դարդանեյ ճեղուցների ասիական ասիին):

Բուլղարական պետությունը Թյուրքիայից նվաճվելուց հետո, վերջ գտավ հաև Բուլղարական ինքնակախ եկեղեցու գոյությունը: Բայց եւ իր վեհերավությունը վաղուց է վերականգնել և անհրաժեշտ էր նրա հնավանդ ու հանրահայտ պատրարակալան արժանիքը վերահաստատելու միջոցով կանոնականություն Նրան գլխավորել, որը վաղուց էր Սրբազնագույն Սինոդը որոշել և Բուլղարական Ուղղափառ եկեղեցին՝ հախատեսել:

Բուլղարական Ուղղափառ եկեղեցու գլխավորումը կանոնական ու կենսական անհրաժեշտություն դարձավ այն պահից հետո, երբ այն ժամանակվա Նրա Ավագը՝ Եպիսկոպոս Նորին Ծառնություն Ստեփանը 1948 թվականի սեպտեմբերին հրաժարական տվեց, որն ընդունվեց Սրբազնագույն Սինոդի կողմից: 1953 թվականի մայիսի 10-ի եկեղեցական-ժողովրդական ժողովի փակով դժվարին ու պառտախանատու վիճակ ընկավ մեր հեգությունը, որ Աստուծո օգնությամբ ծառայել է որպես Եպիսկոպոս 17 տարի, դրանից 15 տարի՝ որպես Պրովդիվի Միտրոպոլիտ և երկուս և կես տարի՝ որպես Սրբազնագույն Սինոդի նախագահի Տեղապահ:

Եղբայրական սույն համակով մենք Ձերդ վեհափառությանը միջեկեղեցական հարաբերություններում ընդունված սովորության համաձայն հաղորդում ենք մեր ընտրված լինելու և գաճակալության ծեսը կատարված լինելու մասին: Միաժամանակ հաղորդում ենք Ձեզ, որ մենք, ինչպես և առաջներում, լիովին համամիտ լինելով Բուլղարական Ուղղափառ եկեղեցու Սրբազնագույն Սինոդի հետ, այսուհետև ևս հախանձախնդիր ենք լինելու փրկչական անխախտ հավատին, հռչակելու ենք այդ հավատը պահպանել մաքուր և զուրկ, Տիրոջ փրկչական խոսքն ավետելու ենք ճշմարտորեն և չանալու ենք Աստուծո Սուրբ եկեղեցին զորացնել Հիսուս Քրիստոսի և սուրբ առաքելոց հիմունքով կառուցված ճշմարտության ոգով՝ հախանձախնդիր կերպով պահպանելով Տիեզերական Ս. եկեղեցու կանոնական ստացվածքն ու բարեպաշտ ավանդությունները: Առ Աստված ունեցած մեր սիրով, մենք ամեն կերպ նպաստելու ենք տեղական սուրբ եկեղեցիների միջև եղած կապերը զորացնելուն, բոլոր ուժերովս աշխատելու ենք, նույնպես, ինչպես աղոթում ենք, հանուն ժողովուրդների միջև խաղաղության, բարյացակամության ու եղբայրության:

Մենք խնդրում ենք Ձերդ սուրբ հովվապետական աղոթքները, որ մեր մեծ Հայրապետն օրհնե մեր ծառայությունը, որը բարեհաճ է լինելու Նրան, օգտակար՝ Նրա Սուրբ եկեղեցու համար և փրկարար՝ մեր հեգության ու հավատացյալ ժողովրդի համար:

Մենամք Ձերդ Ամենապատիվ վեհափառությանն մեր առ Տերն տածած սիրով՝

Կ Ի Ր Ի Լ  
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԺ

1953 թվականի մայիսի 29-ին

Սոֆիա, Բուլղարական Ուղղափառ եկեղեցու Սուրբ Սինոդ



## ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԺ ՆԱԽԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿՑՈՒՐՆԳ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻՆ

ԱՌՅԻԱ, ԲՈՒՂԱՐԱՆ

ԶԵՐԴ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ.

Քրիստոնեական սիրով տոգորված՝ հանդես բուղարական Ուղղափառ եկեղեցու՝ առանձին հրեվանդով կարգացրեմք Սրբությանդ հաղորդագրությունը և իրազեկ եղանակով, որ տարվույս մայիսի 10-ին, աստվածապարզ և Սոփիա մայրաքաղաքում, համաձայն բուղարական Ուղղափառ եկեղեցու կանոնադրության, եկեղեցական-ժողովրդական ժողովի կողմից ընտրված է Բուղարական եկեղեցու Պատրիարք և Սոփիայի Միտրոպոլիտ՝ և հայն օրը ձեռնադրված, ի ներկայությամբ բուղարական եպիսկոպոսական լրիվ դասի, Ուղղափառ եկեղեցու բոլոր հայր եկեղեցիների ներկայացուցիչների ու համայն բուղար ժողովրդի:

Մայիսի 10-ը Բուղարական եկեղեցու և բուղար ժողովրդի համաձայնեցող և տոնական օր է և՛ մեզ համար՝ ողջունելի, որովհետև հոգևորականությունն ու ժողովուրդը տոնում են Բուղար եկեղեցու Պատրիարքության վերանաստատության խնդարից տոնը, որ Բուղարական եկեղեցու զորացման ու զարգացման նախանշանակն է:

Նշանակալից է նաև Սրբությանդ պատրիարքական ձեռնադրության առթիվ տված հրապարակային ռվստը՝ Հիսուս Քրիստոսի և սրբաց առաքելոց վարդապետած հավատա և բորոյական հշմարտությանց մշտապես աշակերտ մնալու, Քրիստոնեական Տիեզերական եկեղեցու ավանդներին և Բուղարական եկեղեցուն հավատարիմ մնալու:

Այս նշանակալից և մեծահանգես տոնի առթիվ Բուղարական եկեղեցու և բուղար հավատացյալ ժողովրդի զմայլանքին և ուրախությանը միացնում ենք նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի ու Մեր խնդակցությունը՝ և շնորհավորում ենք Բուղարական եկեղեցու Պատրիարքության վերանաստատությունը և Սրբությանդ պատրիարքական ընտրությունը՝ մաղթելով Ամենաբարձրյալին՝ շնորհել Ձեզ արևշատություն, Բուղարական եկեղեցուն՝ բարգավաճումն, Բուղար պետության՝ անսասանություն և բուղար ժողովրդին՝ բարօր և երջանիկ կյանք:

Գ Ե Ո Ր Գ Զ.

ՄԱՅՐՈՒԳՈՒՑՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄՆԱՑՆ ՀԱՅՈՑ







## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### «ԱՐԾԱԹԱԳԻՆ ՍՏՐՈՒԿՆԵՐ»

«Զգոյշ լինի՛ր ի սուտ մարգարէիցն որ զան առ ձեզ հանդերձի՛ր ոչխարաց. և ի ներքոյ են գայլ՝ յափշտակողք: Ի պտղոյ նոցա ծանիչի՛ր զնոսա»:

ՄԱՏՔ., է 15—16:



Վիտուֆի հայկական մամուլըց ստացված հաղորդագրությունները խոսում են այն տխուր փաստի մասին, որ վերջերս մի շարք հայկական գաղութներում, հատկապես Սիրիայում և Լիբանանում, նորից է ուժեղացել հայ կաթոլիկ բարձր հոգևորականների գործունեությունը, որոնք հանուն տխուր փառասիրությունների, խլուրդների նման, փորփրում են հայ ժողովրդի ազգային-եկեղեցական սրբազան միասնության, ազգային, կրոնական դարավոր ուխտի և հոգևոր գաշիճիի պատմական ճիմֆերը: Պատմությունը հանախ է արձանագրել, որ ազգի, ժողովրդի տունն են փանդում ոչ այնքան արաբներ, հայտնի բշնամիները, որքան ներքին ցեղերը, ազգային դավաճանները, սուտ մարգարեները. ցեղեր, որոնց գործունեությունից դժվար չէ հանաչել նրանց. «Ի պտղոյ նոցա ծանիչի՛ր զնոսա»:

Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը հանախ է անդրադարձել Սփյուռքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, մեր սիրելի Հայրենիքի, հայ ժողովրդի միասնության և կենսական շանեթի դեմ լարված ու լարվող բոլոր

զույնի և ձևի դավադրություններին և զգուշացրել է իր հոտին «սուտ մարգարե»ներից: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, մեր Հայրենիքի դեմ սարքված բոլոր դավադրությունների մեջ խառն է եղել միշտ կաթոլիկ եկեղեցու և նրա վարձկան ծառա՝ շարժապահն ստրուկա՝ հայ կաթոլիկն բարձր հոգևորականության մատր:

Ամենայն Հայոց հայրենասեր Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ.բ. իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գերագույն պետ, ֆանիցս հայտարարել է, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ձգտում է եկեղեցիների ու կրոնների միջև փոխադարձ հասկացողության, որ մեր ժողովրդի և եկեղեցու այդ հիզմերը անխզելիորեն կապված են Քրիստոսի պատվերներին և աշխարհում ամբողջ առաջադեմ մարդկության խաղաղասիրական զգացմունքներին, որ այսօր մանավանդ, միջազգային բարդ ու լարված իրադրության մեջ, պետք է միասնական ու վնասված հենքի Քրիստոնեական Ընդհանուր եկեղեցու ձայնը հանուն ժողովուրդների, ազգերի, լեզուների, կրոնների միջև համերաշխության, հասկացողության, ընդդեմ պատերազմի:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գերագույն Քահանայապետի այդ ֆրիստո-



նեական, մարդասիրական կոչերին և բարի ցանկություններին՝ Կաթողիկ եկեղեցին պատասխանում է պայքարով, կրոնական մոլեգին նվաճողական քաղաքականությամբ:

Այսօր Կաթողիկ եկեղեցին Սփյուռնում գլխավորում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու բռնի անջատման գաղափարը Ա. Էջմիածնից: Լեւահայերի պատմական օրինակով, նա աշխատում է դիվային այդ ծրագիրը գլուխ քերել մեր օրերի տխրահռչակ Թորոսովիչ՝ Աղաջանյանի միջոցով:

Սակայն չէժուար է ընդդէմ խրանի անագն...:

Սփյուռնը՝ Մայր Հայրենիքից և Հայաստանյայց Առաքելական եկեղեցին՝ Ա. Էջմիածնից բռնի անջատելու Աղաջանյանի սատանայական ծրագիրը դեմ է առնում գաղութահայ հայրենասեր ժողովրդի, մտավորականության, մեր ազգասեր բարձր հոգեւորականության, առաջադիմական մամուլի կոտմիասնությամբ, վիտականությամբ: Սփյուռնի մեր Հայրենասեր ժողովուրդը տնանությամբ է յսում Աղաջանյանի այդ շաղկապությունները: Սփյուռնի հայության ջանքախիշ մեծամասնության վստահությունն ու համակրանքը իր պայծառ Սովետական Հայրենիքի և Ա. Էջմիածնի հետ են: Արտասահմանի մեր հայրենասեր և հավատացյալ ժողովուրդը, մեր բարձր հոգևորականությունը, առաջադիմական մամուլը արտահայտելով ամբողջ ազգի կամքը, ժամանակին գայությունով և նշանակելով Աղաջանյանների հանցավոր գործունեությունը:

Կաթողիկ այդ ձիւրանվորը՝ կարդիմայ Աղաջանյանը, ձգտելով Բայրայել հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնությունը, չի կարող չտեսնել, որ Սփյուռնի հայության, նույնիսկ հայրենասեր հայ կաթողիկե հասարակության համակրանքը անում է ու ամրապնդվում ոչ թե հօգուտ Աղաջանյանների, այլ հօգուտ հայ ժողովրդի Հայրենիքի, իր ազգային եկեղեցու:

Մեր ժողովուրդը չի է վնասկանությամբ՝ ընթանալու վստահորեն ու անվարան իր պանծալի Հայրենիքի և ազգային Մայր եկեղեցու պատմական հետեւերով:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պատմությունը սերտորեն կապված է եղել հայ ժողովրդի պատմության հետ: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին դարձելով եղել է հայ ժողովրդի կազմակերպող և ողջջնջող ուժը: Նրա իմաստուն ղեկավարությամբ հայ ժողովուրդը անցել է դաժնի արյունոտ ու փշոտ հանապարհի և հասել այսօրվա յուսալից ներկային: «Ժողովրդի» հետ և ժողովրդի՝ համար— ամա՛ այն գերազույն սկզբունքը, որը առաջնորդի է Հայաստան-

յայց Առաքելական եկեղեցուն. ժողովրդայնությունը մեր ազգային եկեղեցու կարևոր սկզբունքներից մեկն է եղել և է այժմ:

Ժողովրդայնության դիրքերից ելնելով է, որ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին միշտ անսահման երողամտությամբ է հայելի իր ծոցից բռնի խլված իր հարազատ գավալների վրա, և նրա սրտագին ձգտումն է եղել «իշտ» իրականացած տեսնել հայ ժողովրդի ցանկալի ազգային-եկեղեցական միասնությունը:

Հայրենասեր է նաև հայ կաթողիկե հասարակությունը. նա իր գոյության ողջ ընթացքում սիրով ու երախտագիտությամբ, կարոտով է հիշել ու հիշում է իր Մայր եկեղեցին, որի ընդհանրությունից բռնի բաժանել են նրան Թորոսովիչներն ու Աղաջանյանները:

Մեր հայ կաթողիկե հասարակությունը ոչ մի մասնակցություն չունի Աղաջանյանների այդ խռովարարությունների մեջ: Այդ նրան էլ է վրդովեցնում իբրև նույն ժողովրդի հայրենասեր մի մասնիկ: Մեր կաթողիկե հասարակությունը շատ լավ բարի դրացության կապերով է կապված իր մայր ժողովրդի և Մայր եկեղեցու հետ. «Մտնե արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն»:

Ուայց այդ հայրենասեր ու ազնիվ հասարակության կարծիքը չեն հաղցնում Աղաջանյանները, երբ նրա անունով ձգտում են Բայրայել հայ ժողովրդի միասնությունը:

«Լա՛յ ձեզ, առաջնո՛ւղճ կոյր...»:

Հայ կաթողիկե հասարակությունը երբեք առիթ չի ունեցել չարանալու իր հարազատ ժողովրդի դեմ: Նա այսօր անվերապահորեն միանում է հայ ժողովրդի ազնիվ վրդովմունքին՝ ընդդէմ Աղաջանյանների մարտակոչերին և անող ռիսկալություններին:

Աղաջանյաններն են քյուրմաջությունների գլխավոր մեղավորները: Նույնիսկ երկար տարիների կեղեմումներից, բռնություններից, կեղծիքից, կոպիտ ճշումներից հետո, հայ կաթողիկե հասարակությունը չի կամենում «փրանկ» կամ «լանկ» դառնալ:

Աղաջանյանները շատ քիչ են նախաձեռնում հայ ժողովրդին՝ նրա նկարագրի գծերի կյունությունը քմրոնել կարողանալու համար: Նրանք չեն քմրոնում, որ իրենք գործ ունեն ոչ թե անկազմակերպ մի ամբոխի հետ, այլ դարերի կենսափորձով գինված, աշխարհի ավենահին ու քաղաքակիրթ մի ժողովրդի հետ, որը գիտե թե ի՞նչ է անում, ինչո՞ւ համար է ապրում և ստեղծագործում:

Զարմանալի է մեր ժողովրդի կենսունակությունը: Նրա կենսունակության աղբյուրը նրա լավատեսությունն է իր պայծառ ապագայի վերջնական հաղթանակի մասին: Նա իմն է անսասան ու պայծառ հավատով դի-



պի իր ապագան: Ո՛չ մի բռնակալ, ո՛չ մի դավադրություն չեն կարողացել երբե՛ք բնկնել ու նվաճել հայ ժողովրդի այդ հզոր հատկությունը:

Այսօր ևս ամա, իր պատմության ամենապայծառ ու խաղաղ ստեղծագործական այս օրերին, շարժվում է հայ ժողովրդի ստեղծարար ու հզոր ոգին: Անա քե ինչու հայ կաթոլիկ բարձր հոգևորականությունը նորից գործի է դրել հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դեմ ռազմական իր հին, մաշված մեհենան...:

Բայց հայ ժողովրդի դեմ իր անասնական ստեղծության ու դարավոր պայքարի մեջ միշտ տանու է տվել Կաթոլիկ եկեղեցին:

Կաթոլիկ եկեղեցու գործունեությունը, նրա գոյությունն իսկ այսօր ոչինչ ընդհանուր չունեն քրիստոնեության ջանքերի հետ, խաղաղության հետ: Վատիկանը վաղուց է նույնագի, աշխարհիկ պետության հետ՝ կորցնելով իր քրիստոնեական եկեղեցու մաքուր, հոգեվոր նկարագիրը և դարձել է պատերազմի ուժ, ժողովուրդների ստրկացման դարբնոց, ազգային դավաճանությունների կենտրոն:

Հայ ժողովրդի մեծամոռն ու հայրենասեր զավակ Միֆայել Նալբանդյանը, որ իր ամբողջ գիտակցական ու օրհանոց կյանքը առանց մնացորդի գոհաբերել է իր ժողովրդի ազատության ու լուսավորության գործին, անցյալ դարի դեռևս ՅՕ-ական քվականներին իր գրած «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանն» պատմական հոդվածաշարում անողոք քննադատության է ենթարկել պապականությունն ու հայ կաթոլիկ բարձր հոգևորականությունը, հայ ժողովրդի ազգային դիրքերից:

Դեմոկրատ ու մեծ հայրենասեր Նալբանդյանի այդ մեղակցումներն այսօր ևս պահում են իրենց այժմեականությունն ու քաղաքականությունը, մանավանդ նրանով, որ Մխիթար Սեբաստացու տնտեսական աշակերտները ամեն ֆալսիֆոսի ուրանում են Ազգ ու Հայրենիք և Կաթոլիկ եկեղեցուն են վաճառում հայ հայրենասեր կաթոլիկ հասարակության ազգային անկախության վերջին մնացորդները՝ խեղդելով ազգային շունչի ամեն մի առողակալություն: Մոլեռանդ հայ կաթոլիկ հոգևորականությունը, հայ կաթոլիկ հասարակության նույնիսկ պարզ հետաքրքրությունը դեպի Սովետական Հայաստանն ու Ս. Էջմիածինը դիտում է որպես ծանրագույն հանցագործություն, հայհուդություն Ս. Հոգու դեմ...:

Ովքե՛ր են թուրսովիչ-Աղաջանյանները և ինչի՞ են ձգտում: Դրանց սպառիչ բնույթը դիրք տվել է Մ. Նալբանդյանը, գրելով. «Նույնը այն մարդիկն են, որոնք լուսավո-

րություն, միություն տարածելու փոխարեն, պապականություն են տարածում և իրենց ամեն մի խոսքից ու գործից կարծում է պապականության բույրը»:

«Իսկ ի՞նչ է պապականության խորհուրդը», — հարցնում է Նալբանդյանը: — Այն, որ «կրոնի ու կրոնապաշտության դիմակի տակ...» թաքնված են նրա «տիեզերական ֆադաֆական իրավասության» ձգտելու հիվանդագին հավակնությունները: Պապերը «կրակով ու սրով կապեցին մարդկության բերանը, նորա բանականության ազատ հոսանքը... ոչինչ էր պապականության աշխույժ այնքան մարդերի կորուստը... Նոցա աշունով ռոտում էր նա և անցնում էր կույր հեռագնդության ծիր պապական մարդերի հոգու մեջ: Պապի ֆադաֆականությունը պահանջում էր աշխույժ, մահ, հուր և սուր»: Ավելին. «Քրիստոս ինքը մեռավ ազգերի փրկության համար — ՊԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԵՐ ԶՔԱՑՈՒՅ յՈՐ ապահովության համար և դեռևս պաշտպան քրիստոնեության հրատարակելով յՈՐ անձն» (ընդգծումը մերն է — ԽԱՐԱ.):

«Ճշմարտության դիտանոցից նայելով պապականության վերա, — շարունակում է Նալբանդյանը, — միթե կարելի է չտեսնել, որ նա ներգործում էր ամենևին ֆադաֆական գաղափարների հետևելով, կարելի է համաձայնելի թե նորա կոռն և քրիստոնեության պաշտպան ձևաձևը չէր մի դիմակ, պահպանող աշխարհի հանգամանքներից, և, այո՛, ազգերի երեսից»:

Ահա՛ պապական այն սկզբունքը, որի մեջ սնվել ու դաստիարակվել են բոլոր տիպի թուրսովիչ-Աղաջանյանները. «Ահա՛ այն դավալը, որի հյուծախտությամբ վարակված կաթոլիկ ծծելով կերպարանագործվել էին հայկական ջառագավի պապականության»: Իսկ ի՞նչ է եղել և է այժմ էլ հայ կաթոլիկ բարձր հոգևորականության «խորհուրդը» և «նպատակալիտը»:

Հայրենասիրական դիրքերից ելնելով, այս հարցին էլ սպառիչ պատասխան է տվել ամեն Նալբանդյանը. «Մխիթարը դավանող էր յուր հայկական, ազգային եկեղեցու... մաքուր էր նորա սիրաբ... նորա խորհուրդը չի եղել հայոց ազգին պապականություն փռողը. նորա մեղքը չէ, որ նորա միաբանությունը նորանից հետո ՆԱԽԱՊԱՍՏԻՎ ՀԱՄԱՐՆԱ ԴԱՌՆԱԼ ՊԱՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՆԵՐ, կամ լավ ևս է ասել, ԱՐՄԱԹԱԳԻՆ ՍՏՐՈՒԿՆԵՐ, յուրյանց ազգի մատնիչ և պոստամիչ (ընդգծումը մերն է — ԽԱՐԱ.):

Մեկնություններն ավելորդ են. «որ ունիցիսկանչս լսելու» լուրջը: Հայրենասեր Նալբանդյանի պես է մտածում ամեն մի հայ,



որովհետև «նայր (խոսքը հայ կարողիկ հոգևորականության մասին է—ՄԱԲ.) օտարի բերի տակ գործ կատարելով, օտարի հացը ուտելով, միշտ օտարին պիտի գովե, օտարի օգուտը պաշտե և յուր ազգից հեռանա և օտարանա, այլև վնասակար լինի նորա... Կամ յուր ազգի բերի տակ, կամ օտարի բերի տակ՝ դուրս բոլոր վնասակար հետևանքներով միասին. միջին հանապարհ չկա. tertium non datur»:

Նայրանդյանը՝ մարդկանց մեջ այդ «ամենամարդը» և ազնիվների մեջ ազնվագույն հայրենասերը, իր ժամանակին մեղադրել է նաև «Մխիթարյանց պղտոր պապական լուսավորությունը»:

Մեր մի շարք բանասեր գրականներ մինչև երկինք են բարձրացրել մեր մշակույթի պատմության մեջ Մխիթարյանց պատմական-բանասիրական, մատենագրական վաստակը: Այդ համարվել իրենց մասին տարածել են նաև հայ կարողիկ հոգևորականները, հայ մշակույթի դիմակի տակ բախճելով իրենց կարողիկ էությունը: Մեր մատենագրության մեջ առաջինը նորից Նայրանդյանն էր, որ սպառնիչ զննատուրյան է երթարկել Մխիթարյանց մատենագրական այնքան շեփոված, ուռնցված գրական վաստակը. «Ուսումն ու յուսավորությունը.— գրում է Նայրանդյանը.— պապական դաշակների ձևով մատակարարված մարդկային ազգին (այդ քվում և հայ ժողովրդին— իՄՍ.), նման է օպիումից շինած հաղցեղենին, որ դաշակները սովոր են տալ երեխաներին լեցնելու համար»:

«Վ պտղով եղաց ծանիցի՜ զնոսա: Միքի, քաղիցն է ի փշոց խաղող կամ ի տատասկի բուղ»:

Մենք երբեք եպատակ չունենք սովոր ձգել, սեպցենք Մխիթար Աբբայի և նրա հաջորդների գրական-բանասիրական աշխատանքը բնդհանրապես: Մենք լիովին հավատացած ենք, որ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների մեջ կան հայրենասեր շատ անձինք, որոնք չեն բաժանում խառնանիչ Աղաթանյանների դավադրական գործունեությունը, սակայն զժգոխությունը նրանում է, որ նրանք փաթույթում չունեն հրապարակով հանդես գալ հրեց ղեմ, մերկացնել հրեցը:

Անժխտելի է նաև այն, որ հայ կարողիկ պաշտոնական պատմագիտության, բանասիրության մեջ միշտ էլ իշխել են դիտումնավոր պատմական խեղաքյուրումներ, պատմական վաստակի կեղծում. հատկապես հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պատմության վերաբերմամբ՝ Ազամի օրենից սկսած հայ ժողովուրդը կարողիկ ջուրջ տալու հիվանդագին հոգեբանությամբ:

Կարողիկ գիտությունը, լուսավորությունը, հավատը չեն ծառայում Քրիստոսին, նշմարտության, «այլ իրենանց որովայնին և հաղցարանությունը և օրհնությունը պատրեն զսրտոս անմեղաց» (Հոռմ., ԺԳ 18), և վաճայն հոգևորականներին, «ոյ՜ ասիցեն զշարք բարի, և զբարին շար. ոյ՜ ղեկցեն զոյսն խաւար, և զխաւարն յոյս. ոյ՜ ղեկցեն զղառն հաղցը, և զհաղցըն դառն» (Եսայի, Ե 20):

Այսօր հայ ժողովրդի համար չկան և չեն կարող լինել ավելի բարձր շահեր, քան հայ ժողովրդի միասնական շահերը, քան Հայաստանյայց Առաքելական եկեղեցու բնդհանրության շահերը, քան Հայրենիքի բարձրագույն շահերը: Հայրենիքի և Ս. Էջմիածնի դեմ առնված ամեն մի դիտումնավոր, դավադրական քայլ, ուղղակի հարված է հայ ժողովրդի ազգային-էկեղեցական միասնության շահերին:

Հայ ժողովուրդը իր պատմության շղթա բացում ձգտել է ազգային-էկեղեցական միասնության. այսօր էլ մեր ժողովրդի գերազույն իղձն է միավորվել իր պատմական հայրենի հողի վրա, իր դարավոր ազգային մայր եկեղեցու շուրջ. հենց դրա համար էլ, Նայրանդյանի պատկերավոր ու դիպուկ բաներով ասած՝ հայ ժողովուրդը պատրաստ է «զերկաբաց ընդունելու մի մարդու, որ փախչելով լուսա դաշակի գրկից, վագեր դեպի յուր ծնող բուն Հայկական եկեղեցին»:

Դարերի դառն փորձությունը սովորեցրել է հայ ժողովրդին՝ աչքի լույսի պես պահել հայ ժողովրդի ազգային-էկեղեցական միասնությունը: «Եկեղեցիով է պահվել Ազգը, և Ազգով պաշտպանվել եկեղեցին»,— ինչպես այնքան խորաբախմանքով պատգամում է Ամենայն Հայոց հայրենասեր Հայրապետը իր հոտին: Վնասափառի այդ երկու իմաստանից խոսքերի մեջ խտացել է հայ ժողովրդի և Հայ եկեղեցու միասնական պատմության նշանակությունն ու իմաստը: Ազգն ու եկեղեցին, երկուսն էլ մի, հայ հոգու երկու կանգուն սյուները, երկու հավերժական Մասիսներն են, որոնց հենվել ու ապրել, կովել ու ստեղծագործել է հայ ժողովուրդը, որոնց նայել ու մխիթարվել, ներշնչվել է ամեն անգամ մեր ժողովուրդը, երբ սուր են բարձրացրել նրա անկախության ու ազատության վրա, մեր սրբությունների, մեր օջախի, մեր հողի ու օրի վրա: Ազգն ու եկեղեցին, ժողովուրդն ու հավատը իրար են կապված անփակտելիորեն, կապված են միմյանց օրգանապես, պայմանավորում են իրար: Ազգի ու եկեղեցու անբաժան միությունն է ստեղծել այն տեխնոտակի բարոյական հիմքը, որի վրա բարձրացել ու զարգացել է հայ ժողովրդի կյանքը, մշակույթը:



Հայրենիքի սերը և ազգային եկեղեցու գաղափարը խորհրդանշան են հանդիսացել մեր ազգային-եկեղեցական միասնության, ազգային-փառափառական ինքնագիտակցության: Ոչ մի ուրիշ ֆրաստոնյա ժողովրդի կյանքում և պատմության մեջ եկեղեցին այնքան վրձնական ու բախտորոշ, պատմական դեր չի խաղացել, որքան Հայաստանյայց Առաքելական եկեղեցին հայ ժողովրդի կյանքում, նրա պատմության ողջ ընթացքում:

Այսօր էլ Սփյուռքում ապրող մեր տարագիր բայց հայրենասեր ժողովրդի քեկորներն իրար կամբջառ ուրիշ ուժ չկա, բացի Հայրենիքի նվիրական գաղափարից, որի շեշտողն և կրողն է հանդիսանում մեր ազգային մայրենի եկեղեցին. «Երկուսն էլ մի»: Անցյալի դառն փորձությունից իմաստնացած հայ ժողովուրդը թունավոր ռապաբանի համար չի վաճառի երբեք իր ազգային-կրոնական անկախությունը, ինքնությունը: «Ազգային միությանը է, որ հայը իբրև ազգ, ուրույն ու անկախ կարողացել է ու պիտի կարողանա ապրել» — պատգամում է մեր սիրելի Հայրապետը: Սփյուռքի մեր հայրենասեր ժողովրդի, մտավորականության, առաջադիմական մամուլի խնդիրն է՝ հետևողականորեն մերկացնել և անաբանների սյունին գամել հայ ժողովրդի միասնության բջնամիներին, վերջ դնել նրանց վարձկան գրպարտչական պրոպագանդային, անդուլ կերպով քարձրացնել

հայրենասիրական գգոնությունը, շմառնվել խունապի և է՛լ ավելի ամրապնդել կապը Հայրենիքի և Ս. Էջմիածնի հետ: Կեղծելն ու գրպարտելը Աղաջանյանների համար բնավորություն է դարձել, մի կիբ, որի մեջ յուժվում, կորչում են մնացած բոլոր ձգտումները: Աղաջանյանների համար չկան բարոյական չափանիշներ, վերացել են քույրատրեյի և անքույրատրեյի սահմանները, ամեն ինչ լավ է նրանց համար, եթե այն նպաստում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և մեր Հայրենիքի դեմ դավադրության, որը նրանց կյանքի նպատակն է ու քույր գործողությունների առանցքը:

Բայց ի՞նչ ոգուտ այդ բոլորից՝ «արձարագին ստրուկ» Աղաջանյաններին, «Զի՛նչ ոգտիցի մարդ երէ գաշխարհս ամենայն շահեսցի և գանձն իւր տուժեսցի» (Մատթ., ԺԶ 26): Մեր հայրենասեր ժողովուրդը շատ է զգույշ չխաբվելու համար գառան մորթիով և վագրի ժանիքներով զինված Աղաջանյաններից, հայ ժողովրդի միության և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միասնականության բջնամիներից:

Բայց Աղաջանյանների ազգադավ գործունեությունը անպատիժ չի կարող մնալ: Կասակները արդարանալիք չունեն ո՛չ իրենց խղերի, ո՛չ պատմության և ո՛չ էլ զայի՛ սերունդների արդար դատաստանի առաջ:







## Ք Ա Ր Ո Ջ

ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. ՏՆՐ-ՍԱՀԱՆՅԱՆ

(Թրիխիսի վանական Ս. Գևորգ  
Եկեղեցու վանահայր)

### Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԹՈՂՈՒՐԴԷ

«Թաքնյաութումս վերից Բա զօրաց,

Միշտ անշարժ պանևս զԱրտ Հայկազնայց»:

ՇԱՐԱԿԱՆ



ժողովուրդների կյանքում սրբություններ կան, նվիրական վայրեր, որոնց սերտորեն կապված են տվյալ ժողովրդի պատմության հետ, նրա կյանքի, կրոնական զգացմունքների, նրա սրտի ու հոգու հետ: Այդ սրբությունները միաժամանակ հանդիսանում են բարոյական միասնության խորհրդանշաններ տվյալ ժողովրդի բոլոր հատվածների միջև, որոնցից ժողովուրդն ստանում է իր պատմության մոռյալ ու ճակատագրական օրերին՝ բարոյական մխիթարություն, հույս և լույս՝ ապագայի համար:

Մի այդպիսի ժողովրդական սրբություն է հանդիսացել և է մեր օրերում էլ, հայ հավատացյալ ժողովրդի համար, մեր Արարատյան նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որի անվան, պատմության և գործունեության հետ սերտորեն կապված է հայ ժողովրդի հոգևոր մշակույթի դարգացումը, մեր ժողովրդի կյանքը, պատմությունը, դարուց ի դարս: Ս. Էջմիածինը ժաշի զգալուն սիրտն է եղել, — դրո՞ւմ է ազդիս Վեհափառ Հայրապետը, — որ դարձրել է շարունակ ապրել է նրա անհուն ցավերով և սակավ ուրախություններով:

Ս. Էջմիածինը իր մայրական թևերի տակ պահել է ու պահպանել երկրագնդի վրա ցածուցքիվ եղած հայ ժողովրդի բեկորները:

Ամենայն Հայոց Հայրապետության կենտրոն Ս. Էջմիածինը ժաշի ստեղծող միտքն է եղել, որ, լուսավորված քրիստոնեական երկնային լույսով, ստեղծել է դրականություն, արվեստ հայ ժողովրդի համար: Ս. Էջմիածինը մեր ժողովրդի հոգևոր կյանքում կատարել է շատ պատվալի որ ու շնորհրդակալ աշխատանք: Ս. Էջմիածինը հայ հավատացյալ ժողովրդի հոգում բազմել է այնպես ամուր, ինչպես Արարատյան դաշտում՝ վեհանիստ Մասիս սարը:

Ս. Էջմիածինը կառուցվել է մեր հավատի հայր և հոգվոց լուսավորիչ Ս. Գրիգոր Պարթև հայրապետի տեսիլքի համաձայն, «Տեսնեալ զլույս մեծ հայրապետին Գրիգորի, պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային: Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ: Ու հայ հողի վրա, հայ ժողովրդի հավատի ու բարեպաշտության շնորհիվ կամար առ կամար բարձրանում էր Ս. Էջմիածին պատմական Տաճարը:

«Տե՛ղին այն լիցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց և աթոռ քահանայութեան:»



Ահա այսպիսի չոգևոր հարուստ ժառանգություն է ստացել հայ ժողովուրդը իր նախնիքներից, որոնք ապրել ու աշխատել, սիրել ու կռվել են Ս. էջմիածնի գաղափարով և Հայրենիքի նվիրական զբաղմունքներով: Դարեր շարունակ իր քաղաքական անկախությունը կորցրած մեր հայրենասեր ժողովուրդը Ս. էջմիածնի վրա նայել է իրեն իր երկրորդ՝ հոգևոր Հայրենիքի վրա, և սաղմոսերգուի պես երգել է. «Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս աշխմ. կցեսցի լեզու իմ ի քիմա իմ՝ թէ ոչ լիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուագեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն օրախոսքեան իմոյ» (Սաղմ., Ելմ 5—7):

Երբ բարեկացիք կործանեցին Երուսաղեմը, իսրայելացիներին գերի վարեցին, նրանք նստած ուռի ծառերի տակ Բաբելոնի գետերի ափին, իրենց տաճիկների վրա երգում էին. «Երուսաղէմ, Երուսաղէմ, թող իմ լեզուս կալի իմ քիմքիս, եթե իս մոռանամ քեզ, թող իմ աչ ձեռքը իր ծառայությունը չկատարի: Արանով իսրայելացիները ցույց էին տալիս իրենց հայրենասիրությունն ու նվիրվածությունը իրենց հոգևոր ու քաղաքական կենտրոն Ս. Երուսաղեմին:

Մենք էլ պետք է կրկնենք այդ խոսքերը. «էջմիածին, մենք քեզ չենք մոռանաւ: Սակայն բավական չէ խոսքով արտահայտվելը, այլ պետք է գործով ցույց տալ, որովհետև օխտոթն առանց գործի մեռած է, ըստ առաքելական պատվերի:

Զուր չէ, որ մարդկային կյանքը նմանեցվում է մի ալեծուռի ծովի, որի վրա լողում է նավը: Եթե նավը հմուտ առաջնորդ և ղեկավար ունի, նա մինչև անգամ ամենիս ալիքների դեմ կռվում է, պայքարում քնություն ուժեղ արհամիրքների դեմ և նավի ղեկը ուղղում է դեպի լուսատու փարոսը, դեպի փրկության նավահանգիստը: Իսկ եթե նավը հմուտ առաջնորդ չունենա, նույնիսկ ծովի ամենախաղաղ ժամանակին, նա կարող է տարտաբերվել և զարնվել քարաժայռերին և փշուր-փշուր փորտակվել ու անհետ փորլել: Այդպես է նաև ժողովրդի կյանքը:

Հայ ազգի անկման զանազան շրջաններում, որքան էլ նա կորցրել է իր քաղաքական ինքնուրույնությունը, սակայն միշտ մոխրի տակ պահել է մի կայծ, որը բարեպատեհ հանգամանքներում միշտ առկայծել է, որովհետև մեր ժողովրդի համար ճակատագրական այդ պահերին չեն պակասել արի և արթուն նավապետներ, որոնք իմաստությունամբ, շրջահայեցությամբ և խիղախությամբ փրկել են հայ ժողովրդին ստույգ

ընաշնչման վտանգից և առաջնորդել դեպի խաղաղ նավահանգիստը: Ո՞վ չի հիշում և լախտադետ սրտով մեր հավատի հայր Լուսավորչին. որ տվել է մեզ մեր ազգային եկեղեցին, մեր կյանքի լուսատու լապտերը, Ավետարանի լույսով հայ կյանքը լուսավորող ու պայծառացնող այս հաստատությունը:

Ո՞վ չի հիշում թարգմանիչ մեծ վարպետներին, որոնք գիր ու գրականության շնորհիվ, փրկեցին հայ ժողովրդին ստույգ ընաշնչումից: Ո՞վ կարող է մոռանալ մեր հայրենասեր ու ժողովրդանվեր հայրապետներին, հոգևորականներին, որոնք մեծ աշխատանք են կատարել հայ ժողովրդի կյանքում: Ավելին, պատմական աղետների ժամանակ հայ հոգևորականն է սփռվել, մխիթարել հայ ժողովրդին, օգնության հասել նրան և ի պահանջել հարկին՝ կռվել ու նահատակվել իր ժողովրդի հետ միասին:

Մահակ Զորափորեցի կաթողիկոսը իր խնդրանքով ընդառաջ պնաց արարացի գորավարին և փրկեց հայ աշխարհը ավերածությունից: Պատմական այս փաստը ցույց է տալիս՝ ինչքան հայ հայրապետները նվիրված են եղել ազգին, եվ Մահակ Զորափորեցին միակը չէ Ս. էջմիածնի հայրապետները, Լուսավորչից մինչև Գեորգ Զ. հայրենասեր ու մեծագործ Հայրապետը, եղել են հայ հավատացյալ ժողովրդի հետ, աշխատել ու դարձել են հանուն հայ ժողովրդի կարիքների, սփռվել, մխիթարել ու դաստիարակել են սերունդներ Ս. էջմիածնի սիրով ու Հայրենիքի գաղափարով: «Ի՞նչ կոմենսայինք և ի՞նչ կլինեինք, եթե Եկեղեցին չլիներ մեր դաստիարակը անցյալում, — գրում է Վեհափառը, — և միթե հանցանք և չոր ապերախտություն չէ՞ երես դարձնել այն հաստատությունից, որ դարեր շարունակ պահել ու պահպանել է մեզ»:

Մեր գեղեցիկ Հայրենիքը եղել է մի կամուրջ Ասիայից դեպի Եվրոպա անցման ճանապարհին: Իր պատմության դանազան շրջաններում ոտքի տակ տրորվել է Հայաստան աշխարհը, իսկ հայ ազգը միշտ դեմքը ձեռքին պաշտպանել է իր անկախությունը, իր պատիվը, իր Հայրենիքը: Բայց պատերազմն իր հետ առաջ է բերել սով, աղքատություն ու ավերածություն, իսկ վերջն էլ ստեղծել է դաղթականություն, որին միշտ էլ ենթակա է եղել Հայաստան աշխարհը, մեր ժողովուրդը: Հայ մարդը թողել է իր քաղցը, սըրբազան Հայրենիքը, հայրենի օդն ու ջուրը, որոնք սնուցել են իրեն, թողել է նա իր նախնիքների շիրիմները, իր քրտնաթոր աշխատանքի արդյունքները և, իր և իր ընտանիքի կյանքը փրկելու համար՝ անցել է դե-



պի օտար երկրներ, ազօրէն մոլորական ստեղծացած, ըստ հայրենասեր պատմիչի տխուր վկայութեան:

Սփյուռքում հայկական այն զաղութները, որոնք պահել են իրենց ազգային սովորութիւնները, լեզուն, կրօնը, կարողացել են մաքառել օտարամուլ ազգեցութիւնների դեմ և անաղարտ պահել իրենց հայկական դիմագիծը: Բայց այն զաղութները, որոնք շնչելով իրենց ազգային այդ ժառանգութիւնները, կուլ են գնացել օտար ազգութիւնների մեջ: Թող խոսքերիս վկա լինի Լեհաստանի հայկական մեծ զաղթականութիւնը, որը զաղթել էր Անիից և, մի փառամուլ ու ծախված եպիսկոպոսի՝ Նիկոյ Թորոսովիչի պատճառով, ստիպվեց ընդունել կաթոլիկութիւնը, մոռացավ իր ազգային նկեղնային և ընդմիջուկորով հայ ժողովրդի համար: Այսօր միայն հնազարդան կոթողներից ու գերեզմանաքարերից կարելի է իմանալ, որ Լեհաստանում մի ժամանակ ապրել է Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն հավատարիմ հայ ժողովուրդ:

Այժմ սակայն պատկերը փոխվել է: Հայ ժողովուրդը պաղթելու փոխարեն ներգաղթում է այսօր: Ենթահիվ Սովետական բարեխնամ կառավարութեան հայրական հողատարութեան, տարագրված հայ ժողովուրդը աշխարհի բոլոր կողմերից վերադառնում է իր երազած սրբազան Հայրենիքը:

Հայ ժողովրդի հայրենասեր զավակները միշտ էլ երազել են ներգաղթի այդ երջանիկ պահը, երբիմյան Հայրիկն ասում էր. «Արդիս՝ ք մի օր կգա աղալինին հղենի ճուղը կառուցին քոնած»:

Այո՛, մենք այսօր տեսնում ենք այդ երազանքն իրականացած՝ շնորհիվ Սովետական իշխանութեան խելացի քաղաքականութեան: Այժմ ամբողջ հայութիւնը հավաքվում է իր սրտամական Հայրենիքում, Ս. Էջմիածնի շուրջ:

Այժմ մեր Հայրենիքը զարգանում է և առաջընթացում գիտութեան, տեխնիկայի և արվեստի բոլոր ընթացավառներում: Մեր Հայրենիքի ձեռք բերած նվաճումները արդար հպարտութեամբ են լցնում յուրաքանչյուր հայ հավաացյալ ու հայրենասեր մարդու սիրտը:

Մենք բոլորս միասին, ձեռք ձեռքի տված, հավատարիմ կերպով պետք է ծառայենք մեր Հայրենիքին և, ի պահանջել հարկին, անցյալի հայրենասեր հայ հողերականութեան օրինակով, մեր արյունով ու կյանքով պաշտպանենք Հայրենիքի սրբազան հողը և այդ հողի վրա միշտ կանգուն ու պայծառ պալատացող Լուսավորչի կանթեղը, Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետութեան դարավոր կենտրոնը:

Աղոթենք Բարձրալիին, որ ավելի աճի, բարգաւաճի մեր սիրասուն Հայրենիքը:

Աղոթենք Բարձրալիին, որ անսասան մնա լուսո խորան Ս. Էջմիածինը հավիտյանս հավիտենից, ամեն:







## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Հուլիսի 4-ին, շաբաթ օրը, կիրակամտից ժամերգութիւնից հետո, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրութեամբ, համատացյալների խումն բազմութեան ներկայութեամբ, Մայր Աթոռի յուսարարապետ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, ավագ սեղանի բնմի վրա, հանդիսավորապես արեւելայութեան կողմ շնորհեց տիրացու Գեորգ Վաթնյանին: Նորընծան ավարտել է նախկին Գեորգյան ճեմարանի լրիվ դասընթացը, ապա Թբիլիսիի պետական համալսարանը: Երկար տարիներ նա մանկավարժութեամբ է պարտաւել հեղաշրտական Վրաստանի հայկական միջնակարգ դպրոցներում, ավանդելով հայոց լեզու և գրականութիւն, ռուսաց գրականութիւն:

Ձեռք բերելով կրթութեան մեծ պաշար. նորընծան, պարտքի լրիվ գիտակցութեամբ, ընդունելով արեւելայական կոյտմ, իրեն նվիրեց Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու, Հայրենիքի սրբազան շահերին: Մայր Աթոռի միաբանութիւնը իր նոր միաբանին, սիրով ընդունեց իր հյուրընկալ հարկի տակ:

Հաջորդ օրը, Հուլիսի 5-ին, կիրակնօրյա սուրբ պատարագից հետո, համատացյալների խումն բազմութեան ներկայութեամբ, հետաքրքիր հայացքների ներքո, Ս. Իջման սեղանի առջև Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը նորընծա Գեորգ արեւել Վաթնյանին շնորհեց վարդապետական չորս մասնավոր աստիճանները: Արարողութիւններից հետո Ս. Էջմիածնի միաբանները մեկ առ մեկ մտտնալով նորընծա միաբանին, եղբայրական սիրտ ողջութեի խոսքերով շնորհավորեցին նրան:



Հուլիսի 12-ին, կիրակի օրը, Վարդապետի, այն է՝ Հիսուսի պայծառակերպութեան տոնի օրը, համատացյալների խումն բազմութեան ներկայութեամբ, Մայր Տաճարում, ավագ սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ: Պատարագին էր նորընծա բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթնյանը:

«Հայր մերձից առաջ հայր սուրբը քարոզեց հաւոր պատշաճի: Նա մանրամասն ու հսկանալի բացատրեց Թարոյ լեռան վրա Հիսուսի պայծառակերպութեան էական նշանակութիւնը:

Տաճարում դտնվողները մեծ ուշադրութեամբ լսեցին հայր սուրբի քարոզը:



Հաջորդ օրը, Հուլիսի 13-ին, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագին էր բարեկրոն Տ. Կոստանդին արեւել Քառանյանը: Սուրբ պատարագից հետո տեղի ունեցավ հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»:



Օգոստոսի 2-ին, կիրակի օրը, Մայր Տաճարում, սուրբ պատարագի ընթացքում, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրութեամբ և Գերագույն Հոգեւոր Խորհրդի տրուած մամր, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը քահանա ձեռնադրեց և օծեց Հակոբ սարկավագ Հակոբյանին:

Երիտասարդ նորընծան քահանայագործելու է Մայր Աթոռում:







ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

## ՄԻ ՕՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԴԵՊՒ ԷՋՄԻԱՅԻՆ



Էջմիածինը, իր Մայր Տաճարով ու Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռով, լաղժաթիվ դարերից ի վեր եղել է, է և հետագայում էլ պիտի մնա ամբողջ հայության համար այն հոգևոր, անապակ և ճաճանչահորդ փարոսը, որի կենարար լույսը, ամեն ժամանակ, թափանցելով ամենաթանձր խավարն ու ամենահեռավոր տարածությունները, անխափան հասել է միշտ հայերի սրտին, հավատ, հույս և մխթարություն շնորհել տալու պաճեններին, խանդավառության, քաջության և հաղթանակի ներշնչարան դառել ազգային գոյատևության համար պայքարողներին, եղել անխոցելի վահան մահացու հարվածների դեմ, հանդիսացել ամբակուռ կենտրոն համապային միասնության։ Եվ այդ լույսն ա՛յնքան ավելի համայնապարփակ, ներթափանցող և արդյունավետ է եղել, ինչքան այդ սրբազան փարոսի պահպանը, այսինքն՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հովվապետը, Մայր Աթոռի ոճյալ Գահակալն է եղել մշտաբերուն, քաջակորով, ժողովրդանվեր ու հայրենասեր։

Այսօր, հավատացյալ հայ ժողովուրդը գերազանցորեն բարեբախտ կարող է նկատել ինքն իրեն այն երջանիկ իրողության համար, որ իր հավատի, հույսի ու լույսի մշտաբերուն փարոսի արժանապատիվ պահակն է Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը։ Նա, հակառակ 85 տարիների ծանր բեռան, կաշմթուռն երիտասարդի ավյուռով, անքուն և մշտաբերուն հսկում է, որպեսզի Էջմիածինը սրբազան փարոսի՝ Լուսավորչի կանթնդի լույսը, թեկուզ մի րոպե, չղաղարի լուսավորելուց աշխարհով մեկ ցու-

քուցրիվ հայերի լուսածարավ սրտերը։ Սրվա ո՞ր պահին էլ հանդիպեք նրա աշխատասենյակը, դուք Վեհին անպայման կզտնեք գրասենյանի առջև աշխատելիս։

Մասնավորաբար Հայրենական պատերազմի տարիներին (դեռևս Կաթողիկոսական Տեղակալ) Վեհափառ Հայրապետի ցուցահանած քաջակորով արիասրտությունը, ինչպես եկեղեցական երկարատև պաշտոնավարության, նույնպես և հայրենադարձության տարիներին նրա անսակարկ և կատարյալ նվիրվածությունը հայ ժողովրդին և անքննադատելի հայրենասիրությունը, որով նա ղեկավարվել է իր բազմամյա կյանքում, ինչպես նաև համաշխարհային խաղաղության ամրապնդման գործում նրա թափած անդուլ ջանքերը, ապահովել են ո՛չ միայն ազդեցությունը, այլև օտար եկեղեցական և աշխարհական իշխանավորների մոտ մի այնպիսի ժողովրդականություն, որին շատ քիչ թվով հոգևորականներ են արժանացել։

Ամենայն Հայոց ազգրիտիք Հայրապետը՝ Վեհափառ Գեորգ Զ. Կաթողիկոսը մի անմթար ու անվթար մաղնիս է, որի ձրկու թեւերի վրա, ուժեղ ձգողականությամբ, արձանագրված են արտահայտությամբ և զաղափարաբանությամբ վսեմ երկու պատվիրաններ՝ Եկեղեցական միասնություն, Ազգային միասնություն։

Ահա թե ինչո՞ւ երբ ինքնաշարժ մեքենան սուրավով առաջանում էր դեպի Էջմիածին սանող խճուղու վրա, ծառուղու, եղբորդ մրգառատ ալգեստանների, հայրենադարձ հայերի կառուցած ռադիոակ և շնորհալի բնակարանների ղեղեկությունից ավելի պատմական Էջմիածնում, երկնակաթկառ խաչերով և ինքնուրույն ճարտարապետու-



թյամբ հայ ժողովրդի մշտնջենականության խորհրդանիշ սքանչելի կոթող-վանքերի և համազգային միասնությունն ապահովող մազնիսի՝ Մայր Աթոռի Վեհափառ Գահակալի հմայումն էր լցված իմ հոգին:

Իմ խնդրանքով երբ մեքենավարը կանգնեցրեց ավտոմեքենան Մյասնիկյան փողոցի աջին՝ Հոփսիմեի վանքի մոտ, աղտասահմանից նոր եկած լինելս իմանալով՝

— Վա՛յ ես քո հոգուն մատաղ,— ասաց թրխիսեցի մի հայ ուղեկից, որը գնում էր

տարիների կարոտն առնելու իր էջմիածնաբնակ եղբորից և հրավիրում էր ինձ, որպեսզի անպայման այցելեմ իր տունը, երբ առիթը ներկայանար ինձ Թրխիսի ճանապարհորդելու:

Հայի անկեղծությունը կար նրա արտասանած յուրաքանչյուր բառի մեջ, երբ հավաստում էր, թե արտասահմանի հայերն էլ հարազատ եղբայրներ են, թե նրանք էլ հայրենասեր են ու աշխատասեր, թե հայերն էլ կարող են իրար սիրել, միանալ և այլն:

## ՎԱՆՔԵՐԻ ՄԵՋ

Հայկական հին ճարտարապետության անսողյուտ հրաշալիքներից մեկն է Հոփսիմեի տաճարը, կառուցված 618 թվականին՝ Կոմիտաս կաթողիկոսի կողմից: Ուրեմն, ավելի քան տասներեք դար անցել է այս սրբառատ քարերի վրայից, որոնք համառորեն ու վեհորեն անգունել են և՛ բնության ու ժամանակի հարվածները, և՛ Արևելքից ու Արևմուտքից Հայաստանի վրա կատարված աշխարհակալական արշավանքների առաջացրած անլուր աղետները:

Ներքին և արտաքին պարզությանը մեջ վեհատեսիլ այս տաճարում, քրիստոնյա սրտերի համար, ամենահետաքրքրական անկյունը, հավանաբար, Հոփսիմե կույսի մարմարակերտ շերտն է, որը գտնվում է հյուսիս-արևելյան ավանդատան մեջ բացվող նեղ ու ցածր դռնով իջնող և ավագ խորանի ներքև փորված ստորերկրյա քարայրում:

Շերտի անմիջական մոտիկը, քարայրի պատի վրա, մի խոռոչի մեջ ամրացվել է այն կլոր քարը, որով ըստ ավանդության, չախախվել է ամենազոր Տրդատ Երրորդ արքայի երկրային շնորհներն արհամարհող կույսի գլուխը: Այդ քարի վրա անդուլ կոյծ-կըլտում է սպիտակ մոմի ադուս լույսը, իսկ ավանդատան սպիտակածեփ պատերի վրա դուր կարդում եք հազարավոր դրաֆիտտիկներ (այցելուների արձանագրություններ):

Հարգանքով խոնարհվելուց հետո այս վեհապանծ հրաշակերտի հիմնադիր, կառուցող ու վերանորոգող հայրապետների և անունուն, բայց անհավասարելի հայ ճարտարապետների անմոռաց հիշատակի առջև, շուտապուժ եմ քայլել դեպի Շողակաթ, որի անպաճույճ և համեստ գոյությունը, Հոփսիմեի տաճարի ա՛յսքան մոտիկ միջախոյրում, արդարանալի է միայն մեր նախա-

հայրերի հավատի ուժեղությունը ու եկեղեցասիրությունը:

Արդարև, ուրիշ կերպ չի կարելի մեկնաբանել հազիվ մեկ կիլոմետր շառավիղ ունեցող վաղարշապատյան այս շրջանակի մեջ ներկայությունը՝ Մայր Տաճարի, Գայանեի, Հոփսիմեի և Շողակաթի անվան վանքերի ու հին Վաղարշապատի եկեղեցու, որը կառուցվել է ավելի նոր ժամանակներում: Եվ արդեն պատմությունը ցույց է տալիս, որ այս վանքերը կառուցվել են ո՛չ թե հավատացյալների պաշտամունքային նպատիքը բավարարելու, այլ հավերժացնելու համար ի սեր քրիստոնեության այս շատ սեղմ վայրերի վրա նահատակված կույսերի հիշատակը:

Քրիստոնեությունը առաջին անգամ որպես պաշտոնական կրոն ընդունած հայ ժողովուրդը իր հոգու ամբողջ ղեղեկություններն է ներդրած այս սրբատեղիների ճարտարապետական կառուցման ոճի մեջ, այնպես որ այդ ինքնատիպ ոճը հետազայում ընդունվել է քրիստոնեություն ընդգրկող արևմտյան ժողովուրդների կողմից որպես եկեղեցա-տաճարաշինական ոճ: Զույժ հայկական ոճով կառուցված եկեղեցիներ կան Աթենքում (Հունաստան), Միլանում (Իտալիա), Օրլեանի մոտ Ժերմինյուում (Ֆրանսիա) և այլուր: Աթոս լեռան (Հունաստան) թագմաթիվ եկեղեցիների կառուցողական ոճի վրա հեշտ է նշմարել հայկական ոճի աղեղեցությունը: Ծարտարապետության պատմությունը հայտնի մասնագետ Ստրիկովսկու կարծիքով Իտալացի հռչակավոր նկարիչ և ճարտարապետ Լեոնարդո դա Վինչիի գրչին պատկանող հատակագծերի համաձայն կառուցված կան շենքեր, որոնք այնքան նմանություն ունեն հայկական քառակուսի եկեղեցիների հետ՝ իրենց գմբեթներով և որմնադրերով, որ կարելի է ենթադրել թե մեծ արվեստագետը ուղղակի ծնունդ էր հայկական ոճի:



Նոր կաթողիկոսի կողմից 630 թվականին կառուցված Գայանեի եկեղեցու քակում և մերձակա շիրմատանում հավերժորեն հանգչող կաթողիկոսների և բարձրաստիճան եկեղեցականների շիրիմների արձանագրություններով մի պահ պատմության ոլորտներում դեգերելուց և բարձրարժեք ծառերի հովանու տակ մեղմ գեփյուռից ծփացող արհեստական լճակի մոտ հովանալուց հետո, քայլերա ուղղվում են դեպի Մայր Տաճարը։ Վեհաշուք է նա և փառատեսիլ։ Բակում ուխտավորների բազմություն կա։ Նրանք կենսորովա ճաշի պատրաստությամբ են զբաղված՝ ստվերոտ ծառերի տակ, կանաչ մարգերի վրա, ծաղկաստանների առլթթեր, Երիտասարդ սարկավազներ միջավայրի կրոնական միատկերականությունն առաջելու ևս են շեշտում իրենց սև ու լայն սքեմով։

Տաճարից ներս, նորավարտ պատարագից հետո, խնկի ու կնդրկի անուշ բույրով է հագեցած մթնոլորտը։

#### ՎԵՀԱՓԱՌԻ ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ 8-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Տաճարի արևմտյան մայր դռան վերև կանգնած քանդակազարդ զանգավառան ներքև ու սյունների աջակողմում և ձախակողմում գտնվող մարմարակերտ դամբարաններում հավիտենապես հանգչում են բազմերախտ Հայրապետների՝ նվազող մշտից Հայրենյաց Հայոց Մկրտիչ Ա. Վանեցի (Խրիմյան Հայրիկ), Պաշտպան Հայրենյաց Ներսես Ե. Աշտարակեցի, Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցի, Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցի, Գեորգ Ե. Տփլիսեցի, Հովհաննես Ը. Կարեցի, Դանիել Ա. Պալագիտեցի և Մակար Ա. կաթողիկոսների աճյունները։

— Արժան էր, որ այդ հայրապետների աճյուններն ամփոփվեին Մայր Տաճարի հովանու ներքո, բայց ի՞նչ ասել անդիմադու պատկանող այս դամբարանի ներկայության, — հարց տվեց ինձ ուղեկից իմ որդին՝ բժիշկ Ստեփանը, ցույց տալով Տաճարի հարավարևմտյան պատին կից մի մարմարե շիֆիմ, որի վրա կա անգլերեն արձանագրություն։

— Դա Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անհիշաչարություն, իսկական քրիստոնեական ոգու խոստում փաստն է, — պատասխանեցի ես և խոսակիցս առանձին թողնելով քակում, միացա գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի դիխավորած և սարկա-

Տաճարի հարավ-արևելյան ավանդատնում տեսա և շոշափեցի մասունքներ, ինչպես Գրիգոր Լուսավորչի աջ Աջը, որ Ամենայն Հայոց Հայրապետարանի անվանագումբյան ու պաշտպանության խորհրդանշանն է, բազում սրբերի աչերից բացի՝ Թագեոս առաքյալի աչք, խաչեցյալ Քրիստոսը ներկայացնող փայտյա քանդակը, որ վերագրվում է Հովհաննես առաքյալին, մոտավոր հարավում երկնակարկառ Արարատի կատարի մշտնջենական ձյունների տակ անհետ կորած Նոյան տապանի մի փայտե բեկորը, Գեղարդը, որով հոռմայեցի պահակ զինվորը ծակեց խաչված Հիսուսի կողը՝ ստուգելու համար Նրա մահը, մյուսոնի պատմական, արծաթաձուլ կաթսան, վերջապես դրոշմակներ, որոնք գործածված են անցյալում հայրենասեր եկեղեցականների և հայ հերոսների ձեռամբ՝ յուրաքանչյուր պաշտպանության Հայաստանից աշխարհիս։

Վաղներից ու Տաճարի երգչախմբի անդամներից բաղկացած այն խմբին, որը ներկայանալու էր Վեհափառ Հայրապետին, շնորհավորելու համար նորին Ս. Օծոթյան դահակություն 8-րդ տարեդարձը։

Վեհափառը, առաջել քան երբեք վեհատեսիլ ու վեհապանծ Նաղաշ Հովնաթանի նկարազարդած Ծաղկյա դահլիճում, ժպտեց ևս ընդունում է բոլորին ու հրավիրում, որպեսզի տեղ դրավեն սեղանի շուրջը։ Այնտեղ են նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսն ու տիար Կամսարականը, Ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը՝ եղբայրն իմ դասընկեր (Պոլսահայ լիցեյում, 1911—1912 թ. թ.) նահատակ Վահան Մինասյանի, դասախոս Յ. Բոուլանյանը, Գանձապահ Նուբարը և երգչախմբի ղեկավար Հրանդ Գեորգյանը։

Բաժանաճանձրն իրար են հաջորդում՝ դրվատելով Վեհափառ Հայրապետի կատարած բարերար դերը և արեշատություն մաղթելով նորին Ս. Օծոթյան, որ զվարթ ու սրամիտ պատասխաններ ունի և՛ խոսողներին, և՛ ունկնդիրներին, և՛ սարկավազներին, և՛ երգեցիկ խմբի անդամ երկսեռ երիտասարդներին։ ՕՏԷ՞ր, կեցո՞ւ՝ Դու զհայս մաղթերգով փակվում է ընդունելությունը։





Վեհր Գեւորգյան Հոգևոր Խորհրդի անդամներ, վարպետի, մի խումբ սարկավագների և ուսանողների հետ:



## ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԸ

խոսակցությունը, որն ավելի ուշ ունեցավ հեղինակը Հայրապետի հետ այս ընդունելություն ժամանակ կարգադրված հատուկ ժամադրության համաձայն, առավել ևս ինձ ամրապնդեց այն խոր համոզման մեջ, թե Ամենայն Հայոց վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ-ի սիրտն անդու քարախուժ է Հայաստանի, հայ ժողովրդի և Հայաստանյայց Սեկեղեցու շահերի անսահման նվիրվածությունը:

— Զի կարելի երևակայել որևիցե հայ, որ շուրախանա տեսնելով Հայաստան աշխարհի հսկայական բարգավաճումը՝ տնտեսապես ու մշակութապես: Հիմնադրվում են բազմաթիվ ուսումնական հաստատություններ, ուր հազարավոր ուսանողներ ստանում են բարձրագույն կրթություն, իրենց նախապրած ասպարեզի մասնագետը դառնում: Այսօր, մեր երկրում, շնորհիվ Կառավարության իմաստուն տնօրինությունների, չկա ոչ մի հատ անգրագետ և անուսում մարդ: Զրանցների ցանցով ուղղվում են անընդհատ արածությունները, հաղորդակցության ճանապարհներ մայրաքաղաքին և կապում երկրի ամենահեռավոր վայրերը, նորանոր գյուղեր բուսնում, հին գյուղերը վերաշինվում՝ քաղաք դառնում, իսկ քաղաքները շենանում, մեծանում, հայ ժողովրդով են լրացվում: Հայրենի երկրի ու հայ ժողովրդի այս հրաշանման վերելքը մենք պարտական ենք Սովետական կառավարության և ռուս մեծ ժողովրդի անկեղծ բարեկամության, ինչպես նաև խաղաղության, որի ամրապնդման ի նպաստ պայքարելու պարտականություն ունի ամեն ողջամիտ մարդ, որովհետև խաղաղությունից է ծնվում ամեն բարիք, մինչդեռ պատերազմից ծնվում ամեն չարիք: Ծավ է Մեզ համար նշել, թե արտասահմանում գտնվում են հայրենադավ մարդիկ, որոնք չեն ցանկանում ըմբռնել այս հանրահայտ ճշմարտությունը և Մեզ ճշադրակալություններ դրադվելու զանցանքովն են ամբաստանում, որպես փաստ առաջ քաշելով համաշխարհային խաղաղության ի նպաստ մղվող միջազգային պայքարին Մեր բերած ակտիվ մասնակցությունը: Այդ մարդիկ չեն ըմբռնում, որ խաղաղությունը, հատկապես հայ ժողովրդի համար, ամենակարևոր և ամենակենսական հարցն է, բարիքների աղբյուրը:

— Վեհափառ Տե՛ր, Զեր գահակալության տարեդարձի առթիվ եղած ընդունելության ժամանակ, Ս. Օժուֆյանդ հայրական ամենազորավալի հայացքները սեւեռվում էին սարկավազների վրա:

— Միանգամայն ճիշտ եք նկատել: Նոքա էջմիածնի Հոգևոր Ժեմարանի առաջ հասկերն են, Կան ուրիշներ ևս, որոնք հետևում են Մոսկվայի Աստվածաբանական ճեմարանի դասընթացներին: Մենք մեծ հույսեր ունենք նոքա և Հոգևոր Ժեմարանի նկատմամբ, որովհետև Հայ Սեկեղեցու միասնությունն ու Հայ Ազգի միությունը, մասնավորապես Մկրտություն, կախում ունեն դեկավար հոգևորականների և մտավորականների ցուցնելից ընդունակություններից, ուստի մեծ է Հոգևոր Ժեմարանի կատարելիք դերը:

Ինչպես հայտնի է, էջմիածնի Հոգևոր Ժեմարանը բացվեց 1945 թվականին: Նորա առաջադրած միակ նպատակն է գերազանցորեն լուսամիտ, Հայրենիքի, Հայ Սեկեղեցու և հայ ժողովրդի հարազատ ու հավատարիմ, անձնդիր ու անձնվեր հոգևորականներ և մտավորականներ պատրաստել:

Անցյալում մեծ է եղել Հայ Սեկեղեցու և հայ դպրոցի դերը ազգային ինքնագիտակցություն զարթեցնելու և զարգացնելու գործում: Այժմ էլ, ավելի քան երբեք, անհրաժեշտ է վառ պահել ազգային գոյատևության հիմքը կազմող ազգային ինքնագիտակցության ոգին: Եվ այդ կարելի է միայն քաջ, մտավորապես զարգացած, ազգային ոգով դաստիարակված, գիտնական վարդապետների միջոցով, ինչպես պատահեց և 5-րդ դարում, Լուսավորչից ներշնչյալ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի և նոքա աշակերտների ձեռամբ: Այդ սրբազան նպատակի իրականացման է ձգտում էջմիածնի Հոգևոր Ժեմարանը:

Հին շրջանում, էջմիածնի Ժեմարանը շատ սահմանափակ ուսանողներ է ընդունել արտասահմանից: Բայց Մենք առաջադրել ենք էջմիածնի Հոգևոր Ժեմարանի դռները լայնորեն բանալ նաև արտասահմանյան հայ ուսանողների առաջ, որպեսզի նոքա ոչ միայն ձրիաբար ստանան այս հաստատություն շա՛րած բարձրագույն կրթությունը, այլև ապրեն Հայրենի երկրի ծոցում, տեսնեն նախնայաց թողած սքանչելիքները, մոտից ծանոթանան Հայրենիքում ապրող հարազատ եղբայրների կողմից գրի ու գրականության, գեղարվեստի ու հայրենաշինության մարզերում կատարված տիտանյան վերելքին, որպեսզի մի օր, Ժեմարանից ընթացավարտ, երբ վերադառնան իրենց ծննդավայրերը, տան իրենց ականատեսի վկայությունները՝ գրական ստեղծագործություններով:



էջմիածնի Հոգևոր Ճեմարանը Հայրենիքի և Սփյուռքի, այսինքն՝ քաղաքական դժբախտ դեպքերի հետևանքով տարբեր հորիզոնների տակ ապրող հայերի միջև միացման շղթայի մեկ օղակը լինելու բացառիկ հանգամանքն ունի:

— Զերդ Վեհափառությունը անշափ հետաքրքրություն ունի Սփյուռքի հարության նկատմամբ: Արդյոք սփյուռքահայությունն

մազուր վերապահություն՝ մասնավորապար նյութական պարտականությունները կատարելու մարզում այնպիսի ազգային հաստատությունների և կազմակերպությունների մոտ, որոնց հայրենասիրության, ազգասիրության և էջմիածնասիրության մասին կասկած չունենք:

Վստահ ենք սակայն, որ արտասահմանի առաջադեմ մտավորականությունն ու մամու-



Վեհափառը Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների և Վարպետի հետ միասին՝ շրջապատված մի խումբ սահկավազներով:

ի՞նչ վերաբերում ունի Ս. Օծությունը այս ազգօգուտ ձեռնարկի նկատմամբ:

— Մեր բոլոր ձեռնարկները առհասարակ լավ ընդունելություն են գտնում արտասահմանի Մեր հարազատների կողմից: Հոգևոր ճեմարանի բացման թվականներին խանդավառությունը շատ մեծ եղավ արտասահմանի զանազան կենտրոններում: Բայց վերջերս նկատվում է մի տեսակ վախկոտության հա-

լը պիտի մեան միշտ իրենց կոչման բարձրության վրա և երբեք չպիտի դադարեն ժողովրդին բացատրելուց Հայաստանի աննախընթաց վերելքն ու էջմիածնի՝ ազգային ինքնագիտակցությունը զարթեցնող ու զարգացնող այդ վառարանի, հայ հավատի ներշնչարանի կենսական նշանակությունը, հետևաբար, նորա հանդեպ նյութական ու բարոյական պարտականությունների կատար-



ման անհրաժեշտությունը: Չպետք է վատություն խառնել արհուրյան, որովհետև գոյություն չունի ոչ մի օրենք, որ արգելի հայրենասիրությունը, ազգասիրությունն ու եկեղեցասիրությունը: Հուսով ենք, որ Սփյուռքի Մեր հարազատներից Մեր անկալությունը պիտի իրագործվի թեմակալ առաջնորդների, ազգային հաստատությունների, բարերար անձնավորությունների և հավատացյալ հայ ժողովրդի միակամ ջանքերի շնորհիվ:

Շնորհափառ և առաքինազարդ Հայրապետից օրհնություն ստանալուց հետո, երբ ման էի գալիս Մայր Տաճարը շրջապատող եղբմանման ծառաստանների մեջ, — շին ու բարդավաճ էլ միաժին քաղաքն ամբողջ մի հո-

վասուն ծառաստանի տպավորություն է թողնում ճանապարհորդի վրա, — ես ինձ հետ այսպես էի խոսում:

«Ի՞նչ լավ առիթ Սփյուռքի հայության համար, հատկապես մեծահարուստներին, նվիրարեմամբ արդարացնելու իրենց հայրենասիրությունը, ազգասիրությունն ու եկեղեցասիրությունը և իրականացնելու իրենց վրա դրված հայրապետական անկալությունը, որպեսզի Ամենայն Հայոց առաքելատիպ, իմաստուն, մշտարթուն, քաջակորով, ժողովրդանվեր ու հայրենասեր Հովվապետին հաջողվի իր ազգօգուտ ձեռնարկների ի կատար ածումն ու էջմիածնի լուսավորչական դ փարոսի անմար և մշտաբորբոք պահպանումը»:







## Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՑ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ

### ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ ՈՐՊԵՍ ԱՍՏՂԱԲԱՇԽ՝

Անանիա Շիրակացին իր աշխատության հաջորդ գլուխը նվիրում է «ծիր կաթին»-ին։ Նա բերում է «ծիր կաթին»-ի մասին եղած առասպելները, որոնցից առանձնապես ուշադրության արժանի է հայկականը, որը կապված է Վահագնի հետ։ «Դարձեալ ոմանք յատաշնոցն ասացին թէ՝ ի խիստ ձմրան Վահագն նախնի հայոց գողացաւ զյարդ Բարշամայ ասորեստանեայց նախնոյ, զոր և մեք ստվորեցաք թնախօստութեամբ յարդողի հետ անուանեալ»<sup>1</sup>։

Կարևոր է նշել, որ հեղինակը չի համարձակվում «ծիր կաթին»-ի մասին եղած առասպելների հետ և նրանց հակադրում է իր ժամանակի քաղաքացիություն, ունեցող դիտական տեսակետը։ «Թողէ՛ք զայդ ի մաց, յ՛վ աստուծասէրք, — ասում է նա, — և մի՛ դուք զայդպիսի բանս լէ՛ք. քանզի փիլիսոփայքն բարոյք ասացին զդմանէ թէ՛ խիստ աստեղք են բազումք, նուազք և յոյժ ընդ ազօտ երևմանէն միավոր լոյսն տեսանի»<sup>2</sup>։

Այսպիսով, Շիրակացին հավատ չի բնծայում առասպելներին, նա հետևում է, ինչպես ինքն է ասում, «բարոյ», այսինքն դիտուն փիլիսոփաներին։ Տվյալ դեպքում նա հավանություն է տալիս Քեոֆրաստի (3-րդ դար մ. թ. ա.) հիպոթեզին, ըստ որի «ծիր կաթին»-ը կազմված է բազմաթիվ աստղերից, որոնք երկրից հեռու ընկած լինելու պատ-

ճառով երևում են խիտ դասավորված և ազոտ պայծառությամբ։ Զգինված աչքով այդ աստղերը տեսնել հնարավոր չէ, ուստի և վերև քերված հիպոթեզը իր ժամանակի համար գիտական կարևոր հայտնագործություն էր հանդիսանում։

Մենք կանգ չենք առնում «ծիր կաթին»-ի վերաբերյալ ժամանակակից տեսությունների վրա, քանի որ դա մեզ հեռու կտաներ։ Մենք այնտեղ ուզում ենք նշել, որ «ծիր կաթին»-ի մասին Շիրակացու բերած տեսակետը միանգամայն ճիշտ տեսակետ է՝ փոքր ուղղումով։

Շիրակացու աշխատության 9-րդ գլուխը՝ «Ծագագա լուսնի», հետաքրքրական է մի քանի տեսակետից։ Նախ նյութի շարադրվածքից երևում է, որ այդ էպոխայում դեռևս վիճելի հարց է համարվել այն՝ թե լուսինն արդյոք ունի՞ իր սեփական լույսը, թե լուսավորվում է արեգակից անդրադարձած լույսով։ Մեզ համար այժմ այդ ամենապարզ հարցերից է, բայց հնում այն ամենաբարդ տիեզերագիտական հարցերից մեկն է համարվել։

Անանիա Շիրակացու մի տեղեկությունից երևում է, որ ակնդեցականներից ոմանք պնդում էին, որ աշխարհի վրա զանազան տեսակի լույսեր կան. այսպես, արեգակի լույսը տարբերվում է լուսնի լույսից, լուսնի լույսը՝ կրակի լույսից և այլն։ Տվյալ դեպքում նրանք հենվում էին այն ավանդության վրա, որ լուսինը ստեղծված է լուսավորելու դիմաց, ուստի և նա անպայման պիտի ունենա սեփական լույս։ Եթե փոքրիկ միջատներից մի քանիսն անզան ունեն սեփական

1. Եւրոանկված ամսագրի 1855 թվականի հունիսի համարից։

2. Անանիա Շիրակացի, Եկեղեցադպրութիւն և տոմար, էջ 37։

3. Նույն տեղում, էջ 37—38։



լույս, ապա ինչո՞ւ լուսինը պետք է զրկված լինի սեփական լույսից, — եզրակացնում էին նրանք:

Անանիա Շիրակացին, սակայն, կանգնում է հակառակ տեսակետի վրա՝ պնդելով, որ լուսինն արեգակից է ստանում լույսը. «Բայց ես հաւանքով բազմաց իմաստասիրութեան յարեղականէ ասել. իսկ որ սե նշանքն երեին ի լուսինն իբր գիծք իմն իրողմի, ասացին զնմանէ արտաքինքն՝ թէ խոյլք են խոռոչաց, որպէս յական յակնթի, և վասն զի ո՛չ անգեղ ունի զլուսատրութիւն, այնք աղաղաւ ո՛չ կարէ տալ զլույս որպէս զարեգակն...»<sup>4</sup>:

Ելեւելով ճիշտ տեսակետից, Շիրակացին կարողանում է գիտականորեն բացատրել լուսնի փուլերի առաջացումը և լուսնի խավարումների երևույթը:

Մեզ համար զարմանալի չէ, որ հեղինակին այս գլխում տուրք է տվել իր ժամանակի տեսություններին՝ ամպամածութեամբ, փոթորիկները և մի շարք այլ երևույթներ կապելով լուսնի դիրքի և փուլերի հետ: Պետք է ասել, որ եվրոպացի գիտնականներից շատերը մինչև 18-րդ դարը դեռ կանգնած էին այս տեսակետի վրա:

Անանիա Շիրակացին իր դասագրքի այս գլխում հիշատակում է մի երևույթ ևս, որը նա, իրավացիորեն, կապում է լուսնի փուլերի հետ. դա մակընթացության և տեղատրվության երևույթն է, իսկապես, հետագա դարերում մի շարք գիտնականների լուրջ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ երևույթը երկրի վրա, գլխավորապես, կախված է երկրի նկատմամբ լուսնի ունեցած դիրքից (իսկ նրա դիրքից էլ կախված են նրա փուլերը): Ճիշտ է, որ արեգակն էլ այդ հարցում ռմի իր ազդեցությունը, բայց այդ, համեմատաբար, փոքր է լուսնի ազդեցությունից: Այդ կնճռոտ հարցի մասին Շիրակացին հետևյալն է գրում. «Եւ գնացք իմն են ասեն յաշխարհին Եւրոպացւոց լովկիանոս, որ երբեմն ցուցանեն յաւելուած լիութեան, և երբեմն զիջանին ի լիութենէ անտի. և այս ասեն ըստ գնացից լուսնի փոփոխին: Ի սկզբան ծննդեան լուսնի անշարժական ասեն գնացք զաղացիցն և ըստ աճելն լուսնի՝ սկսանին շարժել և զեռալքն: Անանիա Շիրակացու դարն այնպիսին չէր, որ նա կարողանար լրելվ կերպով լուսաբա-

նել այդ հարցը. միայն երկար դարերի՝ Ընթացքում, մի շարք գիտնականների ջանքերի շնորհիվ հաջողվեց այդ երևույթի իսկական պատկերը և տեսությունը տալ: Այդ ուղղութեամբ ուշադրության արժանի են Ջորջ Դարվինի՝ հռչակավոր Չարլզ Դարվինի որդու կատարած հետազոտությունները:

Երկրի նկատմամբ լուսնի չափերի և հեռավորության մեծ լինելը Շիրակացին լուսաբանում է մի գեղեցիկ օրինակով՝ համեմատելով սովորների երկարությունը՝ կախված լուսնի աղբյուրից և նրա լուսավորումից. «Լուսի թաղաքաց որ ընդ ամենայն տեղեւ շինեալ են ի միմեանց հեռք, հալեաց ընդ հրապարակսն և ընդ փողոցսն՝ որ ուղղորդ ընդ արեւելս հայիցին, զիա՞րդ միանգամայն լուսատրեսցին, և միով կերպարանք տեսնես, զի լուսատրէ զամենայն նուրբ փողոցս և զամբաստանս: Եւ զիա՞րդ է այս, եթէ ո՛չ առ ամենեւեմն ի մեծութեամբ և զշրճով (1) յերեսս ամենեցուն արձակէ զլույսն...»<sup>5</sup>: Միանգամայն ճիշտ է, որ միայն շատ հեռու պտկով լուսնի աղբյուրը կարող է լուսավորել երկրի քաղաքները և փողոցներն այնպես, ինչպես իսկականում լուսավորում է լուսինը:

Լուսնի խավարմանը նվիրված հարցերին մենք շենք անդրադառնում, քանի որ այդ մասին Ընդարձակ խոսել ենք «Էջմիածին» ամսագրերում (տես 1951 թ., նոյեմբեր — դեկտեմբեր №-ը, էջ 40):

Աստղաբաշխության նվիրված վերջին՝ 10-րդ գլուխն Անանիա Շիրակացին նվիրել է արեգակի տեսությանը: Այս գլխում արեգակնային տեսության հարցը — արեգակի լույս և սևիական ջերմություն ունենալ-չունենալու հարցն է, նրա լիքակացությունն այն է, որ արեգակը չունի սեփական լույս և ջերմություն, հետևաբար սառը մարմին է: Ըստ Անանիա Շիրակացու, արեգակը «...ինքն է ցուրտ բնութեամբ. զջերմութիւն և զլուսատրութիւն յարմոյ առեալ հեղու լողս, որով լուսատրի և ջեռնու երկիր: Եւ հաւանեցուցանէ զքեզ օրինակ. գունդ բիրեղ յորժամ յարեւու ունիցիս, տես զի ինքն ցուրտ է ամենեւին, իսկ որ շող կաթէ ի նմանէ, պայծառ է առաւել քան զլույս արեգակն, և ուրաւոր կաթէ, լուցանի. քանզի ի կաթուած շողոյ նորա հոսք ծնանի, թէպէտ և ինքն ցուրտ է բնութեամբ: Նոյնպէս և զարեգակնդ իմա՞ն?»:

4. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 40:

5. Նույն տեղում, էջ 43:

6. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 41:

7. Նույն տեղում, էջ 47:



Ահա թե ի՞նչ է հասկացել Երրակացին «արփի» ասելով. «արփի» նրա մոտ տիեզերական այն մարմինն է, որից արեգակը ասանում է լուսը և շերմությունը:

Նոր դարերում հաճախ «արփի» բառը գործ է ածվել «արեգակ» բառի փոխարեն, բայց Անանիա Երրակացին, իհարկե, այդ իմաստով չի գործածում: Նոր Հայկազեան բառարանում «արփի» բառը մեկնաբանվում է Արիստոտելի տիեզերական եթերի իմաստով: Նման մեկնաբանությունն այստեղ նույնպես անընդունելի է, քանի որ Արիստոտելի եթերը, որը լցնում էր ամբողջ տիեզերքը, մինչև «անշարժ աստղերի սփերան», ըստ իր բնության, «եթէ այլ է իմն բնութիւն պարզ, օտար ք շրթից բնութեանց, զի ո՛չ հուր է և ո՛չ օդ, և ո՛չ հող և ո՛չ ջուր, այլ ամբն է ասեն, լուսաւոր և խիստ, որպէս ցրնութիւն պաղպաղակի...»<sup>8</sup>, Հետևաբար, տիեզերական եթերը պիտի լիներ նույնպես բնութամբ ցուրտ, ուստի և արեգակի զունը նրա շերմությունը քաղել չէր կարող:

Այստեղ Երրակացին, մեր կարծիքով, հետևել է Պյութագորասի<sup>9</sup> դպրոցի տեսակետին, ըստ որի տիեզերքի կենտրոնում տեղավորված է նյութերից ամենամաքուրը՝ հուրը և այդ կենտրոնական բոցի շուրջը նրանք համալսի հեռավորությունների վրա պտտեցնում էին հակաերկիրը, լուսինը, արեգակը և անշարժ աստղերի սփերան: Քանի որ, ըստ նրանց ուսմունքի, երկրի բնակելի մասը միշտ դարձած էր հակաերկրի և կենտրոնական բոցի հակառակ կողմի վրա, ապա այդ վերջիններս մարդկանց համար անտեսանելի էին մնում: Հետևապես, արեգակը բյուրեղյա գնդի նման համալսելով կենտրոնական բոցի արձակած ճառագայթները, ուղարկում էր երկրին լուսն և շերմություն: Անանիա Երրակացու այդ տեսակետը քննադատվեց հետադարձում մյուս հայ գիտնականների կողմից և մինչև անգամ դարձավ ծաղրի նյութ: Կանգնելով այդ հիպոթեզի վրա, Անանիա Երրակացին ժխտում է այն սխալ տեսակետը, որ Աստված ստեղծագործությունը 4-րդ օրը ստեղծելով արեգակն ու լուսինը, նրանց մեջ, որպես ամանների մեջ, հավաքեց և կենտրոնացրեց մինչև այդ տիեզերքում ցրված լուսը:

Կանգ շինք առնում այս գլխի մյուս հարցերի՝ տարվա եղանակների առաջացման, արեգակի տեսանելի շարժման, արեգակի խա-

վառումների վրա և այլն: Չմոռանանք ասել, որ առաջին երկու հարցում Երրակացու րացատրությունները կարելի է համարել ճիշտ և ընդունելի, եթե նրանց մոտենանք հրկրական տրոն սիստեմի տեսակետից:

Անանիա Երրակացին արեգակի շափերի մեծությունը մասին աշխատում է խոսել մատչելի օրինակներով. «...զի որ բնականալն իցեն անդր ի Հնդկաց աշխարհին, կամ անդր ի Բրիտանիայ աշխարհին, միով հաւասարութեամբ անասնեն զծագելն և զմտանելն արեգականն, զի ո՛չ յորժամ գտանէ առ արեւմտեայսն նուազի ինչ ի մեծութեանէ անտի առ արեւելեայսն, և ո՛չ յորժամ ծագէ առ ի բնակչացն արեւելեայց թերի քնչ և պակաս երևեսցի բնակչացն արեւմտեայց»<sup>10</sup>, Բայց այստեղ հեղինակը նպատակահարմար չի համարել իր աշակերտներին տալ թվական տվյալներ, որոնք իրեն հայտնի էին (մենք այդ մասին գիտենք նրա մյուս աշխատություններից): Այդ հանգամանքը մենք համարում ենք նրա դասագրքի թերություններից մեկը:

Քանի որ Անանիա Երրակացին քաջ գիտեր գիշեր և ցերեկ առաջանալու պատճառը, ապա դժվար չէր նրա համար րացատրել տալիս եղանակների առաջանալն ու գիշեր-ցերեկների տեղափոխումն փոփոխվելու: Գիշերվա առաջացման մասին նա փոքր ժողով հայտնել է հետևյալ պարբերության մեջ. «...յորժամ ի վեր քան զկէս գնդին առնիցէ զգնացա իւր, հալածելով խաւարն և լուսաւորելով զօրս կոչեցաւ տիւն Եւ արդ՝ յայտ է թէ տիւն ի լուսույ արեգականէ ինի... որպէս ստուերք երկրի պատճառ է զիշերոյ»<sup>11</sup>, Գիշերվա և ցերեկվա տեղափոխման կապակցությամբ ես անդրադարձել է այդ հարցին. «Եւ յորժամ ծագեսցէ արեգակն, փոքրկանան ստուերք տարերք երկրի, և կարճին շուք հասակաց ի միջօրեայ ժամանակի, տիւքն երկայնք լինին: Եւ յորժամ ստուերքն երկայնին՝ աւուրքն փոքունք լինին, և աստ առ մեզ, որ քի կողմանս հիւսիսոյ բնակեալ եմք, ալլազգ անկանին քի մէնջ ստուերք, և յալլում աշխարհի միոջ ալլազգ, զի Բ աւուրս յամենայն տարոջ ի միջօրեայ ժամանակի առնց ստուերի ինի: քանզի կշիռ ի վերայ գլխոյ ամենեցուն վան ճառագայթք արեգականն, և հասարակ յամենայն կողմանց արեգակն զնշոյս սրայծառութեանն ի վերուստ մինչև ընդ ներքին խորս ջրհորոց ընդ նեղ և

<sup>8</sup>. Անանիա Երրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար:

<sup>9</sup>. Розенберг. История физики, том 1.

<sup>10</sup>. Անանիա Երրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 86:

<sup>11</sup>. Նույն տեղում, էջ 53—54:



ընդ նուրբ բերանս մտանէ շող և լուսաւարէ. և անուանեն զաւուրսն անստուեր միջօրեայ: Եւ այլք որ ի հեռաւոր աշխարհին Հնդկաց րեակեալ են, և անոր ևս քան զՄինդ և զՍմբղանդ ստուերք հաստկաց մարդկան յերկոցունց կողմանց երեմի. և կողեն իսկ երկստուերեան աւուրս: Եւ այս ամենայն ի փոփոխելոյ պնացից արեղական լինի»<sup>12</sup>, եթէ այս բերված կտորի առաջին մասը գիտական տեսակետից միանգամայն համապատասխանում է իրականության, ապա երկրորդ մասը կառկած է աստղացանդում Հասարակածից դեպի հարավ գտնվող աշխարհամասերում, իրոք, որ Կեսօլին ստվերը թեքվում է ոչ դեպի հյուսիս, ինչպես մեր կիսագնդում, այլ ընդհակառակը՝ դեպի հարավ: Մեզ հետաքրքրեց. թե ո՞րանցից է քաղել Անանիա Շիրակացին այս տեղեկությունը, և եկանք այն եզրակացության, որ նա այս ընդօրինակել է Բարսեղ Կեսարացու աշխատությունից: Նրա մոտ ասված է (բերում ենք ռուսերեն թարգմանությունից). «А живущие далее страны изобильной ароматами изост тени попеременно в ту или другую сторону. Ибо они, одни из обитаемой нами вселенной, в полдень отбрасывают тень к югу; отчего некоторые называют их круготеньми»<sup>13</sup>:

<sup>12</sup>. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 53:

<sup>13</sup>. Василий Велкий, Беседы на шесто-днев, Москва, 1891 г., т. I, стр. 94.

Ինչպես տեսնում ենք, Անանիա Շիրակացին ընդօրինակելով Բարսեղ Մեծից, մշտեցրել է ոչ ոչ փոփոխություններ: Եթե Բարսեղի մոտ ասված է «հարուստ բույսերով երկրից», ապա իսկին հասկացվում էր Հնդկաստանը և Յեյլոն կղզին, մեր հեղինակը դրում է «Մինդից և Սմբղանից դեմք», և եթե առաջինն ասում է, թե ռոմանք անվանում են կլորաստվերային», մեր հեղինակը դրում է ուղղակի «երկստվերական»: Դա, իհարկե, լինին փոփոխություն է:

Ամփոփելով մեր եզրակացությունը Անանիա Շիրակացու աստղագիտության մասին, մենք գալիս ենք այն եզրակացության, որ Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատությունը աշխարհում մեզ հասած հնագույն դասագրքերից մեկն է. նրա այս աշխատության մեջ գիտական հարցերն առաջադրված և լուծված են իր ժամանակի աստղագիտական կյանքում: Նա շատ հարցերում հիմնվել է հին հունական աստղագիտականների տեսակետի վրա և ուղղվել նրանցից:

Շիրակացին դիտության պատմության մեջ խոշոր դեմք է: Նրա թողած գիտական մատենագրությունը թանկագին գոհարներ է բովանդակում, որոնք պիտի ուսումնասիրվեն և դիտության լայն շրջանի սեփականություն դառնան: Այդ ուղղությամբ դեռ մեծ անելիքներ ունեն դիտության պատմությամբ զբաղվող մեր մասնագետները:





## ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԵՑԻ ՄԵԾԱՐԺԵՔ ԶԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆԸ<sup>1</sup>

### 1. ԶԵՌԱԳՐԻ ՆԵՐԱՇԱԿԱՆԸ



արյուր վաթսուհն երկար ու ձիգ տարիներ փոշիների տակ ընկած է պատմագիր Ստեփանոս Երեցի արժեքավոր ձեռագիր պատմությունը և դեռ մինչև օրս էլ, դժբախտաբար, նա լույս չի տեսել առանձին գրքով:

Դա 12×20 սմ. ծավալով, կաշեկազմ, լավ թղթի վրա շարադրված, 488 էջից բաղկացած, փոքրագիր, բայց հաստափոք մի ձեռագիր է, որի 392 էջը վազմում է ժողովրդական պատմությանը, մնացյալ երեսները պատկերում են գրաքար քանդակողություններ, իսկ վերջին 40 էջը բովանդակում է մի բառարան: Զեռագրի առաջին երեսի վրա արձանագրված է.

«Գիրք որ կոչի Հանգիտագիրք<sup>2</sup>, որ է մտածմունք ժամանակակից անցելոց և ներկայից:

Հանգանակեալ և ծրեալ<sup>3</sup> ի հայրապետութեան Սրբոյ սարսափելի Աթոռոյն էջմիածնի Տեառն Ղուկասոյ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Եւ ի առաջնորդութեան նահանկիս մերոյ Տեսոն վեհանձնեայ Մկրտիչ վճռի<sup>4</sup> ախորժ առաջնորդին արժանաժառանգ ս[ուր]բ աթոռոյն Ամենափրկչի վսեմական վանացս:

Ի ներթուրջ մարդեղութեան Տեսոն ՌԶԶԶ ի թականութեան մերոյ ՌԲՃԼԶ (1787 թ.), ներամսեանն լույսիս, որոյ յաւելութեան էին ժ և Ե (15):

Ապաշնորհ Տ[է]ր Ստեփանոսէն:

### 2. ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԵՑԻ ՊԱՏԿԵՐԸ

Հանգիտագիրք ձեռագիր մատրանը բազկացած է վեց առանձին և կարևոր մասերից:

Զեռագրի առաջին և էական էջերից մին երրորդ թերթիկի վրա զեված Ստեփանոս Երեցի նկարն է: Դա մի պարզ, բայց կենդանի և խոսուն պատկեր է, որ իր ներդաշնակ և համաշափ գծադրությամբ վկայում է անհայտ նկարչի վրձինի մասին:

1. «Եղմիածին» ամսագրի խմբագրությունը, ապագրելով մեր հարգելի աշխատակցի այս արժեքավոր հոդվածը, հավատացած է, որ իրավահայ մեր գրասեր շրջանը մոտիկ ապագայում հրատարակության կհանձնի մեր մոռացված մատենագիրներից մեկի՝ Ստեփանոս Երեցի «Հանգիտագիրք» և դիտական լայն շրջանի սեփականությունը կդարձնի այն:— ԽՄԲ.:

Այնուհեղ պատմագիրը կանգնել է իր ամբողջ հասակով: Քահանայական պարզ, քայքայելի տարազը, դրսի փոքրիկ գլխարկը, ձախ ուսից զգած սև վերնաշարը, մեջքի գոտին, ոտների մաշիկները, որոնք ազդագրական ուրույն արժեք ունեն, առանձին փայլ են տալիս նկարին: Նա իր աչ ձեռքը դրել է սև վերաթևիկ ծայրին, իսկ ձախն երկարել դեպի առաջ, ասես ցույց և տալիս իր գրչի հաղթանակը:

2. Պատմագիրք:

3. Դրել, նկարել:

4. Սուրբ, հստակ:



Մի առանձին խորհրդակցություն և լրջություն է իշխում նրա շեշտված և խոստում դեմքի վրա, որին առանձին դրավշություն ևն տալիս փոքրիկ սև մորուքը, սև, խոհանոցային, խափանցող աչքերը, որոնք արտահայտում են նրա հոգու պարզությունը, բարոյական առաքինությունը և շեշտված անհատականությունը: Զգում էք, որ ձեր դիմաց վանդանել է իր ժամանակի լուսամիտ, առաջադեմ,

բարեմիտ և պարկեշտ մի հոգևորական, որ գիտակից իր կոչմանը, միշտ ապրել է ժողովրդի մեջ, համակվել է նրա ցավերով ու վշտերով և իր անձնվեր, ուղղամիտ, շիտակ փորձունեությամբ սիրվել է ու հարգվել ամենքից:

Նվաթի տակ պատմագիրն իր ձեռագրով մակագրել է. «Ստեփաննոս վասթաբ, չնչին, Բաբշ, մեղաւոր, աղտեղի, ճին»:

### 3. ՊԱՏՄԱԳՐԻ ԿՅԱՆՔԻ ՈՒՐՎԱԳԻՄԸ

Ստեփաննոս Երեցի կյանքի մի քանի փաստական տվյալները ձեռք տանում են Իրանի Սպահան նահանգի Փերիա գավառի Հազարըրիբ դյուղը, որի մասին Նոր-Ջուղայի պատմադիր Հարություն Տեր-Հովհաննյանցի «Պատմութիւն Նոր-Ջուղայու գրքի Բ հատորի 304-րդ էջում կարդում ենք.

«Հազարըրիբ գիւղ նշանաւոր էր ի նախկին ժամանակս թէ՛ սակս բազմամարդութեանն՝ որ ոմէր վեց հարիւր տուն բնակիչ, և թէ՛ յաղաղս անդ լինելոյ վանացն Աստուածածնի, յորում նստէր առաջնորդ և իշխէր ոչ միայն Փէրիոյ դաւառին՝ այլև Համադան քաղաքի: Այլ լիտ վանացն ամալանալոյ, և բնակչացն նւաղելոյ, այժմ է իբրեւ զմի ի հասարակ դիւղօրէից»:

Ահա հայաբնակ այս դյուղում 1746 թվականին ծնվել է Տեր Ստեփաննոսը: Նա իր կրթությունն ստանում է Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, ապա ձեռնադրվում է քահանա և ժողոված լինելով գրական ձիրքով՝ շուտով փայլում է որպես պատմագիր և բանաստեղծ:

Դա այն դարաշրջանն էր, երբ մի խումբ խաներ ու իշխաններ Իրանի զահի վրա բազմելու նպատակով՝ իրար հետ շարունակ մարտնչում էին, միաժամանակ ժողովրդին հարստահարում և ծանր հարկերով տանջում: Այդ բռնակալ խաներից առանձնապես աչքի են ընկնում Մահմադ խանը և Ալի Մուրադ խանը: Վերջինս զալիս է Նոր-Ջուղա և վայրագ բռնություններով կողոպտում Ամենափրկիչ վանքի և եկեղեցիների զարդերն ու զգեստները:

Հարություն Տեր-Հովհաննյանցի «Պատմութիւն Նոր-Ջուղայու» գրքի Բ հատորի 65-րդ էջում կարդում ենք.

«...Եւ եկեալ զինւորացն, կալան զառաջնորդ Մկրտիչ վարդապետն և զյաջորդ Յակոբ վարդապետն՝ զերկուս ի միաբանից՝ և դերկուս ի տիրացոսաց, և եղին զֆալաղայն յոտս առաջնորդին և յաջորդին, և ախքան դանեցին ի չորից կողմանց, մինչև տը նոցա ցծունկն ներկեցաւ արեամբ... Կողոպտեցին զամենայն որ ինչ կայր ի նոսա, և էր կշիռ արծաթոյն քսան և հինգ լիտր, քաց ի զգնստուցն, և կշիռ ոսկոյն երեք չարէք»:

Հարստահարությունների և բռնությունների պատկերը տեսնում ենք պուղբերում, որոնք մեկը մյուսից հուզիչ են և թախծոտ: Ահա՛ նման մասլ շրջանումն է ապրել Ստեփաննոս Երեցը:

Ուշադրավ է մի երևույթ, որ ժամանակի դավառական քահանաներն ու տանուտերերը նրա վրա բարոյական պարտականություն են դնում պատմության հանձնել ժողովրդի քաջած նեղություններն ու տառապանքները: Եվ նա «զտիւ և զգիշեր», «մեծաւ տքնութեամբ» և «արտասուածօր աշօք» գրում է իր պատմությունը, Այդ մասին Ստեփաննոս Երեցը Նոր-Ջուղայի հայոց առաջնորդ՝ Մկրտիչ եպիսկոպոսին ուղղած զեկույցի մեջ գրում է հետևյալ բնորոշ տողերը.

«...Հանդիտագրիս գործառութեանս մեծաւ խոնարհութեամբ պատկառանք հանդերձ զեկուցանեմ առ գորովագոյթ ճնողդ իմ. քանզի քահանայից և տանուտերաց դաւառաց հարկ եղին ի վերայ [ ] թերագոյն ծառայիս ախքան ճեպով և ըշտապով որ ո՛չ կարացի քերցել<sup>6</sup> և դերծանել<sup>6</sup> վարմից՝ նոցա»:

5. Ռոտել:

6. Վերլացնել:

7. Ռոգայթ:



## 4. ԶԵՌԱԳՐԻ ՄՅՈՒՄ ԷԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ

Ստեփանոս Երեցի ձեռագիր մատյանի երկրորդ և ամենաարժեքավոր, ուշագրավ մասը պատմագրությունն է, որ բաժանված է քառասուն զուգանքների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խորագիրը և քաղկացած է 392 էջից: Դա ձոխ, հարուստ, բազմերանգ մի պատմություն է, որ պլանավորապես ընդգրկում է 1665—1789 թվականների պատմական կարևոր անցքերի, դեպքերի, դեմքերի ու երևույթների արձանագրությունը: Սկսում է Շահ Աբբաս Բ-ի ժամանակաշրջանից և Եկարագրում Իրանի հանրոգ թագավորների գործունեությունը: Առանձնապես զեղծ է 18-րդ դարի պատկերը: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ բազմաթիվ պարսիկ իշխաններ ու խաներ,

օգտվելով երկրում տիրող անիշխանությունից, ձգտում են տիրել Իրանի դահին: Այդ նպատակով նրանք ո՛չ միայն միմյանց դեմ շարունակ կռվում են, այլև թե՛ զավառների և թե՛ գյուղերի անպաշտպան ժողովրդին ճնշումներով, բռնություններով և հարստահարություններով տնտեսապես քայքայում են:

Պատմագրքում ուրույն տեղ են զբաղում նաև Նոր-Ջուղայի, Սպահանի Փերիա և Բուրվարի զավառների ժողովրդի կյանքի կարևոր դեպքերի նկարագրությունները: Այդ պատմական արձանագրությունների մեջ էլ կայանում է Ստեփանոս Երեցի ձեռագիր մատյանի թե՛ գրական և թե՛ հասարակական արժանիքը:

## 5. ԶԵՌԱԳՐ ՄԱՏՅԱՆԻ ԸՆԴՈՐՈՇ ԷԱԿԱՆԻՇՆԵՐԸ

Ստեփանոս Երեցի ձեռագիր պատմությունն իր փաստական տվյալներով մեծ արժեք է ներկայացնում կղկնակի տեսակետներով:

Աշխատությունը խոշոր նշանակություն է ստանում, երբ նրան նայում ենք որպես 17-րդ և 18-րդ դարաշրջանների աղբյուր: Այդ պատմաշրջանների մասին եղած տեղեկությունները թե՛ մեր և թե՛ մյուս ժողովուրդների պատմագրության կողմից է՛լ ավելի հարստացնելու և ստուգելու համար Ստեփանոս Երեցի ձեռագրի ամեն մի նոր էջը, ամեն մի նոր գծագրությունը կարելի է կարևորագույն փաստաթուղթ համարել:

Նույնպես ձեռագրի բովանդակությունը չափազանց կարևոր նշանակություն է ստանում, երբ նրան դիտում ենք պարսիկ, վրացի, աղվան, լոռ և ուսանձնապես իրանահայ ժողովուրդների պատմության առումնասիրության տեսանկյունից:

Ուշագրավ է, որ պատմագիրը վառարայլ անաշատությամբ և արդարադատ կերպով գծել է ժողովրդական հարստահարությունների, զրկանքների, նեղությունների և տառապանքների պատկերը, որոնք առաջանում են ժամանակի տիրող իշխանների, խանների ասպատակություններից: Պատմական այս դեպքերը, որոնց մասին ձեռագրում կարդում ենք շատ թանկագին փաստաթղթեր, հանգիստանում են մի երևույթ, որն ընդգծում է պատմագրության հասարակական խոշոր արժեքը:

Ձեռագրի բովանդակությունը մի առանձին երանգ են տալիս նաև այն վարկեր տեղեկությունները, որոնք բոլորովին նոր են իրանահայ պատմագրության համար, Այդ տե-

սակետից ուշագրավ են, օրինակ. ձեռագրի 33-րդ (էջ 285), 34-րդ (էջ 294), 35-րդ (էջ 307) պրակները, որոնք հյուսված են հովվերգական, իդիլիական շնչով:

Ստեփանոս Երեցի պատմությունն ունի մի ուրիշ առավելություն, որից զուրկ են նրա նախորդ պատմագիրները: Նրա անպաճույճ, անարվեստ, բայց հուզիչ պատմագրության մեջ հավաքված են բազմաթիվ փաստեր ո՛չ միայն Իրանի զավառական, այլև գյուղական ժողովրդի կյանքից, Այնտեղ պարզ գծերով երևան են գալիս Սպահանի Փերիա և Բուրվարի զավառների կենտրոնական գյուղերը և մենք տեսնում ենք գյուղացի ժողովրդի ճնշումների, կեղծքումների և պաղթի հուզիչ ու մռայլ պատկերներ: Այդ էջերով պատմագիրը մեզ տանում է գյուղական ժողովրդի մեջ — ահա թե ի՞նչն է գնահատելի Ստեփանոս Երեցի մատենագրության մեջ:

Ձեռագրի էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ աջնոնդ հետաքրքիր մանրամասնություններ են հանդես գալիս այնպիսի տեղերում, ուր մի այլ պատմագիր կրավաճախանար միայն ամփոփ, սեղծ, համառոտ հիշատակությամբ: Այդ երևույթն էլ նշում է Ստեփանոսի առը դիտողությունն ու բարեխղճությունը:

Սակայն ամենահիմնական հատկանիշներից մին, որ է՛լ ավելի բարձրացնում է պատմագրության բովանդակությունը, դա իրականությամբ հարազատ նկարագրությունն է. պատմաբանը շատ դեպքերին ժամանակակից և ակնհայտ լինելով, իր պատմությունը, մեծ մասամբ, հիմնել է քաջահայտ ճշմարտության վրա, այսինքն՝ նկարագրել է այն ամենը, որին ավանատես է եղել ինքը:



ինչ որ տեղի է ունեցել, ինչ որ լսել է։ Որպես պատմադիր նա եկել է ա՛յն հզորակացության, որ պատմությունը, ինչպես ասել է Կիկերոնը, չպիտի սուտ ասի, ո՛չ էլ թաքցնի որևէ ճշմարտություն։ Այդ տեսակետով մտնեցել է Տեր Ստեփանոսը ժամանակակից դեպքերին և իրենց հարազատությանը արձանագրել է։ Թերևս այդ հանգամանքով էլ պիտի բացատրել, որ նրա պատմագրություն մեջ դեպքերն ու դեմքերը գծված են կենդանի

նի գույներով և ուր արտացոլում է ժողովրդի ունալ կյանքը։

Նվ իրոք, Ստեփանոս Երեցը գլխավորապես ունիստ պատմաբան է։ Կատարելապես զիտակից իր կոչումին, նա նկարագրել է ընդհանրապես ժամանակաշրջանի գերիշխողներին, սասպտակողներին սխալագործությունները, պատմաբանի վրա նկարելով ժողովրդի անյուր տանջանքներն ու նյութական վրկանքները՝ իրենց իսկական գույներով։

## 6. ՁԵՌԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ

Ստեփանոս Երեցի պատմագրությունը, իր դրական հատկանիշների հետ միասին, ունի մի քանի հիմնական բացեր։ Այնտեղ կան այնպիսի նկարագրություններ, որոնց իրողությունները նա քննադատական վերլուծության չի ենթարկել, չի բացատրել և չի լուսաբանել պատահած դեպքերի պատճառներն ու հետևանքները։ Իրեն լուի ավանտուս և կյանք նկարագրող, նա չի զանազանել և ստուգել կարևոր փաստներն անկարեորից և երբեմն էլ իր լսած հրաշագործ ավանդություններին հավատ է ընծայել, մոռանալով իր պատմաբանի կոչումը, որ նյութեր վատուցելիս պետք է տվյալները խնամքով ու-

սումնասիրել, քաղդատել ու զննահատել, պետք է քննադատաբար ստուգել և վազմել նրանցից մի ինքնուրույն ամբողջություն, որի անունն է պատմություն և որի նպատակն է ճշմարտությունը։

Պիտի նշել, սակայն, որ նման ավանդական էջերը ձեռագրում մի-երկու պրակ նեն կազմում և երբե՛ք չեն նսեմացնում նրա պատմության խոշոր շնանակությունը, որ իր լուվանդակությամբ հարուստ, քաղվազան տեղեկություններ է տալիս, ինչպես դիտել ենք, թե՛ Իրանի շահերի, թե՛ աղվանների, թե՛ վրացիների և թե՛ լոռերի պատմության մասին։

## 7. ՁԵՌԱԳՐԻՆ ՈՐՊԵՍ ԳԼԽԱԼՈՐ ԱՂԲՈՒՐ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՊԼՏՄՈՒԹՅԱՆ

Արձանագրենք մի կարևոր հանգամանք էս։ Ստեփանոս Երեցի արժեքավոր ձեռագրի պատմությունից ամենալայն շափով ոգտվել է Նոր-Ջուղայի պատմագիր՝ Հարություն Տեր-Հովհաննիսյանը։ Բացե՛ք նրա «Պատմություն Նոր-Ջուղայու» (տպ.՝ Նոր-Ջուղա, 1880 թ.)՝ երկհատոր պատմագրությունը և այնտեղ պիտի գտնեք բազմաթիվ էջեր, որոնք իրենց բովանդակությամբ կառուցված են Ստեփանոսի ձեռագրի փաստական տվյալների վրա։ Այնտեղ պիտի կարդաք նաև ամբողջական հատվածներ, որոնք նույնությամբ քաղված են Տեր Ստեփանոսի ձեռագրից։ Այդ մասին խոստովանում է հենց ինքը՝ պատմագիր Հարություն Տեր-Հովհաննիսյանը իր «Պատմություն Նոր-Ջուղայու աշխատության Ա հատորի 3-րդ էջում ընդգծելով հետևյալ տողերը։

«...Առանել սատարողն իմում ձեռնարկութեան եղև տնտրակ մի գրեալ ի Տեր Ստեփաննոս քահանայէ ի գեղջէն Հազարըրիբոյ գաւառին Փէրիու, գոր գտի ի գըրքատան Ամենափրկիւան վանին, էր այն պատմութիւն, որ պարունակէր յինքեան զյաջորդութիւն թագատրացն պարսից

յերկրորդ Շահաբասայ սկսեալ ցլօթվայի խան Ջանգի. գհարստահարութիւնս դաւառին Փէրիոյ, զպատմութիւնս զանազան մասնաւորաց որք ճգնակեաց առաքինութեամբ հրաշագործ համբաւեցան ի Փէրիա, ընդ որս և համառտեաւ յիշատակութիւն ինչ վարկածիցն Ջուղայու։ Սկիզբն պատմութեանն այնորիկ էր ի շիւնութենէ Սուրբ Աստուածածնի վանացն Հազարըրիբոյ ի 1114 (1665) թվականի Հայոց, որ աւարտեալ լինէր ց1263 (1814 թ.)։ Ոճ պատմութեանն էր քաղմարառ և սակաւմաստ. լորմէ ընտրանօք քաղեալ զետեղեցի յիմում պատմութեան զնիսթս իւրաքանչիւր գլխոյ պաշաճաւոր. և ուրանօր ի մէջ բերի զնորա բանս ի վկայութիւն, ոչ առանց սրբագրութեան թողի, զաւելորդ կրկնաբանութիւնս յապաւելով՝ և գրուն իմաստն պահելով ամբողջ, Ջամենայն շարադասութիւնս նիւթոց այսր պատմութեան՝ ոչ գրեցի առանց քաջ խելամուտ լինելոյ հաւաստի ապացուցութեանց նոցին. քաղելով յաղբերաց՝ և քաղդատելով ընդ այնպիսի հնութեանց՝ գորոց ստուգութենէ ոչ էր մարթ երկրայու. թիւն ինչ ունելաւ։



Իր պատմության Ա հատորի 226-րդ էջում Տեր-Հովհանյանցը նույնպես արձանագրել է.

Չշարունակութիւն պատմութեանս դրեցի հետեւելով բանիցն Տեր Ստեփաննոս պատմաբանի, առեալ ի շորորդդ գլխոյ պատմութեանն սորա՝ ցկէսն հինգերորդ գլխոյն. էջ 49—ց65:

Ավելի ցայտուն զազափար կազմելու համար՝ համեմատական մանրակրկիտ քննության ենթարկեցինք Տեր Ստեփաննոսի ձեռագիր մատյանը Տեր-Հովհանյանցի «Պատմութիւն Նոր-Ջուղայութ» երկհատոր աշխատության հետ: Ստուգումից պարզվեց, որ Նոր-Ջուղայի պատմագիրն օգտվել է Ստեփաննոս

Երեցի ձեռագրի հետևյալ էջերից. 23, 24, 26—30, 49, 65—67, 68—80, 81—108, 111, 112, 115—118, 119—124, 126—131, 132—143, 144—150, 151—160, 161—168, 169—180, 181—192, 193—205, 211—221, 222—227, 228—253, 254, 267—279, 284, 285, 339—351, 353—370:

Այստեղ առաջ բերենք նաև Տեր-Հովհանյանցի «Պատմութիւն Նոր-Ջուղայութ» աշխատության այն էջերը, որոնք նույնությամբ քաղված են Ստեփաննոս Երեցի ձեռագրից. 235, 236, 284, 329, 330, 331, 339, 343, 345, 374 և 375 (Ա հատոր), և 64, 65 (Բ հատոր)<sup>8</sup>:

### 8. ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

17-րդ և 18-րդ դարաշրջանների պատմության էջերն ուսումնասիրելու համար շատ կարևոր է Ստեփանոս Երեցի մատյանի բովանդակության ցանկը, որի ամբողջական պատկերն է հետևյալը.

Ա. Սակս շինութեան վանիցն Աստա-ծածնի:

Բ. Սակս աւերման վանեցն և տառապանացն քրիստոնէից:

Գ. Սակս բառնալու մուղազային:

Դ. Սակս թագաւորութեան Շահ Սուլթան Հոսէնին:

Ե. Սակս ապստամբելոյ աղտանիցն ի թագաւորէն:

Զ. Սակս թագաւորութեան աղտանին և ապստամբ լօռիցն:

Է. Սակս ս[ուր]ջ աջոյն Թոմայի և սքանչելեացն նորայ:

Ը. Սակս գալոյ Յրիտոն խանին ի վերայ աղտանից և կոտորելոյ զազգս հայոց շորս գեօղս:

Թ. Սակս թագաւորութեան Շահ Աշրաֆին:

Ժ. Սակս թագաւորութեան նաւորին և մահու նորայ:

ԺԱ. Սակս ուրանալոյ քրիստոնէիցն՝ ի գաւառն Բուրվարի:

ԺԲ. Սակս ըսպանման նադրին և թագաւորութեան Ատրլ շահին:

ԺԳ. Սակս ապստամբելոյ լօռիցն և աւերման երկրի:

ԺԴ. Սակս զնալոյ Ազաթ խանին ի Փէրի Բամազան:

ԺԵ. Սակս կրկնակի գալոյ Ազաթ խանին ի յԱսպահան:

ԺԶ. Սակս գալու Հասան խանին և սովոյն մեծի:

ԺԷ. Սակս թագաւորութեան Քարիմ խանին:

ԺԸ. Սակս հոսեականի բնութեան Քարիմ թագաւորին և վասն ապստամբ լօռիցն:

ԺԹ. Սակս մահուն Քարիմ խանին և խանդարումն թագաւորութեան նորայ:

Ի. Սակս իշխանութեան Ալի Մուրաա խանին և վասն ապստամբութեան նորայ:

ԻԱ. Յաղագս զնալոյ Ալի Մուրաա խանին ի նամասայ և ըմբոսնումն Զլխնվարին:

ԻԲ. Սակս գալու Ալինազի խանին և զերելոյ կուսիցն:

ԻԳ. Յաղագս զնալոյ Ալի Մուրաա խանին ի Շիրազ և առնել բերքն Շիրազոյ:

ԻԴ. Վասն զնալոյ Ալի Մուրաա խանին ի Թէհրան և վասն մահուն նորին:

ԻԵ. Սակս գալոյ Մահմադ խանի ներքինի ի քաղաքն Ասպահան:

ԻԶ. Յաղագս մեծի նեղութեանցն զորս կրեցին ազգն հայոց և վրաց ի ձեռանէ Մահմադ խանին:

ԻԷ. Վասն գալոյ Մահմադ խանին ի Գեօղն Սանկիբարան:

ԻԸ. Սակս գալոյ Զաֆար խանին ի յԱսպահան և սպանման Բադր խանին:

ԻԹ. Յաղագս գալոյ Մահմաա խանին ի յԱսպահան և դարձն Զաֆար խանին:

Լ. Վասն երրորդ անգամ գալոյ Մահմաա խանին, որ և քշեաց հայոց ազգն որ էին ի գաւառն Բուրվարի, տաքաւ ի Թեհրան:

8. Տեր-Հովհանյանցը ձեռագիր մատյանից մեծքերտումնէր անելիս տեղ-տեղ փոխել է բառերը և լի պահպանել բնագրի հարազատութիւնը:



ԱԱ. Սակս գալոյ Մահմադ խան արապին  
ի քաղաքն Ասպահան, ի վերայ  
Ջաֆար Ղուլի խանին և դարձն նո-  
րայ:

ԱԲ. Յաղազս սքանչելեացն Աստծոյ որ ե-  
ղև ձեռամբ ասոն միոյ Արզան ա-  
նուն:

ԱԳ. Վասն սքանչել[ե]ացն որ եղև ի գեօղն  
Հաղարջրիպ ի խոնարհեալ վա-  
նացն:

ԱԴ. Սակս ազատութեան Ղատամին ձե-  
ռամբ Սրբոյն Սարգսի զօրավարին:

ԱԵ. Յաղազս յայտնելոյ ճգնաւորին որ էր  
ի լեռինն Քէիզոյ:

ԱԶ. Վասն մեծի սովոյն զոր կրեցաք ի  
ժամանակս Մահմատ խանն երբքի-  
նոքն:

ԱԸ. Սակս մահուն Ջաֆար խանին և  
այլն:

ԱԹ. Յաղազս գալոյ Մահմադ խանին ի  
վերայ բերքին Շիրաղոյ և դարձն  
նորայ:

ԱՐ. Վասն խրատ քահանայից և առաջ-  
նորդաց ժողովրդոց:

Խ. Սակս ցորտութեան ս[ուր]ի Աստու-  
ծածնի վանաց եկեղեցոյն:

## 9. ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆԻ ԼԵՋՈՒՆ

Չնայած ձեռագրի լեզուն գրաբար է և  
համեմատ է տեղական և օտար քառերով,  
չնայած և նրան, որ քերականական, տառա-  
կան, կետագրական անհամար սխալներ  
կան, բայց պատմագրութեամբ գրված է  
շատ պարզ, մառնիկ հայերենով և քնդհան-  
րապես կարդալիք է հետաքրքրութեամբ ու  
առանձին հաճելի:

Այլևս ժամանակն է, որ այս արժեքավոր  
պատմագրի թանկագին ձեռագիրն իր ամ-  
բողջութեամբ հանձնվի տպագրութեան, որով-  
հետև դա մի այնպիսի կարևոր աղբյուր է,  
որ իր հիմնական գծերով շատ ուշագրավ է-  
ջեր է լուսարանում ոչ միայն հայ, այլ թի-  
ւորանի, թե՛ վրաց, թե՛ լոռ և թե՛ ադվան ժո-  
ղովուրդների պատմագրության համար:

## 10. ՊԱՏՄԱԳՐԻ ՇԻՐԻՄՐ

Անցեք Սպահանի Փերիա գավառը և կանոյ  
առեք հայաբնակ Հաղարջրիք դյուղի դերեզ-  
մանատանը, ուր հանգչում է պատմագիր

Ստեփանոս Երեցը: Հողակույտի վրա դրված  
է մի անպաճույճ քար, որի ճակատին քան-  
դակված է հետևյալ տապանագիրը:

«ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ԵՒ ԴԱՄԲԱՐԱՆ,  
ԴԱՐԱՊԱՏՈՒԷՐ ՅՈՅԺ ՄԹՈՒԹԵԱՆ,  
ՀՈՂԱԽՇՏԻ ՀԱՆԳՍԱՐԱՆ,  
Ի ՎՃՌԷ ԱՍՏՈՒԱՇՈՒԹԵԱՆ,  
ԴԱՌՆԱԼ Ի ՀՈՂ ՌԻՍՏԻ ԱՌԱՆ,  
Ի ՍԱՀՄԱՆԷՍ ՈՉ ՈՔ ԴԱՌԱՆ,  
ՆԱԽԱՀՈՐԷՆ ՈՐՔ ՍԵՐԵՑԱՆ,  
ԱՍՏ ԱՄՓՈՓԵԱԼ ԾԵՐ ՔԱՀԱՆԱՅՆ  
ՍՏԵՓԱՆՈՍ ԳՈՐԾՈՎ ՈՒՆԱՅՆ,  
ԷՐ ՍԱՅ ՎԱԹՍՈՒՆ ՉՈՐՍ ԱՄԵԱՆ,  
ՈՐ ՓՈԽԵՑԱԻ ՅՈՅՍՆ ԱՄԵՆԱՅՆ,  
Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅԿԱԶ[Ե]ԱՆ  
Ռ.Մ.Կ.Ք. ԼՐՄԱՆ (1813 թ.)»:

## 11. ԱՆՏԻՊ ԷՋԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԵՑԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ստեփանոս Երեցի լեզվի, ոճի և պատմա-  
դրութեան արվեստի մասին ավելի ցայտուն  
դադափար տալու համար, այստեղ նրա  
պատմագրքից առաջ բերենք հետևյալ ան-  
տիպ կտորը:

«ՎԱՍՆ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՆԱԴԻՐՆ ԵՒ  
ՍՊԱՆՄԱՆ ՆՈՐԱ

Եւ եղև յորժամ ախրեաց յԱսպահան  
քաղաքին Քահմազ խանն և Քահմազդուլի  
խանն որ է նազրն ի թուականութեան յԱ-



բամբակն ԲՃԶԹ-ին (1730 թ.) և Նաղրն տե-  
սանէր օր յաւուր Թա՛մազ խանն ի գի-  
նարրունս և ի առասպելաբանութիւնս  
պաղեալ՝ իրամայեաց խորամանկ և օժա-  
բարոյ Նաղրն ալն զօրաց իւրոց սպանա-  
նել զնայ՝ որ և հարին բալիստրաւ՝ զկուշտ  
Թա՛մազ խանին որ ի միւս կշտէն Թա-  
բաննեաց: Եւ յետ սպանման սորայ հան-  
գանակեաց զզօրս իւր ի գնալ ի վերայ  
զօրացն օսմանցոցն՝ ի գաւառն Քրմանշա-  
հու, քանդի զօրքն օսմանցոցն եկեալ էին  
ի գաւառն Քրմանշահուն:

Տեր Ատեփանոսի գրականութեան մեջ ու-  
րույն տեղ են գրավում նաեւ բառարանը,  
«Շարագրանք»ը, «Տաղարան»ը և այլ երկեր:  
Նրա գրած տաղերը նշում են իր բանաստեղ-  
ծական ձիրքի մասին: Այդ ոտանավորներից  
ուրույն արժեք է ներկայացնում «Ո՛րն ող-  
բացում» խորագրով տաղը: Դա Մահմադ  
խանի բռնութիւնների նկարագրութեանն է:  
1875 թվականին նա հարձակվում է Ապա-  
հանի Փերիա գավառի անօդնական, գլուղա-  
ցիների վրա, գրավում է նրանց եզներն ու  
ոչխարները, կողոպտում ցորենի ամբարները  
և ժողովրդի մեծ մասը տարագրում է Պարս-  
կաստանի խորքերը: Ահա՛ տաղի ամբողջա-  
կան պատկերը:

Ծ. Հին ժամանակ պատերազմական գործիք, որով  
նետեր՝ քարեր էին արձակում թշնամու վրա:

## «Ո՛ՐՆ ՈՂԲԱՍՑՈՒՔ

Արդ ո՛րն ողբացում՝  
Ջողով ոչխարսն մեր՝ զոր աւար տոին,  
Թէ այս՝ որ թանկ կարօտ մնացաք,  
Ջամբա՛րսն ցորենոյ՝ զոր կողոպտեցին,  
Թէ այս՝ որ շացի կարօտ մնացաք:

Արդ ո՛րն տուղբացում՝  
Ջարուորա՛յս մեր՝ զոր չնձեցին,  
Թէ այս՝ որ հասկաքաղի կարօտ մնացաք,  
Ո՛րն մորմոքեացում՝  
Ջսա՛յլս մեր՝ զոր այրեցին,  
Թէ այս՝ որ կալի կարօտ մնացաք:

Արդ ո՛րն աշխարհացում՝  
Ջգեղեցկայարմար եկեղեցի՛ս մեր՝ զոր  
հրդեհեցին,  
Թէ այս՝ որ ժամի կարօտ մնացաք:

Արդ ո՛րն տուժեացում՝  
Ջտո՛ւնս մեր՝ որք փուցեալ կան,  
Թէ այս՝ որ բացօթեալ մնացաք,  
Եւ զո՛րն կոժեւում՝  
Ջմեռեա՛յսն՝ որք գիշատեալ կան,  
Թէ դմեզ՝ որք կենդանույն մեռեալ ենք»:

Այս պարզ, բայց սրտառու յոռանալորը  
թանկագին մի վավերագիր է, որն իր բո-  
վանդակութեամբ ցայտուն դադարար է տա-  
լիս Ապահանի Փերիա գավառի դուրացի-  
ների հասարակական-տնտեսական ծանր  
դրութեան և ժամանակի ճորտական վարդի-  
րի մասին:







## ՁԵՐԵԼ՝ՄՈՒՍԱՅԻ ՔԱՐԱՊԱՐՔ՝

Վ

207. Բառասկզբում վ մնում է վ. վարդ — վարդ, վեց — վից, վաթսուն — վաթցուն, վեղար — վիդուր, վառեակ — վառիք, վիգ — վեգ, վաճ — վիճ, վախ — վիխ, վախենալ — վախենիլ, վաղը — վիսրը:

208. Բառամիջում վ մնում է վ. բուրվառ — փրովառ, ժողովել — ժողվիլ — ճողվիլ, դարիվայր — դուրվար, սովորել — սուրվիլ, խոստովանել — խոսողվանիլ, դարիվեր — դուրվիր:

Տեղափոխում է կատարվել սովորել — սուրվիլ քառի մեջ. ր եկել է վ-ից առաջ:

209. Բառավերջում վ մնում է վ. հալ — հուվ, ձով — ձուվ, կով — կուվ, ով — ուվ, բարով — պարուվ:

210. Նրկու ոտար քառերի մեջ, որոնք հալքեն հնչվում են վ-ով, բառասկզբում քարքառում վ դառնում է ք. վառող — բարող (գործածվում է և խիղ), վատքար — բիդար:

Տ

211. Բառասկզբում տ քաղաձայնը դառնում է դ. տեսանել — դիսնիլ, տապակել — դարգիլ, տանել — դանիլ, տալ — դուլ, տուն — դոն, տանձ — դունց, տախտակ — դախդիլ, տանջվել — դանջվիլ, տասն — դուսը, տարի — դարա:

212. Տալ քալը անորոշ դերբայում ունի երկու ձև, որոնց երկուսի մեջ էլ հաճվում կա. տալ — ուղիլ (շփոթել ուտել — ուղիլ-ի հետ), որտեղ սկզբից ավելացել է ու, և կամ

տալ — դվիլ, որտեղ միջամտել է վ քաղաձայնը: Ներկան լինում է ուղիլ ձևից — գուդով, գուդոս, գուդո, կատարյալը՝ դվիլ ձևից — դվա, դվիր, իդօր, դվունք, դվաք, դվեն:

213. Բառամիջում անկախ տ դառնում է դ. հալատալ — ավդիլ, պտուկ — բուլոք, գուտի — կուլա, ուտել — ուղիլ, մատանի — մաղնա, բնտրել — բնդրիլ:

214. Բառամիջում խուլ, թուլ քաղաձայններից հետո տ դառնում է դ, սակայն կան հեպքեր, որտեղ հնչվում է որպես և ք, հատկապես բառավերջում. կուշտ — գ'օշդ (գ'օշք), հաստ — հուսդ (հուսք), հեշտակ — հերշ-դիք (հերշքիք), սխտու — սըխդիւր (սըխ-յիւր), կատաղել — գաղդիլ, յտակ — իւ-դիւք, նստել — նսդիլ (նսրիլ):

215. Բառավերջում ձայնավորից կամ դ քաղաձայնից հետո տ դառնում է դ. կար-կուտ — գ'արգօդ, հոտ — հիւդ, նակատ — չափօդ, մատն — մուդ, պատ — բուդ, հոդուտ — խիդիւդ, աղտ — իւդդ:

216. Առանձին հիշատակության արժանի է տ քաղաձայնի անկումը հետևյալ քառերի մեջ. մտանել — մըննիլ (կատարյալում հանդես է դալիս տ. մդօ), գտանել — կ'ըննիլ (կատարյալում հանդես է գալիս տ. կ'դօ): Այս պարագային կրկնվում է հաջորդ քաղաձայնը:

Բ

217. Բառասկզբում չի պատահում (տե՛ս § 196):

Բառամիջում երկու ձայնավորների միջև ր մնում է ր. աբել — արիվ, աերել — ավիրիլ, շերեփ — շիրիփ, արօր — արուր, երինջ — իրենց, ծարա — ծարուվ, բերել — պիրիլ, բարակ — պարիւք:

1. Եւրոմակված ամսագրի 1952 թվականի մարտի և 1953 թվականի փետրվարի ու հունիսի համարն էրից:



218. Բառամիջում սկզբից կամ վերջից բաղաձայնի պատահելիս Ե մնում է Ե. սըր-բել — սըրփիլ, ներկել — հիրգիլ, սերմն — սիրմ, մարմին — մարմենք, ներկել — նիրգիլ, երկայն — իրգան, հորափայր — հուրփայր, արծաթ — արգուր, երկինք — իրգենք, ե-րազ — իրուն:

Բառամիջի Ե ընկել է. խարչել — խիշիլ, հանապարհ — շամփունք:

219. Բառամիջում և բառավերջում Ե դար-ձել է ռ. մոռենի — մոմինա, քերթել — քիո-թիլ, կրծել — գրոծիլ, երեսուն — յառսոն, բոր — բիռ, սխտոր — սքիտիլ, լիտ — լիդ:

220. Բառավերջում Ե մնում է Ե. փար — փուր, հազար — հագուր, ալիւր — իլիւր, մո-խիւր — մախիւտ, գիշեր — կիշիւր, եղբայր — ախպար, աղբիւր — ախպայր, տագր — դա-կր, աղաւ — արթուր, արօր — արուր:

221. Երկկամն բառը դարձել է իլզամնօփ, Ե — լ՝ անսովոր ձայնափոխությամբ:

## Զ

222. Բառասկզբում ց մնում է ց. ցո-րեան — ցիւրին, ցանել — ցանիլ, ցամա-րել — ցամփիլ, ցած — ցուծ, ցերեկ — ցիրիկ, ցախ — ցիւխ, ցուրտ — ցուղ:

223. Բառամիջում ց մնում է ց. փացալս — փացիւս, հարցանել — հարցընիլ, խնոցել — խնիցիլ, եկեղեցի — գիղիցա, բացութիւն — բացութեն:

224. Բառավերջում ց մնում է ց. հաց — հուց, երէց — իրից, ձոց — ձիւց, կտուց — գոծց, վեց — վից, ցեց — ցից, խնոց — խընից:

225. Անցնիլ բառը դարձել է աննիլ (նց — ս) ըստ Թեոփիլոս համար հանգցնել — անցընիլ բառի հետ:

## Փ

226. Բառասկզբում փ մնում է փ. փայտ — փաղ, փոս — փիւս, փոր — փիւր, փեսայ — փիսո, փնուր — փիդօր, փշուր — փշիւր, փլանել — փիլլիլ, փայտաբել — փաթրիլ, փո-շի — փիշա, փուշ — փօշ, փշուր — փիշօր:

227. Բառամիջում փ մնում է փ. ծեփել — ծիփիլ, տափալ — դափիւր, եփել — իփիլ, խեչեփառ — խըչիփիւր, բափել — բափիլ (կերակուր լեցնել):

228. Բառավերջում փ մնում է փ. քուփ — քոփ, ծափ — ծուփ, խոփ — խիւփ, շերեփ — շիւրիփ, քեփ — քիփ, չափ — չուր, ցովսէփ — փիսիփ:

229. Յուրահատուկ ձայնափոխում է կա-տարվել, քոքափել — քուքվիլ բառի մեջ (փ — վ):

## Ք

230. Բառասկզբում ք մնում է ք. քա-ցախ — քացիւս, քար — քուր, քոյր — քայր, քարոզ — քարուղ, քառասուն — քառսոն, քիթ — քէնք, քեռի — քրաւ, քիշ — քէշ, քսել — քսիլ, քուն — քոն, քան — քրսոն:

231. Բառամիջում ք մնում է ք. քփանել — քոփնիլ, ներքն — նըրքիվ, ներքս — նըրքն, ցամաքել — ցամփիլ, հորափայր — հուրփայր, մորափայր — մուրփայր:

232. Բառավերջում ք մնում է ք, շատ սա-կավազեպ դառնում է ք. քոք — քօք, ցա-մաք — ցամփիւր, միտք — մէդք, աչք — աչլ, նեղք — չիլիք, հրաշք — հրաշլ, երկինք — իրգենք:

## Յ

233. Զերեկ-Մուսայի բարբառում կան ֆ բաղաձայնով սկսող բառեր, որոնք հա-տուկ են բարբառին (տե՛ս «Էջմիածին» ամ-սագիր, 1952 թ. մարտ, էջ 36), իսկ օտար-ներից փոխառյալ բառերի մեջ ֆ մնում է ֆ. ֆրանկ — ֆրանկ, ֆասոն — ֆասոն, շոֆեր — շոֆեր:

## Ոգրականացություն

234. Համեմատելով ձայնափոխների հետ, անմիջապես կարելի է նկատել, որ բաղա-ձայնները շատ ավելի քիչ են ձայնափոխման ենթարկվում, քան ձայնավորները: Բաղա-ձայնների ձայնափոխումը շատ մոտ է կոս-տանդնուպոլսի բարբառին:

Թրթռուն բաղաձայնները (բ, գ, դ, ձ, շ) բառասկզբում երբեմն պահում են իրենց երանգը կամ ստանում են այլ երանգ (պ, կ, գ, տ, ծ, ճ), իսկ բառամիջում և բառավեր-ջում դառնում են թալ (փ, ք, բ, ց, շ): Իրեն-գականները մեծ մասամբ բաղաձայններին տալիս են թրթռուն երանգ:

Ավելի քիչ ձայնափոխման են ենթարկվում ձեքական և ճշական բաղաձայնները (ծ, ձ, ց, ճ, շ, շ), որոնք երբեմն դառնում են սու-լական (գ, ս, ծ, շ):



Բաղաձայնների կորուստը (խառնել — խի-  
շիլ, անկաճել — իյճիլ, կանգճել — գայճիլ  
(ընկել են ր, կ, գ), մեծ մասամբ նրանից է,  
որ ձայնափոխվել են միջին հայերենից, որ-  
տեղ, ինչպես հայտնի է, նույնպես հին հա-  
յերենի այդ ձայնափոխները ընկել են:

Մյուս բաղաձայնների ձայնափոխումները  
շատ հազվադեպ են և նշվել են գլխավորա-  
պես իրենց համապատասխան տեղերում:  
Իսկ առհասարակ բաղաձայնները հիմնակա-  
նում բարբառում պահում են իրենց նրանցը:

#### Ի տ ու լ ու ղ ու ն ն եր

Զծանրանալով անկման, սղման և տեղա-  
փոխման վրա, որոնք ձայնափոխումների  
ժամանակ ի հայտ են գալիս և եղածների  
մասին մեծ մասամբ խոսվել է իրենց հա-  
մապատասխան տեղերում, այստեղ անհրա-  
ժեշտ է ծանրանալ կատարվող հավելումնե-  
րի վրա:

235. Լեռաօին դեպքում պիտք է հիշել, որ  
հաճախ մնում է կամ երբեմն էլ ավելանում  
գրաբարի Բ հոգնակիակերտ մասնիկը. աշ-  
խարհ — աշխուրհ, մարմին — մարմլենհ,

շնորհ — շնիրհ, յոնհ — ունհվա, ածա —  
աձոհ, լի — ըլլահ, բանալի — պալլենհ:

Այս մասնիկը ընկնում է որեւէ հավելման  
դեպքում, բացառությամբ յոնհ — ունհվա  
բառի, որը բարբառում անեղական է:

236. Մի խումբ միավանկ բառեր սկզբից  
կամ բառամիջից որեւէ հնչյուն են ստանում  
հնչման հեշտության համար. շուտ — ուշէդ,  
լալ — ուլիլ, գալ — ուգիլ, տալ — ուտիլ —  
դվիլ, մանր — մունդր, բարձր — պունցր,  
յստակ — իսդիւհ:

237. Լ և ս բաղաձայններով սկսող բառե-  
րը սկզբից մի հենարան են ստանում հնչ-  
ման հեշտության համար. սկեսուր — ըսգի-  
սուր, սպանաճել — ըսրանիլ, սրբել — սր-  
իիլ, լի — ըլլահ, լուացք — ըլվաւցք, լուա-  
նալ — ըլվանիլ:

Այս մասին խոսված է և իրենց համապա-  
տասխան տեղերում:

ՄԱՆՈՔՈՒԹՅՈՒՆ. Իգնատիոս ռաբկալագի ներ-  
կա աշխատությունը բավականին ընդարձակ է: Մենք  
տպագրեցինք այդ աշխատության մի մասը միայն,  
նպատակ ունենալով որոշ ծանօթություն տալ մեր  
բարբառագետ մասնագետներին: ԽՄԲ:







ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ

## Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆՐ



ունիսի 7-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի պատմական տոնի օրն էր։ Վաղ առավոտյան ուրախ տրամադրության մեջ եմ. այդ օր որոշեցի խումբ մը ընկերներով ուխտի կրթալ Ս. Էջմիածին։ Առավոտյան ժամը 9-ին, երգչախումբին արամադրված ավտոբուսը արդեն մեր տան առջև կանգնած մեզ կսպասե։ Անմիջապես ճամբա կելլենք երգչախումբի երկսեռ կազմի հետ։ Բարձր է քաղաքիս տոնական տրամադրությունը։ Ամառնային հրաշալի առավոտներն մեկն է։ Ակառիաներու, թմբկներու և փշաղջիկներու թարմ բուրմունքը լեցուցեր է օդը։ Նահանգյան հրապարակին վրա, Հայաստանի միջազգային ավտոբուսակայանի գարածոն առանյակ ավտոբուսներ և տակսիներ ռմբաբաղաճ մոլորակներու խումբերը կփոխադրեն դեպի Էջմիածին՝ տոնական տրամադրության մասնակցներու համար։

Նրթեկներու հոգեպետը մեծ է։ Մեր ավտոբուսը թաղանի արագությամբ կսահի Հաղթանակի հոյակերտ կամուրջին և շարունակվող ամֆալտայատ ծառուղիներուն մեջն, որոնց աչին ու ձախին կղզիան կարկաշատ առուներ, եզերված սլացիկ քարդիներով և խիտ ոռոգիներով։ Նոր-Կիլիկիային մինչև Էջմիածին երկարող խճուղիին վրա շարանշարան փուլեր են հայրենազարձներու միահարկ և երկհարկանի գեղեցիկ տունները իրենց կսրմորդակ տանիքներով և տնամերձ այգիներով։ Իսկ համայնական կանաչազեղ դաշտերու անհունություններուն ետև հայոց պատմական Մասիսն է, որ հավերժական ձյունը զազաթին, կարծես մեզ կառաջնորդե դեպի Ս. Էջմիածին։ Մեր ավտոբուսներն

կսուրա ճամբուն վրա դտնվող նոր-Կիլիկիայի արվարձանն, ապա կանցնի նարագյուղ, Փարաքար ու Զվարթնոց գյուղերուն ընդմեջն, որոնց հավատացյալ ժողովուրդը նույն պես խումբ-խումբ կաճապարե դեպի վանք։



Ժամը 9.30-ին կհասնինք Էջմիածին։ Ամեն ինչ տոնական ցնծության մեջ է։ Ամեն կողմ դալար ու կանաչ, ծառ ու ծաղիկ։ Օդը հազեցած է ամառնային քաղցր բուրմունքով։ Հյուրասեր Էջմիածնեցին, ալեգարգ ծերունիներ, մինչև մանուկը, մաքուր և կոկիկ հագած, կդիմավորե իր հյուրերը։ Ս. Էջմիածնի վանքին մոտակա հրապարակը իրարու ետև կհասնին տասնյակ ավտոբուսներ և տակսիներ, բերելով մայրաքաղաք նրանն և շրջաններն ու վատավորներու նորանոր բազմություններ։ Այսօր Հայաստանյայց Առաքելական Նկեղեցիի կեդրոն Ս. Էջմիածնի հաստատման ազգային-եկեղեցական տոնն է։ Դեպի Ս. Էջմիածնի Տաճարը տանող ծառուղիին արդեն կլսենք եկեղեցիին զանգակները։ Ինչպիսի՜ անանուն ու քաղցր խոսքեր կարթնցեն այդ զանգերը յուրաքանչյուր հավատացյալ հայու սրտին մեջ։ Հնադարյան Տաճարը իր շրջափակով հանդիսավոր օրվան մը տույալորությունը կուտա։ Ուստի օր է, հայ ժողովուրդի ազգային-եկեղեցական միասնության տուրք օրը։ Եկեղեցիի նկարչազեղ մուտքը, զարդաքանդակ մայր դմբեթով և զեղաքանդակ զանգակատունով, մեզ կպատմե հայ ժողովուրդի ճարտարապետական անցյալ արվեստի մասին, որուն հայակապ նվաճումներն մեկն է կաթողիկե Մայր Նկեղեցին։



Ուստափորներու բազմութիւնը արդեն լեցուցած է Մայր Տաճարը, զամբիթը, բակը, շրջապատը: Երգչախումբը հազիվ կկարողանա ժողովուրդի հոսանքները ճեղքելով հասնիլ մինչև աշակերտական դասը, երգեհոնին քով, իր մնալուն տեղը: Ս. Էջմիածնի դարավոր Տաճարը կշողշողա էլեկտրական ջահերու և պայծառ, տսկեզօծ կանթնադներու լուսին մեջ:

Կակի օրվան հանդիսավոր սուրբ պատարագը: Երգչախումբը հիանալի կերպով վերդե ծնորհուրդ խորինքը: Ներդաշնակ մեղեդիին և եկեղեցիի զանգակներու զոդանքին տակ զամբիթեն համարացալ կհասաշնա պատարագի զերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, Թումանհայ թեմի առաջնորդը, որ ժամանակավոր կերպով հյուր է եկած մեզ մոտ: Սրբազանը լրիվ զգեստավորված է, եպիսկոպոսական խուլըր գլխին ու խաչը՝ ձեռքին, շրջապատված դպիրների և սարկավաղներին: Բուպենիքը կսահին անկատ, մինչ դեպի Տաճար կհոսի ժողովուրդի հոսանքը: Սուրբ պատարագը կշարունակվի սրբապան վեհօրհնամբ և տպավորիչ հանդիսավորութեամբ: Հավատացալ հայ ուստափոր ժողովուրդը սրտեռանդն ու խուլունկ հավատքով կաղտթեն իր պապերու լուսեղեն խորաններուն առջև, անդամ մը և հազորդվելով անոնց ոգիով և հավատքով, անշիջ պահելու համար սրբազան հուրը հայրենասիրութեան, ժողովրդասիրութեան, իր հոգիի խորանին և պատարագի սեղանին առջև: Իշման սեղանին առջևն եմ, հայ քրիստոնյա ժողովուրդին առաջին պատարագի սեղանին առջև: Այստեղ է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչ իր տեսիլքին համաձայն ըստ՝ Բացուց առաջին Ս. Սեղանը և անոր վրա մատուց իր առաջին պատարագը: 1.600 տարիէ ի վեր կանդուն է մնացած Իշման սեղանը, որ հայ ժողովուրդին սրբութունսրբոցն է և այսօր ալ նույն հիշատակի տուր արարողութեան մեջն է: Մեր պապերը, երջանիկ օր մը, իրենց հավատքի և հայրենասիրութեան կրակով, անդամ մըն ալ՝ հրկինքն Աստուածորդին իշեցուցին հայ ժողովուրդի համար, որպիսեղ ինքը՝ Միածինը ամրապնդեր իր աստվածային ձեռքով Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցիի հիմքը, և օրպեսզի Միտունը դժոխաց զնա մի լաղթահարեցնեն: Այսօր ահա տարեդարձն է այդ՝ երջանիկ օրվան:

Անուշաբույր խումբի հետը տարածվեր է ամեն կողմ: Երգեհոնի ընկերակցութեամբ կշարունակվի սուրբ պատարագը, մինչ եկեղեցիի զանգակները կալնտեն օրվան հանդիսութեան պատմական նշանակութիւնը և Իշման սեղանի առջև զերաշնորհ պատարա-

պիչ սրբազանը, ըստկատարած, կաղտթեն, այնպես, ինչպես սողթներ են մեր նախկին վարդապետները: Պահ մը զանգակներու ալիքի նուանդուն կսկսին հնչիլ: Հայոց Վեհափառ Հայրապետը թափորով Տաճար կիջնէ: Խուաներում հավատացալ ժողովուրդը ծովի ալիքներու նման կալնկոծվի: Մինչդեռ թափորը կհասաշնա դեպի Իշման սեղանը, Վեհափառը՝ խաչն ու վաթողիկոսական ասան ձեռքին, սպիտակ, ոսկեհիւս Ժողովարժան կարծեք շուրջադր հագնէ, աչին և ձախին խաչակնքելով ու օրհնելով, խուանում ժողովուրդին մեջն կհասնի Իշման սեղանին առջև իրեն համար հատկացված ոսկեզօծ ըստկաթոնին քով, որուն տոքերուն տակ փռված է արծիւկտրը: Հայտնի է Վեհափառի մուտքը Մայր Տաճար, շրջապատված միաբաններով, սարկավաղներով, բոլորն ալ՝ հագած ամենաթանկագին զգեստներ, ձեռքերին ըռնած խաչեր, բուրվառներ, ավետարաններ, սպասներ: Մերումազարդ Հայրապետը ոտքի կանդնած, երկուդաժողովարժան կհետնի սուրբ պատարագին, անոր շրթները անդադար աղոթքի միտունքներ կարձակեն: Հանդիսավոր պատարագը իր հոգեզմայլ երգեցողութիւններով վթափանց հավատացալ ժողովուրդի հոգին ենթա: Բուրվառներն կրարձարան խումբի կապտագեղ ծվեններ, Տաճարին մեջ ստեղծելով կրոնաբույր մթնոլորտ մը: Կնայիմ Վեհափառն: Որքան տպավորիչ է ալեգարդ Հայրապետի հափշտակված աղոթասացութիւնը: Ան վերացած կաղտթեն, ևս հավատացած նմ՝ իր Հայրենիքին համար, իր հավատացալ ժողովուրդին համար, Հին Կտակարանի մեծ և արդար ճահապետներու հափշտակութեամբ: Անոր պատկանելի հասակին մեջ ևս մարմնացած կտեմեն սլոգ պահուն Լուսավորիչը, Սահակ-Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, Նարեկացին, Շնորհալին... Որքան հոգեզմայլ են անոր աչքերը և ուրախ՝ ի տես իր ժողովուրդի լուս հավատքին, իր Աթոռի զարթոնքին: Ես ալ վերացած եմ իմ հոգիով դեպի անցյալն ու ապագան... Շնորհազարդ քաղղիչ Վազգեն սրբազանի ձայնը ինձ ետ կրերն երազներու աշխարհն: Պատարագիչ սրբազանը կքաղղեն օրվան նշանակալից մեծ սունին մասին: Գարաշոր Իշման սեղանին հնչած իր հմտալից և կուտ խոսքերը հայ հավատացալ ժողովուրդի հոգիին կրոնական և հայրենասիրական հուզումներու պերճարտահայտութիւններն են: Սրբազանը կխոսի ամեն հայու սիրտն, հավաքեն, հայրենասիրութենեն, Անոր մեջ հայ ժողովուրդն է, որ վխտսի և կարտահայտն իր



անսահման սերն ու նվիրվածությունը Ս. էջմիածնին, անոր ալեգարդ ու հայրենասեր Հայրապետին: Այո՛, կմտածեմ ես, էջմիածինը հանդիսացած է հայ ժողովուրդի պարծանքը, անոր ազգային-եկեղեցական միասնության խորհրդանշիչը, երեկ և այսօր, ինչպես և վաղը, հավիտյան:

Սուրբ պատարագը լրանալն փերջ, իջման անդանին առջև հանդիսավոր Հայրապետական մաղթանք կկատարվի: Վեհափառ Հայրապետի շուրջն են գերաշնորհ Վահան և Վաղգեն սրբազանները, երիտասարդ վարդապետները, քահանաները, սարկավազները: Ամբողջ Տաճարին մեջ կթնդա Հայաստանից Առաքելական Եկեղեցիի օրհներգը՝ «էջ Միածինն ի Հօրէ՛» շարականը: Սրբազան, սարսուռ մը կանցնի քոյր հավատացյալներու հոգիին մեջնա: Ոչ մեկ ժամանակ այդ սքանչելի շարականը զիս այնքան չէ հուզեր, որքան այդ պահուն: Հուզումես ես կուգամ երեխայի մը նման...: Կերգե և Հայրապետը, կերգե ամբողջ եկեղեցին իբր մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ մարմին...

«էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց  
ընդ նմա,  
Ձայնը հնչեցին սանդարամետք անդնդոց:  
Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի:  
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ  
արքային:

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ:  
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի  
Հայաստան աշխարհի:

Եկեղեցին լրանալն փերջ երկար ժամանակ ևս այդ օրվան հանդիսության տպավորություն տակ կմնամ, մինչ ժողովուրդը անընդհատ հոսանքով կմտանա Վեհափառին՝ համբուրելու համար անոր սուրբ խաչն ու Աչը: Հետո Վեհափառը թափորով կառաչանորդվի Վեհարան, շրջապատված հավատացյալ ժողովուրդի հոծ բազմությամբ, որուն հայրենասեր ու հավատացյալ Հայրապետը կուսա իր հայրական օրհնությունները:

Այդ օրը իմ կյանքի ամենաներշնչելի ու հավետ ամբողջական օրերն մեկը կ'ոնա իմ հիշողության մեջ:







## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«ՆԻԴԵՐՆԵՐ-ՍՈՒՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 14-ից մինև 17-ը ներառյալ Հայաստանում հյուր եղավ «Նիդեռլանդներ» ՍՍՌ-Մ ընկերության ղեկավարին, Դելեգացիայի ղեկավար Յան Վան Ջեզելներ հայտարարեց հետևյալ տպավորությունները.

— Մենք տեսանք ազատ, ծաղկող, հարուստ Հայաստանը, գեղեցիկ ներկա և մեծ ապագա ունեցող երկիրը, Հայ ժողովուրդը իրականացրել է իր երազանքը, նա ազատ ու ինքնուրույն է դարձել, Այն ինչ մենք տեսանք Հայաստանում, լի կարող չհուզել մարդու սիրտը, Ամենից առաջ ցանկանում եմ խոսել Երևանի՝ «Նեսպուրիկայի վեհաշուք մայրաքաղաքի մասին, Ասում են, որ դեռ վերջերս դա կավաշեն տների մի փոքր քաղաք էր աղքատ բնակչությամբ, որ չուներ մարդկային կյանքի տարրական հարմարություններ, Պարզապես դժվար է հավատալ դրան, երբ անցնում ես ընդարձակածավալ տեղիտեղիայում տարածված գեղեցիկ քաղաքի փողոցներով ու պողոտաներով, երբ տեսնում ես հոյակապ պուրկոտաները, բազմահարկ տները, թատրոնները, բազմաթիվ ուսումնական հաստատությունները, մոնումենտներն ու հաշարձանները, ծաղկող այգիները, երբ գտնում ես, թե ինչպիսի բուռն ու նուանդուն կյանքով է ապրում այդ մեծ քաղաքը, Բայց մեզ ամենից ավելի ապշեցրեց շինարարության թափը Երևանում:

Սովետական Հայաստանում շատ կան հիանալի կոպտուրական հիմնարկներ, Ահա, օրինակ, Մատենադարանը, Մարդկային մտքի ինչպիսի՝ ապշեցուցիչ զանազան:

Հայաստան կատարած մեր այցելությունը երջանիկ պատահմունքով զուգահեռեց հայ ժողովրդի կոպտուրական կյանքի կարևոր իրադարձությանը՝ Հայկական ֆիլհարմոնիայի համերգային դահլիճի բացմանը, Այդպիսի դահլիճ ունեն եվրոպական պետությունների ոչ բոլոր մայրաքաղաքները, Մենք նույնիսկ երևակայել չէինք կարող, թե նրանք կուլտուրայի իսկական պալատ, որը հիացմունք է պատճառում իր գեղեցկությամբ և հույակապությամբ, Բայց ամենանշանակալիցն այն է, որ այդ համերգային դահլիճը, ինչպես նաև Երևանի մյուս մոնումենտալ կոնսերտները, իրենց վրա կրում են ազգային արվեստի ինքնատիպությունը, որովհետև Հայաստանի ճարտարապետությունը բեղմնավոր կերպով օգտագործում է իր հին ճարտարարվեստի հարուստ ժառանգությունը:

Հեռանալով Սովետական Հայաստանից, հայ ժողովրդին ցանկանում ենք նոր հայտնություններ:

(229)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 21 մայիսի 1953 թ.)



## ԱՐԳԵՆՏԻՆՅԱՆ, ԲԱՆՎԱՐԱԿԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 15-ից մինչև 21-ը Հայաստանում հյուր եղավ արգենտինական բանվորական դելեգացիան։ Հյուրերը եղան ռեսպուբլիկայի դիտակն և ուսումնական հիմնարկներում, արդյունաբերական մի շարք ձեռնարկություններում և մոտիկից ծանոթացան ռեսպուբլիկայի աշխատավորների կյանքին։ Դելեգացիայի ղեկավար Ատոս Ֆավան գրավոր հայտարարություն է թողել, որի մեջ ասվում է.

— Մենք յայն հնարավորություն ստացանք ծանոթանալու ռեսպուբլիկայի կյանքին։ Այդելեգինք կուստուրական հիմնարկներ և համոզվեցինք, որ հայ ժողովուրդը հասել է կուստուրական մեծ պրոգրեսի։ Հանրային գրադարանը, որը 1921 թվականին ունեցել է

40.000 գիրք, այժմ ունի 2.736.000 հատոր և հանդիսանում է ժողովրդական մասսաներին գրքերի մատչելիության վկայությունը։

Դելեգացիայի անդամներին հիացմունք սպասառեցին հայ կնոջ կյանքի ու աշխատանքի պայմանները, կառավարության անդու հոգատարությունը երեխաների նկատմամբ։

Մենք մեր ջերմագին շնորհակալությունն ենք հայտնում Հայաստանի պրոֆմիությունների ղեկավարներին ու ժողովրդին՝ նրանց ուշադրության ու հյուրասիրության համար, և մեզ հետ տանում ենք մեր ժողովրդին ուղղված նրանց ջերմ ողջույնը։

(229)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 29 մայիսի 1953 թ.)

## ՅԱՊՈՆԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հինգ օր Սովետական Հայաստանում հյուր եղավ յապոնական կանանց դելեգացիան։ Հունիսի 30-ին, մեկնելուց առաջ, հյուրերը Հայկական հեռագրակալ գործակալության թղթակցին հաղորդեցին ռեսպուբլիկայում իրենց ստացած տպավորությունները։

— Հայաստանի աշխատավորների սիրելիությունը, սրտագին ընդունելությունը, հյուրասիրությունը, — ասացին նրանք, — բարխացրին և հիացմունք պատճառեցին մեզ, օգնեցին կարճ ժամանակում շատ բան տեսնել ու հասկանալ։ Մենք շփվեցինք մեզ համար մինչև այժմ անծանոթ կյանքի ու կենցաղի։ Այնքան շատ են մեր տպավորությունները, որ պարզապես դժվար է պատմել ամեն բանի մասին։

— Մենք եղանք Վերին Արտաշատ գյուղի կուստեսությունում, — ասում է դելեգացիայի ղեկավար Բոտե խամադան, — եղանք Արդնի կուրորտում, մանկական կլինիկական հիվանդանոցում, գրույց ունեցանք Հայկական ՍՍՌ առողջապահության մինիստրի հետ, գիտեցինք նրանի տեսարժան վայրերը, ծանոթացանք մանկական մի շարք հիմնարկների աշխատանքին, դիտեցինք մի ներկայացում՝ օպերային թատրոնում, «Սովետական Հայաստան» ֆիլմը, ներկա եղանք Հայկական երգի ու պարի անսամբլի ելույթներին, որոնք վառ կերպով արտացոլում են հայկական ինքնատիպ արվեստը։ Մեզ մոտ, Յապոնիայում, ևս շատ գրքեր էի կարդացել սոցիալիզմի

մասին, տեսական գիտելիքներ ունեի այդ ապարեքում։ Ահա ահեղ, ինչ տեսանք ես և դելեգացիայի մյուս անդամները Հայաստանում, սոցիալիզմի իդեալների մարմնացումն է առօրյա կյանքում։ Ամենից առաջ ես ցանկանում եմ խոսել մարդկանց նկատմամբ ցուցարբերող ուշադրության մասին։ Մարդու մասին Հայաստանում մտածում, հոգ են տանում։ Հիացմունք է պատճառում այն, թե ինչպես պետությունը իր բժշկական բազմաթիվ հիմնարկների միջոցով հետևում է տղամարդկանց, կանանց, երեխաների առողջությանը։ Որդնի կուրորտում հանդստանում են Հայաստանի շարքային աշխատավորներ, հասարակ մարդիկ։

Որքան ուժեր ու միջոցներ են ծախսվում երեխաների առողջությունը պահպանելու համար։ Դա կուրախացնի յուրաքանչյուր մոր սիրտ, որտեղ էլ որ ապրելու լինի նա և ինչով էլ որ զբաղվելու լինի նա։

Դելեգացիայի անդամ, յապոնական նշանավոր կին նկարիչ Ակիսմատսու Մասում է.

— Արտասովոր արագությամբ է կառուցվում Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը։ Ուշագրավ են Հայկական ճարտարապետության ալգային կոլորիտը, շինարարական նյութերի բազմազանությունը, նրանց դեզիգի գույներն ու երանգները։ Հիացմունք են պատճառում փորագրությունների բազմազանությունը, դրվագների ինքնատիպությունը։ Սովետի խիսկական դարձ է Բ. Վ. Ստալինի



մոնումենտ-քանդակը: Մենք տեսանք սքանչելի քանդակային կերտվածքներ, որոնցով արտահայտված է ժողովրդի սերը դեպի ռեյուցիայի առաջնորդները:

— Ձեզանում, Սովետական Հայաստանում, աճում է հիանալի երիտասարդություն, դուք ունեք պարմանայի կենսության, զվարի մանուկներ, — ասում է Օգայդո քաղաքի քուակուհի՝ տնային անտեսուհի Սադուկ Ադասավախան: — Մենք եղանք քաղաքային պիոներական մի քանի ճամբարներում: Ինչ-

ժանոթացել էին Սովետական Հայաստանում եղած ժամանակ:

Տոկիո քաղաքի բնակչուհի՝ գործազուրկ տեղատիրագործ Ֆուշիկո Միյազին հուզմունքով ասում է.

— Երևանի կերովի անվան դործարանի բանվորուհիներին մեկի առումը մենք մտանք սյն պահին, երբ նա գործարանից եկել էր հատկապես այն նպատակով, որպեսզի կերակրեր իր կրծքի երեխային: Սովետական կանայք, ազմիստարացիայի թույլտվու-



Յապոնական կանանց պատմիրակությունը Երևանի օդանավակայանում

պիսի՝ ուրախություն է տիրում այնտեղ, որքան կենսախիղճ է հրեխանների առօրյան: Մեծագույն հրճվանք են պատճառում երեխաների գեղարվեստական ինքնագործունեությունը, անբռնազրոսիկ կերպով պարելու, արտասանելու իրենց կարողությունը: Երևանի մանկական երկաթուղում մենք բերկրառիթ հանդիպումներ ունեցանք երեխաների՝ տղաների և աղջիկների հետ, որոնք մանկությունից սկսած ընտելանում են անեղծագործական աշխատանքին:

Դեկտեմբերի մյուս անդամները պատմում են բանվորների ու կուտնտեսականների կյանքի ու աշխատանքի մասին, որոնց հետ նրանք

խամբ, այդ նպատակով օգտվում են երկարատե ընդմիջումներից: Ի դեմս այդ բանվորուհու ես տեսա երջանիկ մի մարդու, որը խորապես շահագրգռված է խաղաղության պահպանմամբ: Այդպիսի մարդկանց թիվը Սովետական Միությունում միլիոնների է հասնում: Նրա արտաքին վերաբերմունքի, հանգստության մեջ արտացոլվում էր սովետական կնոջ կերպարը, որը վստահ է իր ուժերի և իր ապագայի նկատմամբ:

Արտաշատի շրջանի Վերին Արտաշատ գյուղում դեկտեմբերի անդամները ծանոթացան կուտնտեսության էկոնոմիկային, սոցիալատական դաշտերի աշխատավորներին:



— Լավ են ապրում այստեղ մարդիկ: Մենք եղանք կոլտնտեսականների տներում, — պատմում է Իսոն համադան, — հայ գյուղացիների կյանքը տոգորված է նորի լույսով. տղամարդուն հավասար աշխատող գեղջկուհին քնքրությամբ և հմտությամբ հոգ է տանում իր օջախի մասին: Մարդկանց այդ խաղաղ կյանքը երկար ժամանակ կմնա մեր հիշողության մեջ:

Ցապոնական կանանց դեյքացիան Երևանի Օպերայի և Բայետի թատրոնում ներկա գտնվեց «Դավիթ-Քեկ» օպերայի ներկայացմանը:

— Մեզ վրա ուժեղ տպավորություն թողեցին, — ասում է դեյքացիայի անդամ Էնդոն, — բնագրության գունազնությունը, նրանում իրենց մարմնացումը գտած ազգային բնորոշ առանձնահատկությունները: Արտիստները երգում են մեծ ավելումով, բուռն խաղաղապանությամբ:

Դեյքացիան այցելեց նաև Հայաստանի արդյունաբերական ցուցահանդեսը, Շահումյանի շրջանի մետաքսյա գործվածքների ֆուրնիկան, եղավ Երևանի ժերարատո գործարանում:

— Ամենուրեք, — վերջում ասացին դեյքացիայի անդամները, — մենք տեսանք խաղաղության ջերմ ձգտմամբ համակված հայ ժողովրդի բեղմնավոր աշխատանքի արդյունքները: Հայ խնամելի գեղեցիկի, բանվորների և կոլտնտեսականների հետ ունեցած կենդանի շփումը մեզ համոզեց, որ բոլոր այդ մարդիկ համարձակ կերպով են նայում ապագային, հանգիստ աշխատում հանուն իրադարձության:

Վերադառնալով Ցապոնիա մենք մեր ժողովրդին կպատմենք այն ամենի մասին, ինչ տեսանք Հայաստանում, աշխատասեր հայ ժողովրդի բերկրալից կյանքի, հայ կանանց մասին, որոնք տղամարդկանց հետ ձեռք-ձեռքի տված կառուցում են այս նոր կյանքը: Հյուրընկալ Սովետական Հայաստանում անցկացրած օրերը բնդմիշտ կմնան մեր հիշողության մեջ:



Հունիսի 30-ին յապոնական կանանց դեյքացիան Երևանից մեկնեց Մոսկվա:

(ՀՀԳ)

(ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, 2 հուլիսի 1953 թ.)

## ԼԵՀԱԿՈՆ ԽՈՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերջերս Հայաստանում էր Լեհական Ժողովրդական Ռեսպուբլիկայի ճարտարապետների դեյքացիան, որը ՍՍՌՄ Սովետական ճարտարապետների միության հրավերով հյուր է եկել Սովետական Միություն:

Հայաստանից մեկնելուց առաջ դեյքացիայի անդամներ Յան Զախվատովիչը և Ելենա Սիրկուսը Հայաստանում ստացած տպավորությունների մասին թողեցին իրենց գրավոր դիտողությունները մամուլում հրապարակելու համար:



Հայաստան ժամանելիս մենք գիտեինք, որ մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական ՌԽՀ ռեուլուցիան, Երևանը հետամնաց քաղաք էր. գեոազանդապես միհարկանի, կավաշեն և հեղ ու խղճով, լսալահատակված փողոցների քաղաք:

Միայն Սովետական իշխանության գահափառո, — ասել է րեկեր Ստալինը, — Հայաստանին տեղեց խաղաղություն և ազգային փերածնդի հնադարձություն: Ազգային առ մեռածնուդո նպաստեց էկոնոմիկայի լսեանված զարգացմանը: Նրա բազայի վրա

ծաղկեց հայ ժողովրդի մեծ կուլտուրան, որ ստեղծվել է հաղթարամյակների բնթացքում և սերնդե-սերունդ պահպանվել հին ձեռագրերում, մանրանկարչական գործերում, խաչքարերի վրա, ժայռափոր տաճարներում և ճարտարապետության այլ հուշարձաններում: Այդ դարավոր կուլտուրան, որը ոչնչացնելի են կարողացել ո՛չ թշնամիների ասպատակությունները, ո՛չ ստրկացումը, ո՛չ բնակչության անտղորմ կոտորածները և արտաքսումները, ո՛չ ազգային ճնշումն ու տնտեսական շահագործումը, — այժմ դարձել է ամբողջ հայ ժողովրդի իսկական կուլտուրան:

Եվ այսօր նրա եռուն ու բազմահարուստ կյանքի բոլոր դրսևորումների մեջ մենք պարզ տեսանք, թե ինչպես երկրի հետամնացություն ու թնության դաժան ուժերի դեմ մղված պայքարում իր ուղին է հաղթել սոցիալիստական հիմնական էկոնոմիկական օրենքը:

Սովետական մարդիկ սանձել են Հրազդան գետը, կառուցել հզոր հիդրոէլեկտրակայաններ, ջուր տարել տափաստանային, ամառի վայրեր, դրանք փերածելով ալգեստանների, ծաղկող պարտեզների և բամբակի պլանտացիաների:



նրբեմնի շքավոր հայ դուղացին դարձել է հարուստ կոլտնտեսությունների ունեորանդամ։ Նրա նյութական կյանքի մակարդակի բարձրացման հետ միաժամանակ աճել են նրա կոլտնտեսական պահանջմունքները և դրանց բավարարման աստիճանը։

Լեհական ճարտարապետների դելեգացիան հայ կոլտնտեսականների հանդիպեց թե՛ գնդեցիկ Արզնի կուրորտում, թե՛ «Դինամոսի ստադիոնում», թե՛ Երզնի ու պարի ժողովրդական անսամբլի համերգի ժամանակ՝ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում։

Մենք այցելեցինք Գառնիի ամրոցի և հեփանոսական տաճարի ավերակները, Զվարթնոցը, Էջմիածինը, Հոփսիսի մեծ վանքը, Գեղարդի ժայռափոր տաճարները։ Մենք տեսանք Մատենադարանում պահպանվող հին ձեռագրերը, հիմնովի մանրանկարչական դրվագներով։ Մեզ հուզեց այն ջերմ վերաբերմունքը, որ ցուցաբերվում է այդ ձեռագրերի՝ ասես կենդանի ու հարազատ էականների նկատմամբ։

Այդ սքանչելի հուշարձանները աղբյուր են դարձել հայկական նոր արվեստի ու ճարտար-



Լեհական ճարտարապետների պատվիրակությունը Գեղարդում

Այդ երեկո մեզ վրա անշնչելի տպավորություն թողեցին շենքի ճարտարապետական հիանալի զարդերը, ջերմաշունչ երգերն ու պարերը և լեփ-լեցուն դահլիճում ներկա գտնվող կոլտնտեսականների մեջ արվեստի առաջացրած կենդանի արձագանքը։

Մեր հիշողության մեջ անմոռանալի կմնան Սովետական Հայաստանում անցկացրած բոլոր օրերը, հայկական ճարտարապետության հուշարձանները, Հայաստանի սովետական նոր ճարտարապետությունը և նրա ստեղծողներ հայ ճարտարապետները։


Դապնաության համար, որոնք տուգորված են նոր, սոցիալիստական բովանդակությամբ։ Այնպիսի հիանալի կերտվածքներ, ինչպիսիք են ակադեմիկոս Ալ. Թամանյանի նախագծած՝ Հայկական ՍՍՌ կառավարական տունը, Օպերայի և բալետի թատրոնի շենքը, որ լրացվել և ավարտվել են նրա որդու՝ Գ. Թամանյանի կողմից, Մ. Գրիգորյանի նախագծով կառուցված՝ պարտիայի կենտկոմի շենքը, Գ. Աղաբաբյանի նախագծով կառուցված սառցարանը և ծածկած շուկան, Վերա-րատա տրևատի գինու գործարանը, որ կառուցվել է Ռ. Իսրայելյանի նախագծով և Երեմյանի մի շարք նոր շենքեր հանդիսանում են



Հայկական ճարտարարվեստի ժառանգության ստեղծագործական օգտագործման նմուշներ, Լեհական ճարտարապետների դելեգացիան խորապես հաղորդակից դարձավ սովետական ճարտարապետության նվաճումներին և ստեղծեց հարգանքի ու քաղցրամտության զգացմունքներով համակվեց նրա կերտողների՝ հայ ճարտարապետների նկատմամբ: Դրանք խոշոր վարպետներ և հիանալի մարդիկ են: Նրանք բոլորն էլ աճել և ստեղծագործարար հասունացել են Սովետական իշխանության տարիներին, Ձեռք ազգային և բովանդակու-

հանջմունքներն ու հոգսերը, նրա իղձերն ու յուշերը: Այդ պատճառով էլ Երևանի ճարտարապետությունը, նրա լավագույն գործերը այնպես մոտ ու հասկանալի են յուրաքանչյուրի համար:

Նրա խորհրդանիշը և նրա նոր գեղեցկության ժամնալավագույն արտահայտությունն է մեծ Ստալինի մոնումենտ-քանդակը, որ բարձրացվել է Քանաքեռի բարձունքի վրա: «Հաղթանակ» դրոսագույն: Այդ մոնումենտի նարտարապետ Բ. Իսրայելյանը մեզ ասաց,



Լեհական ճարտարապետների պատվիրակությունը Գառնիում

թյամբ սոցիալիստական պրոլետարական կուլտուրայի լենինյան-ստալինյան ֆորմուլան օգտագործել է ամեն նրանց սրտերին ու մտածողությանը: Նրանցից յուրաքանչյուրը խորապես տառապանքով և ջերմորեն սիրում է իր հերոսական ժողովրդի հինավուրց կուլտուրան և ամբողջ մարդկության պուլսուրան: Մեզ հուզեց այն, թե նրանք որքան լավ դիտեն և հարգում են մեր՝ Լեհական կուլտուրան: Նրանցից յուրաքանչյուրը իրեն զգում է հայ ժողովրդի զավակ, հասկանում և ճանաչում է նրա բնավորությունը, նրա պա-

հմար նախագծում էի այդ հուշարձանը, ևս մտածում էի այն մասին, որ սրարտավորվում է մի քարի մեջ մարմնավորել իմ ամբողջ ժողովրդի խոհերն ու հույսերը և նրա անսահման սերը ընկեր Ստալինի հիշատակում: Այդ պործում ինձ օգնեցին մեր ժողովրդավան վարպետները:

ՅԱՆ ԶԱԽՎԱՏՈՎԻՉ  
ԵԼԵՆԱ ՍԻՐԿՈՒՍ

1 հուլիսի 1958 թ.

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 11 Յուլիսի 1958 թ.)



## ԴԱՆԻԱ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԴԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Օգոստոսի 11-ից մինչև 14-ը Հայաստանում որպես հյուր գտնվում էր Դանիա-Սովետական ընկերության գելեզացիան, որը ՍՍՌՄ է ժամանել Արտասահմանի հետ կուլտուրական կապի համամիութենական ընկերության հրավերով:

Դելեզացիայի Մոսկվա մեկնելուց առաջ, Հայաստանի հեռագրական գործակալության թղթակիցը նրա ղեկավար Կրիստիան Կորսգաարդի հետ ունեցավ զրույց, որի ընթացքում վերջինս հայտարարեց.

— Մեր գելեզացիան Հայաստան այցելեց



Դանիական կանանց պատվիրակությունը Էջմիածնում

Դելեզացիայի անդամները ծանոթացան Երևանի տեսարժան վայրերին, եղան Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի կուլտնոտեսությունում, այցելեցին պատմական վայրերը՝ Էջմիածինը, Զվարթնոցը, Կարմիր լուրը:

Ոչ պատահական կերպով, Մեր հայրենիքում մենք շատ ենք կարդացել հայ ժողովրդի հիանալի պատմության մասին, ծանոթ էինք ձեր ռեսպուբլիկային գրականության միջոցով: Մենք միշտ էլ բարյաղակամորեն ենք փնտրելու Հայաստանին, որովհետև Դա-



նիան ևս փոքր երկիր է։ Սակայն մենք մեծ ցանկություն ունենք սեփական աշքերով լեռանելու և իմանալու, թե ինչպես է ապրում այն ժողովուրդը, ինչպես է նա կառուցում իր նոր կյանքը։

Մենք լիակատար հնարավորություն ստանանք ժանոթանալու այն ժողովրդի կյանքին և աշխատանքի պայմաններին, շփվելու մեծ թվով մարդկանց հետ։ Մի քանի օրվա ընթացքում մենք ստացանք շատ տպավորություններ, սակայն օրերը այստեղ թռչում են ինչպես րուպեններ և մենք միայն ափսոսալ

ներ. պալատներ. տաճարներ։ Սակայն երբեք նրա շինարարական տաղանդը և կարողությունները չեն դրսևորվել և դա այժմ մեզ հասկանալի է՝ չէին կարող դրսևորվել այնպես, ինչպես սովետական կարգերի օրով։ Իրա ամենապերճախոս վկայությունը, ամենահամոզեցուցիչ ապացույցը հանդիսանում է այսօրվա նրանք։

Հայ ժողովուրդը ոչ միայն հաջողությամբ կառուցում է նորը, այլև խնամքով պահպանում է հնության հուշարձանները։ Մենք մեծ հիացմունքով համոզվեցինք այդ բա-



Դանիական կանանց պատվիրակությունը էջմիածնի Մայր Տաճարում

կարող ենք, որ Հայաստանում մնացինք այդքան կարճ ժամանակ։

Նրան ժամանելու առաջին իսկ օրը մեր դելեգացիայի անդամները հետաքրքիր շրջագայություն կատարեցին քաղաքում։ Մեր ուշադրությունը գրավեցին ձեր մայրաքաղաքի հիանալի պլանավորումը, նրա լայն փողոցները, ընդարձակ հրապարակները, Անշնչեյի տպավորությունն են թողնում բնակելի և հասարակական նոր մոնումենտալ շենքերը, որոնք երեսպատված են հիանալի գունավոր տուֆ քարով։

Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում ստեղծել է ճարտարապետության բազմաթիվ կոթողներ, քաղաք-

նում, երբ դիտում էինք էջմիածնի և Զվարթնոցի հինավուրց տաճարները և քաղաքացիական շենքերը։ Դեպի վաղեմի ժամանակների հիանալի հուշարձանները ունեցած այդ հոգատար վերաբերմունքը ավելի լավ նաև դարձավ մեզ համար, երբ այցելեցինք հին ձեռագրերի Պետական գրապահոցը՝ Մատենադարանը, որտեղ մեծ, մասնավորակիտ աշխատանք է կատարվում, ուշադիր կերպով ուսումնասիրվում են հազվագյուտ ձեռագրերը, հին կուլտուրայի փառաթղթերը։ Եվ սրա հետ միասին որքան բուռն կերպով ռեսպուրիկայում ծաղկում է ժամանակակից կուլտուրան, գիտությունը, արվեստը։ Մենք առիթ ունեցանք ներկա



գտնվելու Պետական երգի-պարի անսամբլի համերգին: Այդ ինքնատիպ, անկրկնելի արվեստի նմուշները մեզ բոլորիս արտասովոր ուրախություն պատճառեցին: Մեր դելեգացիայի անդամները շրջում էին խանութները և զննում հայկական ազգային հիանալի երգերի պլաստիկաները:

Մեծ գոհունակությամբ մենք դիտեցինք Հայաստանի գինեգործական խոշորագույն ձեռնարկությունը՝ «Արարատ» տրեստի նրեանի գինու կոմբինատը: Պա արտադրության բարձր կուլտուրայի ձեռնարկություն է: Ամենուրեք այստեղ նկատվում է հոգստարություն: դեպի աշխատավոր մարդը:

Դելեգացիան հնարավորություն ստացավ ծանոթանալու նաև հայկական գյուղի կյանքին: Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի կուլտնտեսությունը կատարած մեր այցելությունը հավանաբար ամենաուժեղ տպավորությունը թողեց մեր դելեգացիայի անդամների վրա: Գյուղացիները սիրալիր կերպով լեզ ծանոթացնում էին իրենց հանրային տնտեսության հետ և այն, ինչ առաջին հերթին մեր ուղադրությունը գրավեց այդտեղ. դա գյուղատնտեսական պրոցեսների մեք-

նայացումն է, գյուղացիների աշխատանքի պայմանների թեթևացման նկատմամբ ունեցած հոգատարությունը:

Այժմ մեզ համար ակնհայտ է Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի վիթխարի վերելքը: Եվ մեզ պարզ է, որ հայ ժողովուրդը ընթանում է ծաղկման ճանապարհով շնորհիվ այն բանի, որ նա կարող է օգտվել այն բոլոր րարիքներից, որը տալիս է ամբողջ սովետական երկրի սուսադրիմությունը:

Մենք հեռանում ենք Հայաստանից, — առաջ վերջում դելեգացիայի ղեկավար Կրիստիան Կորսդաարդը, — դեպի տաղանդավոր հայ ժողովուրդը ունեցած բարձր հարգանքի զգացմունքով, ժողովուրդ, որը պատմական կարճ ժամանակամիջոցում կարողացել է այլպիսի բարձրության հասցնել իր տնտեսական և կուլտուրական զարգացումը: Մենք հեռանում ենք նրա սրտագին հյուրասիրության նկատմամբ ունեցած շնորհակալության զգացմունքով:

(ՀՀԳ)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 16 օգոստոսի 1953 թ.)







## ԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՈՐՄԱՆՈՅԸ



Եղեցիկ է Արարատյան դաշտավայրը մանավանդ գարնանը, երբ ծաղկում են այգիները, երբ կանաչին են տալիս դաշտերը, Փարթամ ծառաստանները, խաղողի ընդարձակ այգիները, խնամքով մշակված բամբակի դաշտերը մի ուրույն գեղեցկություն և հմայք են տալիս մեր Հայրենիքի այս մասին: Ավտոմեքենան ժամերով կարող է սլանալ լայն ասֆալտապատ ճանապարհով և շուրջն ամենուրեք նույն կանաչ բուսականությունն է, Բայց ահա վերջանում է կանաչ գոտին, շեպի ձախ նրբում են մերկ, արևից փանծված շիկավուն բլուրներ: Սա՝ դաշտավայրի միանգամայն հակառակ պատկերն է, տխուր, անհրապույր պատկեր: Մերկ բլուրների ստորոտում ընկած է Արարատյան դաշտավայրի մեծ գյուղերից մեկը՝ Ղարաբաղլարը: Գյուղն ամբողջովին թաղված է այգիների մեջ, բայց շրջակայքի բլուրները գուրկ են կանաչից: Սակայն բավական է անցնել անհրապույր բլուրների շարքը և ահա բացվում է մի այլ տեսարան. ձորի միջով սկսում է անտառ, որը տարածվում է լեռնալանջերով դեպի հեռուն:

Այդ ի՞նչ անտառ վե՛ այս շոր, խոժոռադեմ լեռների գոտում: Ինչպե՞ս է այն գոյացել, ո՞վ է տնկել ու աճեցրել:

Տեղացիները այդ ծառաստաններն անվաճում են ճնոսրովի անտառա:

Հիմ պատմությունն ունի այդ անտառը:

Հայոց հոսքով Բ թաղավորը (330—338 թ. թ.), որի օրոք հիմնվել է Դվին մայրաքաղաքը, ի ընե սիրահար էր տրսի: Նա իր

մայրաքաղաքից ոչ հեռու, Ազատ գետի հովտում, տնկել է տալիս արհեստական անտառներ և դրանք բնակեցնում վայրի կենդանիներով ու թռչուններով:

4-րդ դարի պատմագիր Փավստոս Բյուզանդացին այդ մասին վկայում է.

«Եւ ետ հրաման թագաւորն, զօրավարին իւրոյ [Վաշէի] հանել խաշար յաշխարհէն րազում, և բերել զվայրենի յաղին մայրեաց և տնկել զայն յԱյրարատեան դաւառին, և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամորի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կա ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արաաշառու, զգնտն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղինն: Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի: Եւ միւս ի մայրեացն չէղէդնաբերանի՝ ի նմանէ ի հարաւակոյս յցին զդաշտն կաղնատուն՝ տնկով. և մոչեցին զանուն նորա հոսքովակերաւ: Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս և գերկոսեան տնդիսն պարսպեալ փակեցին և ոչ կցեցին ի միմեանս վասն պողտուալի ճանապարհին: Եւ [մայրիկն] աճեաց րարձրացաւ. և ապա զամենայն էրէս, և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և լնուլ զքաղաքումն, զի լիցին նոցա տնդիք որոց զբոսանաց ուրախութեան թագաւորութեան նորա: Եւ զօրավարն Վաշէ կատարէր վաղվադակի զասացեալսն արքայի» (Փավստոսի Բուզանդուղոյ Պատմութիւն Հայոց, դպր. Գ, գլ. Ը):



(«Ենթադրյալ» տվեց թագավորն իր «Վալեն» գործակալին՝ աշխարհից բազմաթիվ մշակների հավաքել, անտառներից վայրկյան հանել ու բերել տնկել Այրարատյան գավառում, սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչև Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Գվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես մերի տնկեցին գետի փնթաքցով դեպի ներքև, մինչև Տիկնուշի ապարանքը: Նա այս մերին կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով: սրա անունն էլ գրին խոտովակերտ: Նույն տեղում շինեցին, նաև արքունական ապարանքներ: Երկու մերիներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուղարձի ճանապարհի համար: [Մերին] աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ երեներ ու գազաններ ժողովել ու լցնել պարսպապատված տեղերը, որպեսզի նրա թագավորության օրս՝ զոտանքի և ուրախության տեղեր դառնան: Վաչեն անմիջապես կատարեց թագավորի ասածները» (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, քաղգմ. ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Հայպետհրատ, Երևան, 1947 թ., դպր. Գ, գլ. Ը, էջ 97):

Այդ ժամանակներից անցել է 16 դար, սակայն խոսքով թագավորի տնկած անտառը չի չորացել, մնացել է դալար: Ժամանակի և ստարերկրյա ասպատակողների ձեռքից շատ բիշ բան է փրկվել մեր երկրում և այդ քերից մեկն, անշուշտ, այս անտառն է:

Որոշակի չի կարելի ասել, թե ինչի՝ շնորհիվ է այս անտառը մնացել մինչև օրս: Արգյո՞ք այն պատճառով, որ այն հեռու է եղել բանուկ ճանապարհներից, հետևապես և փրկվել է ոչնչացումից, որին կարող էին հնթարկել ասպատակողները: Մի՞ գուցե և այն, որ տեղի բնակիչները այդ անտառը և այնտեղ եղած վայրի կենդանիները հնուց ի վեր համարել են սրբազան և այդ պատճառով չեն ոչնչացրել: Սակայն այդ փոքրը կարևոր չեն, հետաքրքիրն այն է, որ անտառը և նրանում եղած կենդանիները պահպանված են:

Դժվար է ասել, թե ի՞նչ չափի է եղել այդ անտառը սկզբի շրջանում, սակայն ներկայումս այն դրավում է ավելի քան 2.000 հեկտար տարածություն: Այստեղ գլխավորապես աճում են կաղնի, թխկի, հացենի, վայրի տանձենի և խնձորենի:

Անտառում հանդիպում են խաչքարեր և րավականաչափ խոշոր շենքերի ավերակներ: Հավանաբար այդ շենքերը հանդիսացել են պալատականների ամառանոցներ կամ որսորդական խմբերի կացարաններ:

Հետաքրքիր է խոսքովի անտառի կենդանական աշխարհը, որը որսորդական տեսակներից որոշակի արժեք է ներկայացնում:

Կենդանական աշխարհն այստեղ տարբեր է և բազմազան: Դեպի Գառնիի ամրոցն ընկած մասում շատ կան վայրի այծեր, կաքավներ: Այս մասում կարելի է հանդիպել նաև ընձառյուծի, բորենու: Դեպի հարավ, այնտեղ ուր անտառը նստաճում է, լեռնային փարձրավանդակներում տարածված է հայկական մուֆլոնը (վայրի ոչխար): Ձորերում հանդիպում են վարազ, արջ, գայլ, աղվես, նապաստակ, կարմիր կաքավ և այլն:

Անտառի թե՛ բուսական և թե՛ կենդանական աշխարհը հիմնականում մնացել է նույնը, ինչպիսին եղել է սկզբնական շրջանում: Հիմնադիրները հող են տարել ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի բազմազանության մասին, ստեղծելով վայրի կենդանիների իսկական արգելափակույթ: Այսպիսով, խոսքովի անտառն իր բազմազան վայրի կենդանիներով ստեղծվել է 10 դար առաջ, քան Ծվրոպայի առաջին արգելափակույթը՝ Բելովոժյան մայր անտառը:

Սովետական երկրում պատմական բոլոր հուշարձաններին ու վայրերը պահպանվում են օրենքով: Դա հավասարապես վերաբերում է նաև խոսքովի անտառին: Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ տարիներին կառավարությունը իր հսկողության տակ առավ անտառը: Խստիվ արգելվեց այնտեղ որս կատարել կամ ծառերը փչացնել: Ընդհակառակը, կառավարության կարգադրությամբ Անտառային տնտեսության մինիստրության մարմիններն այնտեղ կատարել են նոր տնկումներ, բնորոշակել նեղած տարածությունները:



Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշմամբ, Խոսրովի անտառը դարձված է վայրի կենդանիներին մեր երկրի կլիմայական պայմաններին վարժեցնելու փորձակայան և հանձնված է Հայկական ՍՍՌ Գիտությանների ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտին և Երևանի Կենդանաբանական այգուն՝ գիտական աշխատանքներ կատարելու համար:


Անցյալ տարի ջրաբաժնի շենքին մեր կլիմայական պայմաններին վարժեցնելու տեղի վրայում կատարված առաջին փորձերը տվեցին դրական արդյունքներ. կենդանիներն ընտելացել են իրենց նոր բնակավայրին և արդեն տվել տռաջին ծինը:

Այս տարի Կենդանաբանական ինստիտուտը զգալի չափով ընդարձակելու է իր աշխատանքների ծավալը: Նախատեսվում է Խոսրովի անտառում աճեցնել ռուսերիական խայտուցավոր եղջերու, սպիտակ եղնիկ, փասիան և այլն: Այս ամառ ստացվելու են ռուսերիական 20 հատ եղջերուներ:

Միաժամանակ Կենդանաբանական ինստիտուտը Գյումրատեստեթյան մինիստրության մարմինների հետ միասին նախատեսել է լայն միջոցառումներ Խոսրովի անտառի տարածությունը ավելի ընդարձակելու, բաց տարածություններում տնկումներ կատարելու, կենդանական աշխարհը հարստացնելու և դիշատիչ գաղանձերին ոչնչացնելու համար:







ԱՐԱՔԱՅԱՆ ԴԱՐՐԱՍՅԱՆ

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐՈՒՍՅԱԿԻՍ ՄԵՍԻՆ՝

(Մանկան տասնամյակի առթիվ)

Առաջին ներկայացումը, որ ես դիտեցի Երևանի Պետական թատրոնում, այդ 1924 թվականին էր, Կուկանդից իմ Երևան փոխադրվելու տարին (Պետական թատրոնն այն ժամանակ գանդակում էր այժմյան Երասխյան կոմեդիայի թատրոնի շենքում)։ Քննադրվում էր «Ջրասույզ» գանդակը։ Արուստիս իսպառ էր Ռաուտենդալյանի դերը։ Հիմա էլ աչքիս առաջն է նա Հուլիսի նման իր թուշկոտուն շարժումներով, այնքան սլացիկ, թեթև, թրվուռն, Ջրհորի և զերթին գեղարվեստական հատկանիշներով և Մանվելյան-Նիկիթյանի հետ նրա քնքուշ,



մեկամղձիկ հեղուկությունը և համակերպությունը... Արուստիս Ռաուտենդալյանը հրաշալի էր իր ամբողջ շրջապատով։ Այս ներկայացման և Արուստի խաղի մասին շատ են խոսել և գրել, միայն ինձ վրա առանձին ազդեցություն գործեց դերասանական ամբողջ կազմի զերազանց խաղը, իսկական

ռեալիստական թատրոնը, որի կազմակերպման և աշխատանքներին, մյուսների հետ միասին, այնքան ոգեորոթյամբ և մեծ սիրով ու նվիրվածությամբ լծվել էր իմ Արուստի։

Իր տաղանդավոր ուսուցչուհի տիկին Հրաչյայի ցանած սերմերը ծլում, ծաղկում էին... Ափսոս, ինքը չկար, որ ուրախանար իր սիրած աշակերտուհու հաջողություններով։

Հիշում եմ, թե ինչպես տանը, գեր պատրաստելիս, Արուստը մանրակրկիտ ուսումնասիրում, վերլուծում, որոնումներ էր անում, անհանգրստանում, նորից

ստուգում՝ մինչև գտներ իսկականը, բնականը, ճիշտը։ Քանի անգամներ, իր սենյակում պարապելու ժամին, քնած ձեռնալով տեսել եմ նրա արցունքները։ Այնքան նա ձուլվում էր իր հերոսուհու կերպարի հետ, որ նրա ներքին ուշատրոհը բոլորովին կերպարանափոխվում, նրա մեջ մեռնում էր ինքը Արուստը և դիտողների աչքի առաջ, իր ամբողջ էությամբ կանգնում էր այն կերպարը, որին նա ներկայացնում էր։

1. Տե՛սին Ա. Դարբասյանի այս հոդվածը փոքրիկ հատված է նրա իր գրքերի՝ անվանի դերասանուհի Արուստ Ռեպանյանի նվիրած անտիպ հուշերից։— խմբ.



Թատրոնում քանի անգամ որ կրկնվեր նույն ներկայացումը, նա ամեն անգամ նույն աշխուժությամբ և եռանդով խաղում էր, առանց ձանձրանալու և հոգնելու։ Նա շատ կարգապահ էր և ճշտապահ փորձերին։ Ինչքան էլ հոգնած լիներ, մեծ ճշտապահությամբ պետք է ներկա լիներ։ Նրա ստեղծագործական եռանդը անսպառ էր։

Ես նկատում էի, որ այստեղ, հրեանում, նրա վերաբերմունքը դեպի աշխատանքը կամ նրա աշխատանքի ձևերը կարծես թե փոխվել էին։ Մեծ թափով ու եռանդով նա աշխատանք էր տանում ինչպես թատրոնում, այնպես և արվեստի մյուս բնագավառներում։ Նա մասնակցում էր զանազան հանդեսների, տոնակատարությունների, բանվորական ակումբներում կազմակերպված երեկույթների, թյուսեղանների, ուսանողական և դպրոցական հավաքների, ելույթներ էր տանում ռադիոյով, գրողների տանը, պիտներների պալատում և այլ տեղեր։

Մեծ հաջողությամբ և ոգևորությամբ նա արտասանում էր իր սիրած հեղինակների գործերը։ Դեռ մինչև այժմ ակնշարմահրշում է նրա ուժեղ ձայնը, հստակ առոգանությունը, մաքուր հայերեն լեզուն՝ ճիշտ շեշտադրությամբ։ Իր սիրած հեղինակներից էին Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Հակոբ Հակոբյանը, Եուզանիկ Կուրդիյանը։ Նրիտասարգ գրողներին, ինչպես օրինակ Հովհաննես Երիզան և ուրիշներին նա միշտ քաջալերում էր, խրախուսում։

Արուստ անխույզ աշխատասիրությամբ և տաղանդով արժանացավ մեր կառավարության ուղարկությանը և բարձր գնահատանքին։ 1927 թվականին Հայաստանի Կենտրոնական Նրան շնորհեց վաստակավոր արտիստուհու, իսկ 1935 թվականին, հայ թատրոնի և արվեստի բնագավառում նրա տարած բեղմնավոր աշխատանքների համար՝ ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստուհու պատվավոր կոչում։

Արուստ այնքան տարված էր աշխատանքով, որ մինչև իսկ հանգստի օրերն էր օգտագործում։ Նա շատ կապված էր մեր շրջանային թատրոնների հետ, մասնակցում էր նրանց ներկայացումներին, ցուցմունքներ տալիս, օգնում առանձին դերասաններին։ 1933 թվականի հոկտեմբերի 18-ի իր ինձ գրած նամակում ասում է։ «Եմ աշխատանքը շատ է, երբեմն հոգնում եմ, բայց ժողովրդի սերը և հարգանքը ինձ ավելի են ոգևորում և մոռանում եմ ամեն ինչ... Նրեկ, կարծիր Բանակի տանը, կարդացին պարզաստվողների ցուցակը. ես էլ ստացա առաջին աստիճանի պատվոգիր։ Այս տարի ուրիշ հասարակական աշխատանք ևս ունեմ։ Ստեփանա-

վանի թատրոնի շեֆն եմ, պիտի հսկեմ բեմադրություններին, դերերի ուղիղ մեկնաբանմանը և այլն և այլն... Ես ուրախ եմ, որովհետև սիրում եմ այդ թատրոնը...»։ Արուստ առանձնապես աշխատում էր բեմական խոսքը սովորեցնել նորեկ դերասաններին։

Մի օրիշ նամակում Արուստ գրում է. «Այս օր էլ ժամը 6-ին ռադիոյով ելույթ ունեմ. իսկ երեկոյան՝ Լուսաշխի տանը, վաղը պիտներների մոտ եմ լինելու, մյուս օրը Բժշկների մոտ ելույթ ունեմ և այսպես ամեն օր։ Եվ այս ամենը հոգեկան մեծ բավարարություն էր պատճառում նրան։

Մի օր ձմռանը, երբ սաստիկ ցուրտ էր, նա պիտի ելույթ ունենար Կարմիր Բանակի զորանոցներում։ Թեև վատ էր զգում իրեն, շերմաստիճանն էլ մոտ 38 աստիճան, բայց պատրաստվեց գնալու։ Իմ խոսքին թե՛ «Արուստ օհ, նա, այս ցրտին չի կարելի գնալ, կհիվանդանաս», նա պատասխանեց. «Ոչինչ, մայրիկ, տաքությունս այնքան բարձր է, չէ՛ որ խոսք եմ տվել, հիմա հավաքվել եմ և ինձ են սպասում, պետք է գնամ...»։

Արուստ շատ էր սիրում գրականություն, ընթերցանություն։ Նրա գրադարանի զարդն էին կազմում Երիզանգադեի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ի. Դեմիրճյանի, Ս. Զորյանի, Նաիրի Զորյանի և Վ. Տերյանի երկերը։ Արևմտահայ գրողներից նա սիրում էր և գրադարանում ունեւր Հ. Պարոնյանի, Գ. Զոհրապի, Մ. Մեծարենցի, Պ. Դուրյանի և Մ. Պեշիկթաշյանի երկերը։

Բացի հայ գրականությունից, Արուստ հաճույքով կարդում էր նաև ռուս գրողների քոլոր նոր գրվածքները, առանձնապես հետաքրքրվում էր թատերական գրականությամբ։ Իր գրասեղանի վրա և մահճակալի մոտի սեղանի վրա միշտ լինում էին Մոսկվայի և Լենինգրադի զանազան գրական և գեղարվեստական թերթեր և ամսագրեր։ Նա ծանոթ էր սովետական ռուս լավագույն գրողների, քննադատների և դերասանների ու դերասանուհիների հետ, որոնց հետ հանդիպում էր թե՛ կուրորտներում (առողջարաններում) և թե՛ Մոսկվայում։

Ամեն անգամ Մոսկվա գնալիս, Արուստ մեծ հաճույքով հաճախում էր ռուսական ներկայացումները և հետևում էր նրանց արվեստին։ Ստանիսլավսկին, Ներսիսյան, Կոմիսարովսկայան և ուրիշները նրա համար ուղեցույցներ էին իր թատերական գործունեության ընթացքում։ Նա շատ էր սիրում և մի քանի անգամ կարդում էր Տոլստոյի, Մ. Գոլդու, Օստրովսկու, Պուշկինի, Մայակովսկու գրվածքները, որոնց



միջոցով նա սովորեց ուսաց լեզուն։ Նա ոչ միայն ազատ խոսում էր ուսանողներին, այլև գրում էր նամակներ և այլն։

Արուստ շատ էր սիրում ծովը, լավ լողալ դիտել։ Դեռ փոքր հասակից հայրը քնդառաջելով նրա ցանկությանը, նախընտրում էր ծովեզրյա ամառանոցներ, և շողշողուն Վոսփորի վերսկիտող ալիքներում Արուստ լողում էր ձկան նման։ Բաթումիից իր գրած մի նամակում ասում է. «Ոչ մի Կիսկովուսկի հետ չեմ փոխի ծովը...»։

Ամառանոցներում և կուրորտներում, անշուշտ, ամբողջ տարվա իր սպառած ուժերը որոշ չափով վերականգնում էր և վերադարձին, կազդուրված ու թարմացած, ակսում էր առօրյան։

1940 թվականի թատերաշրջանի վերջանալուց հետո արձակուրդային ամիսների ընթացքում, մեր ռեսպուբլիկայի կուլտուրա-սովետներին սպասարկելու համար, Փ. Սոմազուկյանի անվան թատրոնի ղեկավարությամբ և Արվեստի գործերի վարչության որոշումով, Արուստ մի դերասանական խումբ կազմելով շրջեց Ապարանի, Ալապյազի և Թալինի շրջանների համարյա բոլոր գյուղերը։ Խմբի մեջ էին Արուստ Ասրյանը (այժմ ժողովրդական դերասանուհի), և Սեբաբը, դերասաններ Լ. Մարյանը, Արման Կոթիկյանը, Վ. Շողերյանը, Փ. Մուշեղյանը և ուրիշները։ Վերադարձին Արուստ հոգեկան մեծ բավականությամբ պատմում էր ինձ, թե ինչպե՞ս է ինքն իր ընկերների հետ ճամբորդել հեռավոր գյուղեր։ Նրա համար մեծ հաճույք էր սպասարկել մեր կուլտուրասականներին, անձամբ լինել նրանց մոտ, աչքով տեսնել մեր համայնական դաշտերի բարիքները, մեր նոր գյուղը։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին նա անդուլ աշխատանք էր տանում հիվանդանոցներում հիվանդների համար։

Արուստի կյանքում նշանակալից երևույթ էր 1941 թվականը։

Այդ տարվա սկզբներին կատարվեց նրա րեմական գործունեության երեսնամյա հոբելյանը։ Թատերասեր լայն հասարակությունն ու մայրաքաղաքի աշխատավորությունը արժանավայել զնահատում էին իրենց սիրելի դերասանուհու գործունեությունը։

Հորելյանական հանգեսը կազմակերպված էր շատ ճոխ ու շքեղ։ Պաշտոնական և ընկերական շերտ ելույթներից հետո, ընթերցվեցին բազմաթիվ շնորհավորական հեռագրեր տեղական անհատներից և կազմակերպություններից, ինչպես նաև հղբայրական ռեսպուբլիկաներից և Միության այլ բաղաժնիներից։

Այստ քարձրացավ հորելյանը բուն ծափահարությունների տակ, զգացված ու մեծ ոգևորությամբ խոսեց, հայտնելով իր խորին շնորհավորությունը հողատար կառավարությանը, կազմակերպություններին, իր ընկերներին և ողջ հասարակությանը։

Արուստ արտասանած ճառի սեպհուրությունը պահվում է ուրիշ շատ փաստաթղթերի հետ միասին Թատերական թանգարանում, փր անձնական արխիվում։

Իր ելույթում Արուստ, ի միջի ալոց, ասաց.

«Իմ թանկագին, սիրելի աշխատակից ընկերներ, այն դնահատականն ու պատիվը, որին ես արժանացա, պատկանում են մեր թատրոնին, մեր կոլեկտիվին, բոլորիս։ Ես աճեցի ու կերպարանավորվեցի ձեզ հետ, ձեր մեջ, ձեր ամենօրյա աշխատանքի, գրույցների ընթացքում։ Ձեր խորհուրդները ինձ շատ են օգնել և շերմացրել։ Մեր երկրի անախընթաց վերելքի հետ աճեց նաև մեր թատրոնը, մեր կոլեկտիվը...»։

Դիմելով իր երիտասարդ արվեստակից ընկերներին, նա ասաց.

«Դուք երջանիկ եք, որ չեք տեսնել հին աշխարհի դաժանություններն ու տառապանքները... Իմ ցանկությունն է, որ դուք լիովին օգտվեք աթ բոլոր հնարավորություններից, որ մեզ մոտ ստեղծված են ձեզ համար... Ուսումնասիրեցե՛ք մեր յազմերանյ կյանքը, մարդկանց, 'եղե՛ք պարտաճանաչ թատրոնի աշխատանքներում, պաղվեցե՛ք ինքնազարգացմամբ, կարդացե՛ք, լավ ախրապետեցե՛ք գիտության բարձունքներին...»։

Ահա ես 30 տարվա աշխատանք ունեմ իմ ուսերին, սակայն համարձակ կարող եմ ապել, որ իմ մեջ դեռ շատ եռանդ և ուժ կա։ Խոստանում եմ ձեզ՝ իմ մնացած կյանքի բոլոր ուժերն ու կարողությունը ի սպաս դնել իմ լքնաղ Հայրենիքին, իմ ժողովրդին օգտակար լինելու, իսկ եթե կարիք լինի՝ պատրաստ եմ նվիրելու նաև իմ արյան վերջին կաթիլը...»։

Արուստ արվեստի շերտ երկրպագուներից էր։ Նա սիրում էր արվեստի բոլոր ճյուղերը և գործունե կերպով մասնակցում էր ստեղծագործական աշխատանքների, լինի դա նվագ, պար, նկարչություն և դերակատարում։ Նա շատ էր սիրում գրել և կարդալ։

Գեղատեսիլ բնութքան սիրահար լինելով, Արուստ մեծ հաճույք էր ստանում բնության ազատ գրկում, ուր իրեն աշխույժ, կայտառ և ամբի երկտասարդ էր զգում։ Նա զմայլվում էր բնական բոլոր գեղեցկություններով տարվա բոլոր եղանակներին։ Բաթումիում շատ հաճախ գնացել ենք գիտելու ծովում մայր մտնող արեւը և բանաս-



տեղծական վերջաբանը, Բազմաթիվ անգամներ կանգնել, հիացել ենք Երեանի հրաշալի արևածագը և արևամուտը դիտելով: Արուստ սիրում էր գեղանկարչությունը և ծովափ գնալիս շատ հաճախ վերցնում էր վրձինն ու ներկերը՝ զբաղվելու իր շատ սիրած նկարչությամբ: Սիրով հավաքում էր ուռու և եվրոպական նշանավոր նկարիչների ստեղծագործությունների ալբոմներ, առանձին նկարներ. ծանոթանում էր նրանց կյանքին և գործունեությանը: Նա շատ էր սիրում երաժշտությունը, լինելու դա եվրոպական, ասիական կամ ուսական: Առանց ինքնելու, ժամերով, հա նվագում էր իր սիրած Զալկովսկու հրաշալի ջութները, Լիստի հունգարական ռապսոդիաները, Շոպենի վալսերն ու նոկտյուրնները. Կոմիտասի համարեղ ջութները:

Արուսիս համար ընթերցանությունը ոչ միայն գեղարվեստական հաճույք՝ այլ օրվա ամենաանհրաժեշտ կենսական պահանջն էր: Ինչքան էլ զբաղված լինելու, նա օրվա մեջ անպայման ժամանակ էր գտնում կարդալու: Գիշերները ներկայացումից կամ փորձից հետո, անկողին մտնելիս, մի երկու ժամ զբաղվում էր օրաթերթերով, ամսագրերով, նոր հրատարակված գրքերով: Նա կարդում էր պառկած անկողնում կամ քաղկա-

թոռի վրա... Կես գիշեր էր լինում, բոլորը չնում էին, իսկ նա վառ լուսամտի տակ, կոթնած փափուկ բարձերին, խորասուզված, տարվում էր ընթերցանությամբ: Կարգալիս երբեմն մատիտով նա նշումներ էր կատարում կամ մի որևէ կարևոր բան արտագրում տետրակի մեջ: Իմ թախանձանքներին, խնդրանքներին, որ՝ «Քննիչ», հանգստացիր, նա միշտ պատասխանում էր. «Երբ կարդում եմ, հոգնածությունս անցնում է, իսկ եթե չկարդամ՝ հիվանդ կլինեմ: Կարդալն ինձ անհրաժեշտ պահանջ է, միայն մեռած ժամանակս չեմ կարդա», — և ապա նա ծիծաղելով շարունակում էր իր ընթերցումը:

Արուսի սերը դեպի մեր սոցիալիստական Հայրենիքը շատ մեծ էր, բոլորն և անկեղծ: Հիշում եմ, րեո նոր էր սկսվել Հայրենական Մեծ պատերազմը, երբ Արուստ, Գ. Սուս. դուկանի անվան թատրոնի դերասանական խմբի հետ զտնվում էր Մոսկվայում: Նրանից նամակ ստացա, որտեղ նա հանգստացնում էր ինձ և համոզմունք հայտնում, որ՝ «Միևնույն է, մենք կհաղթենք...»:

Այո՛, մենք հաղթեցինք, բայց ափսո՛ս. ինքը չտեսավ: Նա բախտ չունեցավ վայելելու այդ մեծ ուրախությունն ու ցնծությունը... Անողոք մահը կտրեց զավակիս բեղմնավոր կյանքի թելը...







Ֆ. ԲՈՌՉԱՆՅԱՆ

## ԱՐՎԵՍՏԻ ՎԵՍՏԵԿԱՎՈՐ ԴՈՐԺԻՉ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԴԱՆԻԵԼ ՎԱՋԱՐՅԱՆԸ

(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ սովետահայ երաժշտական կուլտուրայի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Դանիել Ավագի Ղազարյանի ծննդյան յոթանասուն տարին:

Դանիել Ղազարյանը ծնվել է 1883 թվականի մայիսի 5-ին լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Հայրը՝ Ավագը, եղել է գյուղական ուսուցիչ, դպիր և երբեմնակի զբաղվել է արհեստներով: Նա օժտված էր դուրեկան ձայնով և սիրում էր երգել:

Դանիելը դեռ փոքր հասակից մեծ հակում է ցուցաբերում դեպի տրվեստը, առանձնապես դեպի նկարչությունն ու երգ-երաժշտությունը: Յոթ տարեկան հասակում նա նվագում էր սրնգի, իսկ յոթ տարեկան հասակում՝ ջութակի վրա: Դանիելն օժտված էր սուր և նուրբ լսողությամբ, կիրթ ճաշակով, դուրեկան ու ղիլ ձայնով: Նա սկզբներում, իրենց տանը՝ սե-



վանի, ապա դպրոցական հանդեսների վարդն էր կազմում:

Դանիել Ղազարյանն իր սկզբնական կրթությունն ստացել է Շուշի քաղաքի թեմական դպրոցում, որտեղ գործող երգեցիկ խումբը վաղուց ի վեր գրավել էր երաժշտասեր հասարակաճության ուշադրությունը:

Դանիել Ղազարյանը հենց դպրոցում էլ ստացել է իր երաժշտական նախնական կրթությունը, ձեռք բերել անհրաժեշտ տեղական կոմպոզիցիաներ, որոնք

հետագայում պետք եղան նրան՝ մասնակցելու Ս. Դեմոքրյանի, Կարա-Մուրզայի, Գրիգոր Սյունու և Կոմիտասի երգեցիկ խմբերին: Երաժշտական ակնհայտ քնդուսակությունների տեր երաժիշտը հրկար ժամանակ չի կարողանում սակայն երաժշտական մասնագիտական կրթություն ստանալ: Նյութական ուղ պայմանները ստիպում են Դա-



ներկին առժամանակ զբաղվել արհեստով՝ ռազավու բազմամարդ ընտանիքի ապրուստը:

1906 թվականին, 23 տարեկան հասակում, Դանիել Ղազարյանը անցնում է Բաքու՝ երաժշտական սիստեմատիկ կրթություն ստանալու: Բաքվի երաժշտական դպրոցի դիրեկտոր Գալմանը, պրոֆեսոր Պետրովը և վոկալիստ Միխայիլովսկայան, լսելով Դանիելի ձայնը և զգալով նրա երաժշտական որոշակի ընդունակությունները, մեծ հաճությամբ ընդունում են նրան վոկալ ֆակուլտետում՝ ձայնը մշակելու: Ուսումնասիրել երիտասարդը 1906—1907 թվականներին միաժամանակ սովորում է նաև Բաքվի բանվորական գիշերաշին ինստիտուտի ուսաց լեզվի և օտար լեզուների ֆակուլտետներում և դեռ ժամանակ է գտնում զբաղվելու հասարակական երաժշտական աշխատանքներով: Կազմակերպում է բանվորական երգեցիկ խմբեր, հանդեսներ և երեկույթներ՝ Բալախանիում, Բիրի-էյրաթում, Սաբունչիում և բանվորական այլ աժաններում:

1907 թվականին Դանիել Ղազարյանը տեղափոխվում է Թբիլիսի և ընդունվում պետական երաժշտական դպրոցը (հետագայում կոնսերվատորիան) սովորելով պրոֆեսորներ Էնրիկո Բրոշի, Զ. Պալիաշվիլու, Ն. Նիկոլաևի, Ն. Զերեպինի և Հարսմանի մոտ: 1917 թվականին ավարտելով երաժշտական դպրոցը, Դանիել Ղազարյանն այնուհետև ամբողջովին նվիրվում է ստեղծագործական բեղմնավոր աշխատանքի:

Քառասուն տարվա ընթացքում Դանիել Ղազարյանը աշխատել է երաժշտական մասսայական դպրոցներում և մանկավարժական ուսումնարաններում որպես երգի-երաժշտության դասատու, կազմակերպել է քառաձայն և մանկական երգեցիկ խմբեր, համերգներ, երեկույթներ ու ցերեկույթներ, զբոլ է մանկական օպերաներ, երաժշտական դրամաներ և այլն:

Դանիել Ղազարյանը թե՛ ուսանողության շրջանում և թե՛ հետո 40 տարվա ընթացքում հորինել է շուրջ 600 մանկական, մասսայական էստրադային և դորժիքային ստեղծագործություններ, որոնց թվում 5 մանկական օպերա («Գայլը», «Հաղթված բազեն», «Անդործ մանուկը», «Տիկնիկի ոյսակը»,

«Փոքրիկ կառուցողները»), երկու երաժշտական դրամա («Մոս և Վարդիթեր», «Գիքորը»), երաժշտական պատկերներ («Պապն ու շաղգամը», «Փիսիկի զանդատը») և այլն: «Հանգիստ մարշան», «Անուշ դարուն», «Ուռին», «Աշնան գիշերը», «Քույր իմ նազելին», «Նոսր ես տալիս չես գալիս», որոնք գարծել են շատերի սիրած երգերը, հենց սկզբից ունկրդորին գրավում են իրենց հմայիչ երաժշտականությամբ, խորը հուզականությամբ ու ջերմությամբ:

Կոմպոզիտորի աշնայիսի երգերը, ինչպես «Գյուրջի աղջիկ», «Սովետական դարուն», «Ձորան-չորան», «Կոլխոզի աղջիկ», «Անվակի երգը», «Մայիսը սիրուն» և այլն, հաճախ կատարվում են ուղիղով, համերգների ժամանակ և հանդիսանում են սովետական շրջանում սահմանափակ լավագույն ժողովրդական երգեր: Նրանք լայն ընդունելություն են գտել ժողովրդի կողմից, շնորհիվ իրենց կարճ և բովանդակալից երաժշտական ֆրագմենտի և աշխույժ ութմի:

Մանկական գրականությունը Դանիել Ղազարյանի տարերքն է. նա իր լավագույն զգացմունքները նվիրել է մանուկներին, թե՛ իբրև մանկավարժ-գասաուս և թե՛ իբրև ստեղծագործող: «Փիսիկի զանդատը», «Միլոնի թիթեռ» և մոտ 300 այլ երգեր հանդիսանում են հայ մանուկների ամենասիրելի ստեղծագործությունները:

Քառասուն տարվա ընթացքում Դանիել Ղազարյանը կազմակերպել է մի շարք երգեցիկ խմբեր Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի այլևայլ քաղաքներում:

Ուշագրավ է Դանիել Ղազարյանի նրբանջաղաքում կազմակերպած ուսուցչական երգիցիկ խումբը, որ առաջնություն շահեց թե՛ Հայաստանի, ղեկավարելիական երգեցիկ խմբերի ստուգատեսում և թե՛ 1945 թվականին Մոսկվայում կայացած միութենական երգեցիկ խմբերի ստուգատեսում:

1950 թվականին Դանիել Ղազարյանը կազմակերպեց նրևանի միջազգային դրաբրոցական կենտրոնական երգեցիկ խումբ բաղկացած 500 հոգուց:

Անվանի կոմպոզիտորը և երաժշտագետը վեհափառ Հայրապետի և Հոգևոր Ընդհարանի վերտեսու Մ. Մինասյանի հրավերով կազ-



մակերպեց էջմիածնի Հոգևոր Ժեմարանի սաների երգեցիկ խումբը, որը բարձր արվեստով կատարում է հայ հոգևոր և ժողովրդական երգեր, ելույթ ունենում տոների և հանդեսների ժամանակ:

Դանիել Ղազարյանը մեծ աշխատանք և տարել նաև կույրերի երաժշտական դաստիարակության գործում: 1932 թվականին նա հաջողությամբ կազմակերպել է կույր երեսանների երգեցիկ խումբ ու նվագախումբ, որոնք բազմիցս ելույթներ են ունեցել Սովետական Հայաստանի մի շարք քաղաքներում, համերգներ տվել Հայֆիլհարմոնիայի դահլիճում, մեծ ընդունելություն գտնելով մայրաքաղաքի երաժշտասեր հասարակության կողմից:

Իր բեղմնավոր գործունեության հենց սկզբից Դանիել Ղազարյանն աչքի է ընկել նաև որպես ակտիվ հասարակական գործիչ, եղել է Թբիլիսիի հայոց երաժշտական ընկերության ակտիվ անդամներից մեկը, հիմնադրել է Կովկասյան իտալիյն ընկերություն-

ներ, դեկավարել Երևանի Փաղսովետի ժողովրդական կրթության գեղարվեստական բաժինը, կրթել և դաստիարակել է բազմաթիվ սերունդներ:

Դանիել Ղազարյանը մոտ 15 տարի աշխատում է Մանկավարժական կաբինետում, որպես երգ-երաժշտության մեթոդիստ. նա դրել է և կազմել մի շարք դպրոցական երգարաններ:

Սովետական կառավարությունը բարձր դնահատելով Դանիել Ղազարյանի երկարամյա երաժշտական ու մանկավարժական գործունեությունը, պարգևատրել է նրան Լենինի շքանշանով ու մի շարք մեդալներով, շնորհել արվեստի վաստակավոր գործչի և վաստակավոր ուսուցչի կոչում: 70-ամյա երաժիշտը նրիտասարդական ավյունով ու ջերմությամբ շարունակում է իր բեղմնավոր ստեղծագործական աշխատանքը, դաստիարակում է նորանոր կադրեր, ստեղծում մեր ժամանակին վաշիլ բարձրարժեք երաժշտական գործեր:







## Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՇՆՈՐՀԶ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԻԱՊԵՏ

(Առաջնորդ Հայոց Գաղթորեցի)

### Ո Ւ Ղ Ե Ր Ձ

#### ԳԱԼՐԱՊՈՐՏԻՈ ՔՆՄՐԻ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԴՈՂՈՎՈ

Հարգելի՛ և սիրելի՛ երեսփոխաններ.

Երբ առաջին անգամ ըլլալով ներկա կոյ-  
լամ ու վնասխազահեմ թեմիս Երեւոյիսանա-  
կան այս ժողովին, առաջին պարտքս կնկա-  
տեմ կրկնել, այս անգամ Ձեր բոլորին ներ-  
պաշտօնքան, այն՝ ինչ որ հաղորդեցի նամա-  
կով, երբ ստացա ընտրութեանս լուրը, և զոր  
արտահայտեցի նաեւ աստ, այս նվիրական  
հարկի տակ, առաջին ընդունելութեանս օրը,  
Շնորհակալութիւն Երեւոյիսանական ժողո-  
վիդ՝ իմ տկար անձիս վրա կայացուցած իր  
վստահութեան համար: Այս ժողովը, զիս  
առաջնորդ ընտրելով, ինքզինք դրած եղավ  
պատասխանատւութեան մը ներքեւ: Պատ-  
կառելի այս ժողովը թեմական գործոց հա-  
ջողութեան առաջին աղագոյն է. իմ պաշտո-  
նավարութեան ընթացքին ձեռք ձգված ար-  
դունավորութիւնը պիտի նկատվի նաեւ Ձեր  
հաջողութիւնը: Ինձ համար հուշ՝ քաջալե-  
րական էր թե՛ առաջին ընդունելութեան օրը  
և թե՛ այցելութեանցս ընթացքին լսել և ունե-  
նալ համապարփակութեան ջերմ խոստում-  
ներ: Վստահ եմ, որ այդ խոստումները  
իրենց ապեմքն պիտի վերածվին գործերու:  
Ես ես պիտակից եմ, թի ընդունելով Ձեր  
ընտրական որոշումը, ինքզինքս դրած եղա  
նույնքան ծանր պատասխանատւութեան  
ներքեւ: Ինչ ալ ըլլա արդիւնքը մեր ապագա  
գործունեութեան, առնվազն մեկ կիտի մա-  
սին կրնա վստահ ըլլալ Երեսփոխանական  
ժողովը: Պիտի գնեմ ի սպաս այս թեմի

առաջիկ գորացման ու դարգացման ինչ որ  
Աստված և բնութիւնը որպէս կարողութեան  
շնորհած են ինձ: Ողջնեցէ ինձ Աստուած և  
օրհնեցէ դժեղ դամենեան. ամէն:



Շուրջ Երկու ամիսն ի վեր հաստատված  
եմ պաշտոնիս մէջ: Երկու ամիսը հազիվ թի  
քաւակաւն է ընդհանուր գաղափար մը կազ-  
մելու համար թեմական գործերու մասին:

Անցնող 6—7 կիրակիներու ընթացքին այ-  
ցելած եմ թեմիս հյուսիսային և կենդրոնա-  
կան բոլոր համայնքները: Զատկեն անմի-  
ջապէս վերջ պիտի այցելեմ հարավի մեր  
մնացյալ Կրեք եկեղեցիները:

Այցելութեանցս ընթացքին առհասարակ  
քաջալերանքն երեսփոխորու միայն ամա-  
նատիս եղաւ: Ըստ լրագրակների լսեցի նաեւ  
տխուր երեւոյթներու մտախն: Ես ինձ սկզբ-  
ունք քրատ եմ, հարգելով հանդերձ ըսողի-  
անձը և ի մօի ունենալով հանդերձ բավածը,  
համոզումներս չկաղմկեմ երբեք լավածներու  
հիման վրա: Անձամբ վերահասու ըլլալ  
խնդրո առարկա հարցերու մասին՝ անհրա-  
ժեշտ պայման է առողջ և ուղիղ տեսակետ-  
ներ կազմելու համար: Երանի թի ասիկա ամ-  
բողջ մեր ժողովուրդի սկզբունքը եղած ըլ-  
լար, շատ դժվարութիւններ ու մանավանդ  
յոսողութիւններ մտաւորութիւններ պիտի խնայ-  
վեն մեզի:



Հայկական Գալիֆորնիան, հասանգհին պես, անասաւորներ ունենալով հանգերձ, պարարտ և խոտամալից հող է ըստ երևույթին, իսկ ժողովուրդ ունինք, և շատ լավ տոսմադրութիւններ կան. սակայն իմ ընդհանուր տպավորութիւնս ալն եղալ, որ այս գետինը պետք եղած չափով չէ մշակված, հատկապես կրոնական ու եկեղեցական մարդերու մեջ, Մեր ներկա դժվարութիւններին տմանք արդունք են այդ անտեսութիւն, Այսուհանդերձ փառք կուտանք նախախնամութեան, որ այդ անդաստանը չէ մնացած բոլորովին խոպան, հայ ժողովուրդի պարավոր պարտեզը, հսկանակ քիչ մշակված ըլլալուն և հսկանակ սեղերուն և փուշերուն, որոնք աճած են իր շուրջն ու մեջը, տված է և կշարունակե տալ իր բարի պտուղը: Եթէ լավ ծրագրայւ աշխատանք թափվի հայկական Գալիֆորնիո վրա, ան կրնա տալ առատ հողեր հունձք:

Եկեղեցին կրոնական մշակողները հոգեւորականներն են: Փառք կուտանք Աստուծոյ, որ ունինք եկեղեցականներու փոքր փառանք մը, որոնք իրենց կարողութեան համաձայն կ'մշակեն այս հողը: Սակայն անտնց պակասը սակավին զգալի է: Իսկ ուսմունք առած, ձեռնհաս, բայց ամենեւնի ավելի հաստատվոր երիտասարդ եկեղեցականներու պետք ունինք: Մեր համայնքներն ուսման ասակավին գործ են մնալուն հովիվներ, ուրիշներ պահանջքը ունին մեկն ավելիին: Մեր առաջին հողը պիտի ըլլա որ առաջ օժտել անհովիվ համախնները իրենց օրինավոր հովիվներով:

Հովիվներու լման կազմին վերջ թիմս պետք է ունենա իր պաշտօնական օրգանը, իր պաշտօնաթերթը, իր ձայնը լսելի ընծալելու, իր մշակութային ու եկեղեցական և դաստիարակչական գործը տարածելու համար թիմիս բոլոր անկյունները: Պրոպագանդի և հայտարարութեանց այս երկրին մեջ անհետաձգելի անհրաժեշտութիւն մըն է այս: Չեմ կարծեր, որ սույն ժողովո մեջ գտնվի մեկը, որ համամիտ ըլլա դադափարին, սակայն ամենուս մտահոգութիւնը՝ անոր նշութեանը հայթայթելու հարցն է: Իրված ըլլալով Առաջնորդարանի տնտեսական ներկա անձուկ վիճակը, ի՞նչպես և ուրկէ՞ ապահովել անոր նշութեանը, Հասկընայի և արդարացի մտահոգութիւնն է այս: Սակայն նախ նկատի պիտի առնէք, որ մեզմէ նվազ անդամ և հետևորդ ունեցող կազմակերպութիւններ ունին իրենց թերթերն ու կապրեցներն զանաւ: Մյուս կողմէ, եթէ լավ աշխատանք տարվի հովիվներու, հոգաբարձութիւններու, երեսփոխաններու և ն-

կեղեցիւ կից բոլոր կազմակերպութիւններու կողմէ, հաջողութիւնը վարեւոր չափով մը կապահովվի: Սակայն քանի որ երեսփոխանական ժողովը ի վիճակի չէ անմիջապես որոշում կայացնելու այս մասին, փափագելի է, որ սկզբունքով ընդունվի այս առաջարկը, և այս ժողովը կազմէ հանձնախումբ մը, որ աւտոմատիք հարցը իր բոլոր երեսաներուն մեջ և իր ներառյալութիւնը բերէ կեդրոնական վարչական ժողովին, որ իր կարգին եթէ համոզում դուրսնէ, թե կարելի է նման ձեռնարկ մը պիտի հանել առանց նշութեան քեռ ըլլալու: Առաջնորդարանին վրա, անօրին հարկ եղածը՝ իրեն գործադիր մարմինը երեսփոխանական ժողովուրդ:

Պետք է Առաջնորդարանը դրվի իր անունին արժանի դիրքին վրա: Որքան կ'ստանվի, Առաջնորդարանը ցարդ փոքր չափով միայն կրցած է տալ իրմէ ակնկալված առաջնորդութիւնը: Արդ, որպեսզի ան կարենա լիովին ծառայել իր նպատակին, պետք է ընդարձակ իր գործը դարձնական, հրատարակչական ու հատկապես ներքին կազմակերպչական մարդերուն մեջ, նման գործունեութեան համար: Առաջնորդարանը ներկայիս նշութեան միջոցներ պրիթ շունդի Այս միջոցներն մեկը պիտի ըլլա, կիտըհինք, նշանակել անձ դուրս մեկ դուրս տարեալը: Հայաստանայց եկեղեցիւ 18 տարեկանին վեր բոլոր դավաններուն համար: Թեև առանձինն անված ինքնին աննշան դումար մըն է այդ, սակայն հասկացվելով, կրնա դուրսնել հասուցի վարեւոր աղբյուր: Այս մասին կ'ըրոնական վարչութեան հետ խորհրդակցաբար վարդադրեցինք, որ մեր տեղական եկեղեցիներու ունեցած բոլոր հասցեներուն շրջաբերական դրվի, հրատարակելով զիրենք վճարել անձ պիտի մեկ դուրս տարեալը: Գործին հաջողութիւնը ամբողջութեամբ կախալ է մեր ժողովուրդին այս ծրագրի վերաբերմամբ բունիք ընթացքին: Հովիվներ, հոգաբարձուներ և այլ եկեղեցիւ կից մարմիններ և կրնան մեծ դեր կատարել այս գործին հաջողութեան և արդունավորման մեջ: Փափաքելի է, որ այս անօրինութիւնը ևս որպես առաջարկ որդագրվի երեսփոխանական ժողովի կողմէ և անցնի իր որոշմանց շարքին մեջ:

Երեսփոխանի Հայոց Պատրիարքարանի և անդ ապառաճալ մեր եղրարց օգնութեան գործը տեղական ընծայելու մտքը ներդրական վարչութեան հետ խորհրդակցաբար տնօրինեցինք, որ մեր թիմի բոլոր եկեղեցիներու մեջ հատուկ պնակ շրջադալեցվի Մաղկազարդի կիրակին, և արդունքը Առաջնորդարան փոխադրվի, որպեսզի մեր կարգին



դրվեցին զայն նրուաաղես: Ցանկալի է, որ այս տնօրինությունը ևս որդեգրվի պատկառելի Երեսփոխանական ժողովից: Վոլմե Ի անցնի իր որոշումներու կարգին:

Շատ խոսված ու մեծ մտահոգության առարկա եղած է ամերիկահայ երիտասարդության պարզած վիճակը: Ժամանակն է այլևս, որ քիչ խոսվի այդ մասին և զործնական քայլեր առնվին այդ ուղղությամբ: Ավելի քիչ մտահոգվինք, բայց ավելի շատ մտածենք կերպերու և միջոցներու մասին՝ զանոնք Օկեղեցիին կապված պահելու: Շատ զոհողություններ, զիջումներ ըրած ենք արդեն անոնց համար ձեր ընտանեկան, ու ընկերային շրջանակներու մեջ: Կարգ մը զիջումներ ու զոհողություններ ևս հարկադրված ենք ընել ի նպաստ անոնց, մեր եկեղեցական շրջանակին մեջ: Միջավայրը կապահանջե և կ'պարտադրե զայն... Պարծանքով պետք է դիտենք, որ անոնցմե ներկայացուցիչներ կան մինչև իսկ այս պատկանելի ժողովին մեջ: Կարգ մը հոգաբարձական կազմերուն մեջ նշանակելի թիվ մը կ'կազմեն անոնք, Կրտսեր տիկնանց միութունները մեծագույն չափով անոնցմե կազմված են: Դպրաց դասերը գրեթե ամբողջությամբ անոնք կ'լեցնեն: Անոնք պետք ունին մեր առավել հասկացողության, համակրանքին և իմաստուն առաջնորդության: Եթե իրենց կարգ մը տարրական սրահանջներուն գոհացում չտանք, պատասխանատու կ'մնանք առաջի Աստուծո, առաջի Ազգին և առաջի մեր Ամերիկայի հայության: Կատմություն առած է Հայաստանյայց եկեղեցվո Երիտասարդաց կազմակերպություն մը: Ավելի զորացնել այս կազմակերպությունը, օգնել, որ ունենան իրենց ներկայադրելի թերթը և հայթայթել իրենց համար գրականություն իրենց ազգային ու կրոնական ժառանգության մասին: Այս կազմակերպությունը Կիրակնօրյայի հետ մեր ապագայի տեսանկյունի ամենեն կարևոր

մարմինն է: Հետևաբար մեր կեցվածքը ըստ այնմ բռնենք անոր հանդեպ: Ձեր մասնավոր ուշադրության կ'հանձնենք անոնց կողմե եկած առաջարկները: Կիրակնօրյա վարժարաններու կարևորությունը շեշտեցինք հոգևորականաց համագումարին մեջ, և հարկ եղած քործնական տնօրինությունները ըրինք: Կիսափագինք, որ պատկանելի Երեսփոխանական ժողովի բոլոր անդամներն այդ գալին անոր կարևորությունը և իրենց շրջանակներու մեջ ուժ տալին այս գործի հաջողության և առավել տարածման: Կիրակնօրյան այլևս դուրս պետք է գա իր անվանական հանգամանքեն և դրվի հաստատ և հայեցի հիմքերու վրա:

Երեսփոխանական ժողովը մեր եկեղեցական գործերուն ընթացք տվող մեծագույն մարմինն է: Պետք է գիտակցինք, որ թեև առհասարակ կ'զբաղինք մեր թեմի նյութական, վարչական և այլ հարցերով, խորքին մեջ առկայն մեր հավատքի հիմնադիր ու մեր Տեղ Հիսուս Քրիստոսի երկրի վրա սկսած ու մեր հայրերու աճեցուցած գործն է, որ մենք վշարունակենք: Մեր որոշմանց ընթացքին պետք է մեկ նկատում միայն ի մաի ունենանք. բարիքը և գորացումը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին, որուն հաղաքատ գավազներն ենք ամենքդ: Եթե Աստուծո գործին մոտենանք անկեղծ ոգիով, վատահ կըրնանք ըլլալ, որ Աստված ալ մեր գործը հաջողությամբ պիտի պատկն:

Ավելորդ է թեմա հիշեցնելն անգամ, թե մեր տեսանկյունից անկաշկանդորեն արտահայտելով հանդերձ, անոնց մեջ պիտի դնենք վայելություն և լիություն, նկատելունենալով ոչ միայն վեհությունը տեղվույն ուր հավաքված ենք, այլ նաև սույն ժողովի պատկանելի հանգամանքը: Կ'մաղթեմ բոլորիդ Ս. Հոգվո առաջնորդությունը և իմաստությունը, որպեսզի ունենանք արդյունավոր ժողով մը, ի պայծառություն մեր թեմին և ի փառս Աստուծո:







Մ. ԷՍԿԻՃՅԱՆ

## Կ Ա Ր Ո Տ Ն Ա Յ Ր Ե Ն Ի

Հայրենի՛ երկիր, քեզի՛ եմ կարօտ,  
Օղիդ կենսատու, ջուրիդ կաքնահամ,  
Իցի՛վ բլլայի՛ քու ջեններուն մոտ,  
Հայրենի՛ երկիր, իմ նո՛ր Հայաստան:

Ա՛խ, ո՛րչափ դեռ ես հեծեմ տխրալի  
Հեռո՛ւ ավերու, օտա՛ւ մարդոց մօտ,  
Եվ երազեմ իմ եղբարց պանծալի:  
Ն՛րբ պիտի առնեմ ես իմ վառ կարօտ:

Իցի՛վ բլլայի՛ քու գիրկիւ մեջ վե՛ս,  
Փարեի՛ քեզի, սիրո՛ւն Հայրենի՛,  
Եվ այնուհետև վախճանեի՛ ես՝  
Շնչած մեր զեփյուռ, տեսած մեր երկինք:

Հայրենի՛ երկիր, հզա՛ւր Հայաստան,  
Իտե՛ղե՛, հավաքե՛ քու պանդուխտ որդիք՝  
Թափառողներուն այս անապատում,  
Եվ դարձո՛ւր անոնց նոր կյանքի մարտիկ:

Հայրենի՛ երկիր, քեզի՛ եմ կարօտ,  
Քու նոր ջեններուն, շունչիդ մայրական.  
Իցի՛վ բլլայի՛ եղբայրներուս մօտ,  
Պայծա՛ւ Հայրենիք, Սոփե՛տ Հայաստան:

Պրավդիվ (Ռուդարիա). 29 մարտ 1916





# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


## «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԻՒՆԳՐԱՖԻԱ»

(XIX դարից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը)

Կազմեց՝ ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հայկական ՍՍՌ Ֆեոդոսյակալատ, Երևան, 1953 թ.

Հայկական ՍՍՌ Պետական գրադարանի վերահսկող աշխատության հրատարակմամբ ավարտվում է հեղինակի կազմած «Հայ գրականության թիվերից մինչև մեր օրերը» ծավալուն աշխատությունը։ Այս շնորհիվ հայ աշխատության առաջին հատորը լույս է տեսնում դեռևս 1941 թվականին՝ «Հայ հին և միջնադարյան գրականության նամակոտ լիբրարիայի» վերակազմում, որն իր մեջ ընդգրկում է 5—10-րդ դարերի գրականությունը՝ հեղինակների երկերի նկարագրությամբ և քննադատական ու քանադրական 1.600 նշաններով։

1940 թվականին Հայաստանի հրատարակչությամբ լույս տեսավ նույն հեղինակի կազմած երրորդ հատորը՝ «Նովելիստիկ» զեղադրվածական գրականությունը՝ թիվերից աշխատության խորագրով, որն իր մեջ պարունակում էր 80 հեղինակների երկերի և նրանց մասին հղած 8.000 քննադատական, գրախոսական նշանների նկարագրությամբ։ Ներկա աշխատությունը, որը կազմում է հեղինակի վերահսկող գործի երկրորդ հատորը, տալիս է 50-ից ավելի հայ հեղինակների երկերի ու նրանց մասին հղած 7.000 քննադատական, գրախոսական և քանադրական նշանների թիվերից աշխատության մեջ, հեղինակը շատագիտ աշխատանքով կարողացել է ի մի հավաքել և թիվերից աշխատության գրական մշակման նմանակել հայ ժողովրդի քաղաքական հատուկ գրականության գաղափարը, Հայրենի հեղինակը իր այս աշխատությունը կազմելու անմիջականորեն



աշխատանք է ունեցել ուսանական գրականության հատուկ թիվերից աշխատության փորձը և առաջնորդվել է գիտական առաջավոր մեթոդաբանությամբ։

Անցյալում մեզ մոտ, ընդհանրապես, զարգացած չի եղել գրականության թիվերից աշխատության գործը։ Միայն Միջին դարերի հրատարակչի մի քանի նմանություններ գործեր, որոնք, սակայն, պակասակշիռ են, լուրջ գիտական սկզբունքի վրա չեն հիմնված և լակոնիկ ու համարձակ չեն ընդգրկում։ Մեզ մոտ չեն եղել բանահյուսության, հրապարակախոսության, վերաբերյալ թիվերից աշխատանքներ։

Անցյալի հայ գրականության այս ազդեցիկ թիվերից աշխատության փորձը լուրջ խոչընդոտներ, առաջ է կանգնեցրել ներկա աշխատության հեղինակին (Հովհ. Պետրոսյան)։ Սակայն, ընդամենը դրան, հա կարողացել է քրտնաջան աշխատանքությամբ հաղթահարել այդ խոչընդոտները և իրապես ստեղծել արժանավոր, առաջին անգամ քաղաքացիություն նվաճող շնորհալի մի աշխատանք։ Աշխատանքի իրագործումը իր այս գործի մեջ բաց է թողել հեղինակների կյանքին ու գործունեության վերաբերյալ աննոտագիտներ՝ տեղի ուղղության պատճառով։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչև օրս չկան հրապարակախոսության, գրականագիտության և ֆոլկլորի վերաբերյալ թիվերից աշխատանքներ, հեղինակը համարում էր իր լուրջ և անհրաժեշտ գործը նյութեր այդ մասին։

Աշխատության մեջ հեղինակները դասավորված են այբբենական կարգով։ Յուրաքանչյուր հեղինակի թիվ-



իողորաֆիան ունի հետեւյալ բաժինները. 1) երկերի հրատարակութիւնները, 2) պարբերական մամուլում եղած ատեղծագործութիւններ, հոդվածներ, 3) քննադատական, գրախոսական և այլ նյութեր հեղինակի մասին, 4) հեղինակի երկերի թարգմանութիւնները և նրա կատարած թարգմանութիւնները, Հեղինակի գործերը, հոդվածները նկարագրելիս տրված են որոշ «նենոտացիաներ»՝ թեմատիկան բացահայտելու և դուրսբերելի դարձնելու համար, Աշխատութիւնից ռզտւելից ղյուրացնելու համար, հեղինակը վերջում ավելաւորել է հեղինակների և աղբյուրների ցանկը:

Հեղինակի ներկա հատորի հրատարակութեամբ մեր լեթերացող հասարակութիւնը, ռաուցչութիւնը, գրականագետները, ռաանողութիւնը ձեռքի տակ ռեննում են մի յաւագումն բիրիողորաֆիական ուղեցույց՝ ու-

ռամնասիրելու մեր անցյալի գրականութեան յաւագումն տւելն նմաշնները:

Հրատարակված գործը, իր դրական անուշաւալի արժանիքներով հանդերձ, ունի նաև լուրջ թերութիւններ, Հիմնական թերութիւնն այն է, որ բիրիողորաֆիան սպասիչ և լիակատար չէ, որով հեղինակներ և նրանց գործերը չեն ընդգրկուած:

Ձեռքած այս թերութիւններին, հարգօ հեղինակի՝ Հովհ. Պետրոսյանի երկարատև և քրտնաջան աշխատանքը՝ «Հայ գրականութեան բիրիողորաֆիայի այս նշիրոդ հատորը ջնուհանգել է, ըստ ամենայնի, ամուսնի արժանիքներով ծածկած մի գործ է, որը կօղնի մեր ընթերցող հասարակութեանը է՝ և ավելի լաղ ռամնասիրելու մեր անցյալի կլասիկների յաւագումն գրական ժառանգութիւնները:

Ս.

